Հարկ է նշել, որ ի տարբերություն Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ)՝ օպերացիոնալ տեսանկյունից Արևելյան գործընկերությունն ավելի ֆոկուսացված և առարկայական բնույթ է կրում, թեև համագործակցության ստեղծվող ձևաչափն առայժմ բավարար չափով ինստիտուցիոնալացված չէ: Ավելին, չնայած ԵՄ պաշտոնական դիտանկյունից ծրագիրն իր մեջ կրում է նշանակալի *ֆունկցիոնալիստական* չափում (միջազգային հարաբերությունների տեսական մոտեցումներից մեկը, որը ենթադրում է արտաքին և ներքին քաղաքականությունների համասեռություն) և նպատակային հեռահար ուղղվածություն ունի հասնելու ԵՄ և վերոհիշյալ երկրների կառավարչական, էներգետիկ և քաղտնտեսական սեկտորների սինխրոնիզացման բարձրացմանը, այդուհանդերձ ծրագրի իրագործումը կարող է ակնհայտ դարձնել մեկ այլ մեզամիտում, որի հենքում ընկած կլինեն ավանդական ռազմավարական մրցապայքարի շարժառիթները: Բոլոր վեց պետությունները, որոնք Գործընկերության մասնակից են, մտնում են այսպես կոչ-

<sup>1</sup>“Joint declaration of the Prague Eastern Partnership Summit”, 7 May 2009, Prague, (points 2- 9).

ված ՌԴ «մերձավոր արտասահմանի» աշխարհագրական գոտու մեջ, որի նկատմամբ դեռ 1993թ. Մոսկվան առաջ էր քաշել և դոկտորինալ մակարդակում հաստատել էր իր առանձնահատուկ պատասխանատվության և որոշիչ ազդեցության մասին թեզը: Օրինակ, 2008թ. ՌԴ Արտաքին քաղաքականության հայեցակարգում հստակորեն մատնանշվում է հիշյալ տարածաշրջանում ՌԴ «արտոնյալ շահերի» գոյության փաստը: Այս համադրույթի շրջանակներում որևէ երրորդ ուժի ներգրավման ծավալների և տեմպերի աճը ԱՊՀ սահմաններում ռուսաստանյան քաղաքական վերնախավի շրջանում դիտարկվում է իբրև ՌԴ *զսպմանը կամ հավասարակշռմանն* ուղղված քաղաքականություն:

Քաղաքական և ռազմավարական դիսկուրսի և պրակտիկայի հարթության մեջ, հաշվի առնելով վերոհիշյալ իրողությունը, Արևելյան գործընկերությունն ծրագիրը փաստացիորեն իր մեջ կրում է երկակի՝ որոշ իմաստով հակասական միջազգային կողմնորոշումներ: Մի կողմից Գործընկերության ծրագիրը կարող է խթանել փոխգործակցային ուղղության զարգացումը՝ նպաստելով համընդհանուր եվրաստլանտյան անվտանգության և կայունության նոր ճարտարապետության կայացմանը՝ Ռուսաստանի անմիջական մասնակցությամբ,<sup>2</sup> մյուս կողմից այն կարող է սկիզբ դնել մրցակցային տարրերի ուժգնացմանը, ինչն իր գործնական դրսևորումը կարող է գտնել ավանդական զսպման և բալանսավորման ռազմավարությունների մեջ, որոնք, հնարավոր է, կորդեգրեն միմյանց հանդեպ տարածաշրջանային զարգացումների մեջ ներգրավված երկու ակտորները՝ Ռուսաստանը և ԵՄ-ն: Ընդ որում, հատկանշական է, որ երկու կողմերն էլ փաստորեն ընդունում են, որ հետխորհրդային տարածաշրջանում նրանք ոչ բարեկամներ են, ոչ էլ թշնամիներ:

Ստորև կփորձենք ակադեմիական և հայեցակարգային (քաղաքական) դիսկուրսների շրջանակներում վերլուծել, թե ինչպիսին է հարաբերակցությունն այս երկու կողմնորոշումների միջև, և արդյո՞ք հնարավոր է էկստրապոլյացիա անել Եվրամիության կողմից գործադրվող և գործադրվելիք քայլերը, մասնավորապես 2008թ. ռուս-վրացական պատերազմի լույսի ներքո, հավասարակշռման վարքագծերից որևէ մեկի դասին, ինչպես դա պնդում են ռուսաստանյան քաղաքական վերնախավի որոշ հատվածներ:

Սկզբնական շրջանում Եվրոպական հարևանության քաղաքականության հենքում ընկած էր «բարեկամների շրջանակի», կայունության, անվտանգության և բարգավաճման գոտու ստեղծումը ԵՄ-ի շուրջ: Հիշյալ ընդ-

<sup>2</sup> Россия XXI века: образ желаемого завтра, *Институт современного развития, М.2010, ст.47.*

հանուր հայեցակարգի իրագործման հիմնական միջոցների շարքում էր զգալի տնտեսական և քաղաքական օժանդակության տրամադրումը հարևան տարածաշրջանների երկրներին՝ կոնսոլիդացնելու և արագացնելու համար վերջիններիս զարգացման ծրագրերը: Այդուհանդերձ, Բրյուսելում նախապես ընդգծեցին, որ ԵՀՔ-ի ծրագիրը միտված չէ վերաճելու ընդլայնման մի նոր փուլի: Ավելին, հարևանության ծրագիրը իր մեջ ներառում է բավականին խայտաբղետ պետություններ և տարածաշրջաններ, որոնք տարբերվում են ոչ միայն իրենց պատմական ժառանգության յուրահատկությամբ և զարգացման ուղիների «ձևաչափերով», այլ նաև գեոռազմավարական տեղայնացմամբ: Ավելի լայն իր մեջ ընդգրկում է ինչպես Արևելյան Եվրոպան, այնպես էլ Հյուսիսային Աֆրիկայի ու Մերձավոր Արևելքի մի շարք պետություններ: Այս համատեքստում զարմանալի չէր Ուկրաինայի ղեկավարության պնդումն այն մասին, որ ԵՀՔ-ն չի կարող ԵՄ-Ուկրաինա հարաբերությունների զարգացման իրատեսական և առարկայական հարթակ հանդիսանալ:

Կարճաժամկետ, սակայն ռազմավարական հեռանկարում ԵՀՔ-ի «անորոշության» սաստակցմանը և քաղաքականության արդյունավետության աստիճանի կորստին նպաստեց նաև ԵՄ-ի և ԱՄՆ-ի երբեմնի համակարգված, բազմակողմ ջանքերի ակնհայտ նահանջը, ինչն ակնառու դարձավ մասնավորապես 2003թ. Իրաքյան պատերազմի հետևանքով ի հայտ եկած հակասությունների ֆոնին:<sup>3</sup> Արևելյան գործընկերության մեկնարկն այս տեսանկյունից միտված էր ավելի առարկայական և կոնկրետ ուղեգծի վերածել հետխորհրդային գոտում ԵՄ-ի իրական շահերի համախումբը՝ խթանելով ԵՄ-ի արևելյան քաղաքականության շարժառիթների շուրջ խորացող քննարկումը:<sup>4</sup>

ԵՄ-ի ԱԳ ծրագրի նկատմամբ քաղաքական մոտեցումների երկու խոշոր խմբեր է հնարավոր առանձնացնել: Դրանցից առաջինը, որը գերակայող էր, մասնավորապես, սկզբնական փուլում (2008-2009թթ.), ելնում էր մայրցամաքային արդի իրադրության քաղաքական և ռազմավարական բևեռայնության թեզից (system-level polarity): Այսպես, «Արտաքին քաղաքականության գերմանական խորհրդի» ծրագրի ղեկավար Ա. Ռարի կարծիքով Արևելյան գործընկերությունը Եվրահանձնաժողովի «ոչ առավել նշանակալի օրակարգն է, որը Եվրամիությունը մշակել է արևելյան ուղղության քաղաքակա-

<sup>3</sup> A.Basora, Must Democracy Continue to Retreat in Postcommunist Europe and Eurasia, Orbis 2008, Winter, pp. 3-24.

<sup>4</sup> Եվրոպական Միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում. Միջմասնագիտական հետազոտություն, ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն, Եր. 2010, էջ 54-64:

նության ուղղորդման համար»: Գերմանիան և Ֆրանսիան, որոնք մինչ այժմ ձգտում էին համակարգել ԵՄ գործունեությունը արևելքում, կողմնորոշված էին զարգացնելու առաջին հերթին համագործակցությունը Ռուսաստանի հետ: Ա. Ռարին նշում է. «Այժմ մենք թևակոխում ենք մի նոր փուլ, երբ Ռուսաստանին կմեկուսացնեն և կսկսեն նրա վրա ճնշում գործադրել: ԵՄ-ն իսկապես անհանգստացավ ռուս-վրացական պատերազմով, և այդ հակամարտության մեղքը վերագրում է ոչ միայն Միխեիլ Սաակաշվիլուն: Մինչդեռ Մոսկվայի կողմից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչումը դիտարկվում է իբրև ռուսաստանյան բռնակցում: Ներկայումս ԵՄ-ը կանցնի հետխորհրդային տարածաշրջանում իր շահերի գոտու ամրապնդմանը»: Հատկանշական է, որ գերմանացի փորձագետը ընգծեց մի կարևոր հանգամանք. ԵՄ-ը ներառում է իր շահերի ոլորտ նաև Բելառուսին և Ադրբեջանին, ինչը փաստում է այն մասին, որ Միության մտադրությունը ոչ այնքան մերձենալն է ժողովրդավարական պետություններին, որքան Ռուսաստանին զսպելը:

Գործընկերության ծրագիրը նախատեսում է ոչ միայն միլիոնավոր եվրոների տրամադրում հիշյալ վեց պետություններում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական ինստիտուտների զարգացման համար, այլև տնտեսական ազատ գոտու և ազատ մուտքի ռեժիմների ստեղծում (ներկայումս չի քննարկվում ՌԴ-ին նման վիզային արտոնությունների շնորհման հարցը), ինչը լրջորեն սպառնում է խարխուլել հետխորհրդային տարածաշրջանում միասնական տնտեսական գոտի հիմնելու Մոսկվայի վաղեմի նախագիծը: Փորձագետների կարծիքով, փաստաթղթի ընդունումը տազնապալի ազդանշան է Ռուսաստանի համար, քանզի ՌԴ-ի շուրջ նոր պատնեշի ի հայտ գալու վտանգը կարող է առարկայական ուրվագծեր ընդունել: Թեև փաստաթղթում Ռուսաստանն ուղղակիորեն չի քննադատվում, սակայն Մոսկվայի ազդեցությունը նախկին ԽՍՀՄ տարածքում թուլացնելու միտումն ակնհայտ է: Օրինակ, արդեն ԱԳ-ի ձևաչափում դարձյալ վերահաստատվում է ԵՄ-ի հաստատակամությունը օժանդակելու Nabucco ծրագրին, ինչպես նաև առհասարակ էներգակիրների տարանցիկ ուղիների զարգացմանը, որոնք կշրջանցեն Ռուսաստանը: Ճիշտ է, միևնույն ժամանակ, ԵՄ չի հրաժարվում Բալթյան ծովի հատակով «Հյուսիսային հոսք» նախագծի իրագործումից, որով ենթադրվում է ռուսաստանյան գազի մեծ ծավալների արտահանում Գերմանիա:<sup>5</sup>

<sup>5</sup> А.Терехов, Евросоюз задвигает Россию в Азию, *Независимая газета*, 02.12.2008.

Հիշյալ տեսակետը, որը տարածված է նաև ռուսաստանյան ղեկավարության մի զգալի մասի շրջանում, որոշակիորեն համահունչ է նաև պաշտոնական Մոսկվայի մոտեցումների հետ: ՌԴ արտգործնախարարը որոշակի անհանգստություն և դժգոհություն հայտնեց այն կապակցությամբ, որ ԵՄ-ի որոշ երկրներ բևեռային հարցադրումներ են դնում ծրագրին մասնակից պետությունների առջև՝ նրանց դնելով երկրնորանքի առջև՝ դուք կամ Ռուսաստանի հետ եք, կամ՝ ԵՄ-ի: 2009թ. ապրիլին Մոսկվայում ՌԴ ԱԳՆ-ում Եվրամիության արտաքին քաղաքականության համար պատասխանատու պաշտոնյաների հետ կայացած հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին Արևելյան գործընկերություն ծրագիրը: Ռուսաստանյան կողմը առանձնակի ուշադրություն էր սևեռել ԱՊՀ-ում Ռուսաստանի օրինական շահերի հետ հաշվի նստելու, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներում Մոսկվայի ինտեգրացիոն գործընթացները զարգացնելու ՌԴ պարտականությունները հարգելու խնդրի վրա, ինչպես նաև, ծրագիրը իրագործելիս եվրոպական մայրցամաքում նոր բաժանարար գծերից խուսափելու անհրաժեշտության վրա:<sup>6</sup>

Ավելին, Գործընկերության մասնավորապես մեկնարկային փուլում Մոսկվան ավելի մեծ չափով էր հակված ակնարկելու իր պատրաստականությունը առկա հակասությունները տեղափոխել այլ հարթություն և բարձրացնել հնարավոր հակադեցության քայլերի մակարդակը՝ միակցելով Արևելյան գործընկերության շուրջ ծավալվող բանավեճը ավելի լայն ռազմավարական հիմնահարցերի համախմբին: Ըստ Ս. Լավրովի. «Ակհնայտ է, որ գլոբալ և տարածաշրջանային քաղաքականության մեջ, առաջին հերթին Եվրասիական տարածքում, պահպանվում է մնացորդային երկբևեռությունը: Այն օբյեկտիվորեն պայմանավորված է ռազմավարական անվտանգության ոլորտով, որը նույնպես շարունակում է մնալ ռուս-ամերիկյան հարաբերությունների վճռական ածանցյալը»:<sup>7</sup> Անդրադառնալով եվրասիական տարածաշրջանում անվտանգության ապահովման ձևաչափերին և մեխանիզմներին՝ Ս. Լավրովը մատնանշեց անվտանգության անքակտելիության (միասնականության) սկզբունքի գոյությունը, որն արտացոլված է գործող պայմանավորվածությունների և փաստաթղթերի մեջ: Բայց և այնպես, ըստ նրա՝ այդ մեխա-

<sup>6</sup> О встрече заместителя Министра иностранных дел России А.В.Грушко с директором Гендиректората КЕС по внешним связям Г.Вигандом и главой представительства Комиссии ЕС в Москве М.Франко, 03.04.2009, [www.mid.ru](http://www.mid.ru).

<sup>7</sup> Статья Министра иностранных дел России С.В.Лаврова "Внешняя политика России и новое качество геополитической ситуации" для "Дипломатического ежегодника 2008", [www.mid.ru](http://www.mid.ru). (10.12.2009).

նիզմներից մի քանիսը, մասնավորապես նրանք, որ վերաբերում են «կոշտ անվտանգությանը» (hard security) գոյություն ունեն քաղաքական պարտավորությունների ձևով, և, ըստ երևույթի, չեն աշխատում: Ռուսաստանյան քաղաքական վերնախավում տիրապետող կարծիքն այն է, որ դրանք չեն աշխատում արդեն շատ վաղուց՝ ԽՍՀՄ-ի փլուզումից ի վեր, երբ ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի արևելք անշրջելի բնույթ ստացավ: Այս համատեքստում, «կոշտ անվտանգության» պահպանման գործառույթներ ստանձնելու ԵԱՀԿ-ի դժկամությունը զգալիորեն նսեմացրեց կազմակերպության կարգավիճակային դերակատարությունը ՌԴ էլիտայի շրջանում:

Այդուհանդերձ, չնայած նախնական բավականաչափ կոշտ արձագանքներին, Արևելյան գործընկերության կապակցությամբ ԵՄ-ՌԴ միջև ծագած հակասությունները ներկա փուլում և միջնաժամկետ հեռանկարում քիչ հավանական է, որ վերածվեն կարծր բալանսավորման կամ զսպման քաղաքականության, որը բնորոշ է ավանդական աշխարհաքաղաքական մրցապայքարին: Այդ մասին են փաստում ինչպես վերջին ամիսների ընթացքում ՌԴ-ի մոտեցումներում գրանցված փոփոխությունները, այնպես էլ ստորև ներկայացվող ակադեմիական և տեսական հետազոտությունների էմպիրիկ բնույթի հիմնադրույթները: Ավելին, թեև Եվրամիության հիշյալ ծրագրի շուրջ որոշակի հակասություններ ի հայտ եկան ՌԴ-ԵՄ երկկողմ հարաբերություններում, որոնք գլխավորապես կրում էին մրցակցային, բայց ոչ արմատական անհանդուրժողականության բնույթ, հարկ է ի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ թե՛ Մոսկվան, և թե՛ Բրյուսելը անհատական համագործակցության բավականին ծավալուն օրակարգ են ձևավորել: 2004թ. նրանց միջև ստորագրված չորս ընդհանուր տարածությունների ձևավորման մասին փաստաթղթում ամրագրված է ընդհանուր մի հիմնադրույթ - համաձայնություն, ըստ որի ԵՄ-ի կողմից զարգացվող ինտեգրացիոն գործընթացները չպետք է հակասեն հետխորհրդային տարածքում ընթացող ինտեգրացիոն գործընթացներին: Ընդ որում, առանձնացված են փոխգործակցության չորս ընդհանուր չափումներ՝

- արտաքին անվտանգության ընդհանուր տարածք,
- ազատության, անվտանգության և արդարադատության ընդհանուր տարածք,
- տնտեսական ընդհանուր տարածք,



– գիտա - տեխնիկական, կրթական և մշակութային ընդհանուր տարածք:<sup>8</sup>

Նախ, իրական արտաքին հավասարակշռման և զսպման ռազմավարության սանձազերծումը Ռուսաստանի դեմ հետխորհրդային տարածաշրջանում կարող է աննախադեպ վտանգավոր և համալիր նախաձեռնություն դառնալ, որի արդյունքների և հետևանքների հաշվարկը խիստ բարդ կլինի: Օրինակ, Մթենֆորդի համալսարանի մասնագետների լայնածավալ հետազոտական աշխատության հեղինակները գրեթե անհնարին են համարում հետխորհրդային տարածաշրջանում ներքին հավասարակշռման քաղաքականության շանսերն ընդդեմ Ռուսաստանի՝ ի նկատի ունենալով այն հսկայական ռեսուրսային անհամաչափությունը, որ գոյություն ունի մի կողմից Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ մնացյալ բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների ագրեգացված տնտեսական և ռազմաքաղաքական միջոցների միջև: Ըստ ամերիկյան մասնագետների՝ իրական հավասարակշռումը կարող է հենվել միմիայն արտաքին ուժային կենտրոնի վրա և միաժամանակ կրել զուտ արտաքին բալանսավորման բովանդակություն: Ավելին, ըստ Վ.Վոլֆորթի բոլոր այս հանրապետությունների կախվածության աստիճանը Ռուսաստանից կրիտիկական է, ինչն անիրական է դարձնում վերջիններիս միավորումը Ռուսաստանի դեմ ուղղված հավասարակշռում կազմակերպելու համար:<sup>9</sup>

Երկրորդը, տարածաշրջանային թատերաբեմում իր հզորությամբ քիչ թե շատ Ռուսաստանին համարժեք պետության բացակայության պարագայում իրական հավասարակշռման քաղաքականության նախապայմաններից մեկն է տարածաշրջանային պետությունների բարձր համասեռության ապահովումը, ինչը գործնականում անհնարին է՝ հաշվի առնելով հիշյալ երկրների՝ ՌԴ-ից կառուցվածքային կախվածության աստիճանը: Ճիշտ է, դրա հետ մեկտեղ, առայժմ զուտ տեսականորեն, չի բացառվում տարածաշրջանային եվրոպակենտրոն ունիֆիկացման բարձրացումը Գործընկերության շրջանակներում իրականացվելիք միջոցառումների շնորհիվ, ինչն իր հերթին կարող է հնարավոր բալանսավորման հարթություններից մեկը դառնալ:

Երրորդը, նեոռեալիստական ավանդույթի շրջանակներում բալանսավորման կարևորագույն հաշվարկային գործոններից մեկն է կողմերի մտադ-

<sup>8</sup> “Четыре общих пространства” (2005), [http://www.delrus.ec.europa.eu/ru/p\\_600.htm](http://www.delrus.ec.europa.eu/ru/p_600.htm) (10.12.2009).

<sup>9</sup> W.C. Wohlforth, Revisiting Balance of Power Theory in Central Eurasia in *Balance of Power: Theory and Practice in the 21<sup>st</sup> Century*, ed. by T.V.Paul, James J. Wirtz, and Michael Fortmann, Stanford University, 2004, p.226.

րությունները: Այս տեսանկյունից, չնայած գոյություն ունեցող որոշակի անհանգստություններին, ԵՄ-ն զերծ է մնում թե կոշտ և թե փափուկ համապարփակ բալանսավորման մտադրություններ արտահայտելուց:

Վերոհիշյալ հայեցակարգային հիմնադրություններն իրենց արտացոլումն են գտնում նաև գործնական քաղաքականության բնագավառում՝ առաջին հերթին կողմերի գործիքային մոտեցումներում, որոնք ակներև դարձան մասնավորապես 2009թ. վերջին եռամսյակում: Նախ, պաշտոնական Մոսկվան ավելի մեծ ուշադրություն սկսեց սևեռել Գործընկերության առանձին ֆունկցիոնալ ասպեկտների վրա՝ դադարելով այն դիտարկել Grand Strategy խաղի կանոններին համապատասխան: Մասնավորապես, առանձնացվեց ծրագրի էներգետիկ բաղադրիչը, որն ըստ փորձագիտական հանրության՝ առավել վտանգավոր մարտահրավեր է արդիական ռուսաստանյան արտաքին քաղաքականության համար: Երկրորդը, 2009թ. նոյեմբերի վերջին արտգործնախարար Ս.Լավրովը չբացառեց, որ ՌԴ կարող է միանալ ԱԳ-ին՝ համահավասարության սկզբունքի վրա, իսկ նոյեմբերի 27-ին անմիջապես Մոսկվայում ստորագրվեց Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի միջև «Մաքսային միության» ստեղծման համաձայնագիրը: Երկու օր անց, նոյեմբերի 29-ին հրապարակվեց Ռուսաստանի կողմից մշակված «Եվրոպական անվտանգության պայմանագրի» նախագիծը, որում հաստատվում էր «անվտանգության անբաժանելի լինելու» սկզբունքը և այն, որ «Եվրաստլանտյան գոտու ոչ մի պետություն կամ միջազգային կազմակերպություն չպետք է ուժեղացնի իր անվտանգությունը այլ պետությունների կամ կազմակերպությունների հաշվին»:<sup>10</sup> Վերջապես երրորդը, ի նկատի ունենալով ԵՄ-ՌԴ Համագործակցության համաձայնագրի ստորագրման շուրջ կողմերի փոխգործակցության տարեվերջյան ակտիվացումը՝ ակնհայտ է դառնում, որ երկու դերակատարներն էլ սակարկելու հակվածություն ունեն:<sup>11</sup>

Այսպիսով, ԵՄ Արևելյան գործընկերություն ծրագրի հանդեպ պաշտոնական Մոսկվայի քաղաքական մոտեցումը իր վրա կրում էր երկակի միտումների ազդեցություն, որոնք սկզբնական փուլում ավելի շատ հակված էին դեպի կոշտ անվտանգության շուրջ դիսկուրսի ծավալում: Օրինակ, 2009թ. մարտին ռուսաստանյան ներկայացուցիչը բրյուսելյան հանդիպման ընթացքում հնչեցրեց մի քանի թեզեր, որոնք թեև ոչ բացահայտ, բայց առար-

<sup>10</sup> [www.kremlin.ru](http://www.kremlin.ru) (10.01.2010).

<sup>11</sup> The Post-Soviet Space in EU-Russian Relations”, 03 Дек 2009 <http://eu-russiacentre.ru/our-publications/column/the-post-soviet-space-in-eu-russian-relations.html> (10.01.2010).

կայապետ կոչված էին ընդգծելու ծավալվող գործընթացում ՌԴ մասնակցության (ուղղակի կամ անուղղակի) պարտադիր լինելը: Նախ, մասնանշվեց, որ թեև ԱԳ-ն հանդիսանում է Եվրամիության ներքին նախաձեռնություն, նրա ընթացքին, սակայն, Մոսկվայում մեծ ուշադրությամբ հետևում են, քանզի այն ուղղված է ՌԴ մերձավոր հարևաններին: Ընդհանուր այս հղումը միտված էր հաստատելու մի կողմից ՌԴ պատասխանատվության բացակայությունը ծրագրի նկատմամբ, մյուս կողմից իր մեջ կրում էր նաև քողարկված ակնարկ՝ անհրաժեշտության դեպքում միջամտելու Մոսկվայի համար անբարենպաստ զարգացումներին:<sup>12</sup>

Երկրորդը, ռուսաստանյան դիվանագետները նշեցին, որ Մոսկվայում շարունակում են մի շարք հարցեր մնալ՝ կապված ԱԳ հավելյալ արժեքի հետ՝ Եվրամիության հարևանության քաղաքականության հետ համադրման ֆոնին, որի սուբյեկտներն են նույն Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանը, Հայաստանը, Բելառուսը և Ադրբեջանը:

Երրորդը, առանձնացվեցին Գործընկերության «ինտեգրացիոն» առաջարկները, որոնք վերաբերում են ազատ առևտրի գոտիների, ասոցիացիաների, ԵՄ տնտեսությանը աստիճանական սերտաճման շուրջ համաձայնություններին («մոբիլության և անվտանգության պակտեր», «էներգետիկ փոխկապվածություն»): Ըստ ռուսաստանյան կողմի՝ ՌԴ հարևանների և ԵՄ-ի միջև համագործակցության նման ճարտարապետությունը չպետք է հակասության մեջ մտնի հիշյալ պետությունների ինտեգրացիոն այլ պարտականությունների հետ, մասնավորապես ԱՊՀ-ի և ՀԱՊԿ-ի շրջանակներում, ինչն արդեն արտացոլված է ՌԴ-ԵՄ արտաքին անվտանգության ընդհանուր գոտու ճանապարհային քարտեզի մեջ: Դրա հետ մեկտեղ, Մոսկվայում զգացնել տվեցին, որ ՌԴ մոտեցումը Գործընկերությանը կրում է ավելի շատ գործիքային բնույթ, որը պետք է զուրկ լինի գաղափարական չափումից. Ռուսաստանը ինքը կարող է մասնակից լինել մի շարք նախաձեռնությունների, որոնք գործնական հետաքրքրություն են ներկայացնում իր համար:

Չորրորդը, պաշտոնական մակարդակով հնչեցված թերևս ամենակարևոր հիմնադրույթն այն է, որ առանց Ռուսաստանի լիարժեք մասնակցության լուրջ նախագծերի մեծամասնությունը «լավագույն դեպքում կունենա սահմանափակ էֆեկտ»: Դիվանագիտական լեզվից թարգմանաբար՝ այս դրույթն իր մեջ պարունակում է շատ կարևոր ռազմավարական մի ակնարկ, որի են-

<sup>12</sup> О российском отношении к программе «Восточное партнерство», Брифинг официального представителя МИД России А.А.Нестеренко, 26 марта 2009 года, [www.mid.ru](http://www.mid.ru). (10.01.2010).

թատեքստում թաքնված է ռուսաստանյան արդեն վաղեմի կանխադրույթը ցանկացած պահի միջամտելու և կանխելու հետխորհրդային տարածաշրջանում անշրջելի գործընթացների ծավալումը, որոնք կհակասեն ՌԴ ազգային շահերին:

Ինչ վերաբերում է ԵՄ-ի Արևելյան գործընկերություն ծրագրի աշխարհաքաղաքական ուղղվածությանը և առհասարակ եվրոպական հանրության արևելյան քաղաքականությանը, ապա մի կողմ թողնելով ԵՄ ներքին տրանսֆորմացիայի և արտաքին մասնավոր ազդակներով պայմանավորված շարժառիթները՝ հարկ է նշել, որ վերջերս մեկնարկած նախաձեռնությունները ինկրեմենտալիստական բովանդակություն կրելուց զատ պարունակում են նաև լատենտ հավասարակշռման որոշակի տարրեր: Համենայնդեպս, ՌԴ հարակից եվրասիական գոտիներում ինտեգրացիոն նախագծերի մրցակցությունը համադրելիության բացակայության պայմաններում կարող է խթանել հեռանկարում հավասարակշռման և զսպման ռազմավարական կողմնորոշումը:

Եթե դիմենք ակադեմիական գրականությանը, ապա ըստ Տ. Փոլի՝ ժամանակակից բալանսավորման վարքագծերը ներառում են զանազան ռազմավարություններ, որոնք հնարավոր է առանձնացնել երեք դասերի մեջ. կոշտ (hard) հավասարակշռում, փափուկ (soft) հավասարակշռում և անհամաչափ (asymmetric) հավասարակշռում:<sup>13</sup> Եթե միջնաժամկետ հեռանկարում չհաջողվի ձևավորել ՌԴ-ԵՄ հարաբերությունների դրական օրակարգ և արդյունավետ փոխգործակցության սխեմա, ապա վերոհիշյալ երեք ընդհանուր համադրություններից առավել հավանական մրցակցային փոխգործակցության վարքագծային մոդելը կլինի փափուկ հավասարակշռման քաղաքականությունը, որն իր մեջ կներառի ad hoc համագործակցության հնարավորություն միջազգային կամ տարածաշրջանային ձևաչափերում՝ ուղղված ընդդեմ մրցակից պետության (պետությունների միավորումների): Անվտանգության մրցապայքարի կարծրացման դեպքում այդ քաղաքականությունը հնարավոր կլինի ձևափոխել կոշտ հավասարակշռման ռազմավարության՝ ընդդեմ սպառնալիք ներկայացնող կողմի:<sup>14</sup>

<sup>13</sup> T.V.Paul, Soft Balancing in the age of US Primacy, *International Security*, N1, 2005 (Summer), 46-71.

<sup>14</sup> D.H.Nexon, The Balance of Power in the Balance, 2009 April, *World Politics*, 61, N2, pp.341-342.

## Եվրոպական Միության «Արևելյան գործընկերություն» ծրագիրը Վրաստանյան համատեքստում

*Մկրտչյան Ս.*

*«Մեր հիմնական նպատակն է գնալ դեպի ժամանակակից եվրոպական  
վրացական պետության ստեղծումը»:*

Մ. Սաակաշվիլի,

ամենամյա ազգային ուղերձ, փետրվար, 2010 թ.

Վարդերի հեղափոխության 6-րդ տարեդարձին Վրաստանի Հանրապետության նախագահ Միխեիլ Սաակաշվիլին հայտարարեց. «Վարդերի հեղափոխությունը նշանավորեց մեր պատմության ամենակարևոր շրջաններից մեկի սկիզբը, այն վրացիների եվրոպական արժեքների հաղթանակն էր»<sup>1</sup>:

Շատ ավելի վաղ, 2009 թ. մայիսի 7-ին, ԵՄ Արևելյան գործընկերության Պրահյան գազաթաժողովի նախօրեին հեռուստատեսային հանդիպման ժամանակ նա ասել էր լրագրողներին. «Մենք դառնում ենք Եվրոպական միության տարածքի ինստիտուցիոնալ մասը: Դա նշանակում է, որ մենք ԵՄ-ի հետ ազատ առևտուր ունենալու հնարավորություն ենք ստանում ամենամոտ ապագայում, ինչը նշանակում է մեր արտահանման ծավալների երեք կամ չորս անգամ ավելացում, այսինքն՝ արդեն իսկ ստացած ֆինանսական միջոցներից գատ լրացուցիչ 100 միլիոն կգա Վրաստան: Դա նշանակում է, որ (հույս ունեմ), որ այս տարվա մեջ մենք կունենանք ԵՄ-ի հետ պարզեցված վիզային կանոններ, և փաստացի վրացիները խոչընդոտներ չեն ունենա ԵՄ-ի ճանապարհին»: Պետք է նկատել նաև, որ Վրաստանում, փաստորեն, ԵՄ-ի հետ ինտեգրումը անմիջականորեն կապվում է ԱՊՀ տարածքից դուրս գալու հետ: Այսպես, նույն ելույթում նախագահ Սաակաշվիլին շարունակում է. «Մենք դուրս եկանք ԱՊՀ-ից և ինչ-որ առումով հայտնվել ենք օդում, բայց մտնում ենք մի տարածք, որն ավելի ընդարձակ շուկա ունի՝ շատ ավելի շատ հնարավորություններով. դա ընդհանուր եվրոպական տարածքն է»<sup>2</sup>:

ԵՄ-ի Արևելյան գործընկերություն նախաձեռնության պաշտոնական սկիզբը հայտարարվեց 2009 թ. մայիսի 9-ին Պրահյան գազաթաժողովի ժամա-

<sup>1</sup> Revolution Continues, [www.civil.ge](http://www.civil.ge) (23.12.09)

<sup>2</sup> Վրաստանյան վերլուծաբաններից մեկն էլ իր հարցազրույցներից մեկում նշում է, որ ԱՊՀ-ից դուրս գալը Վրաստանի կողմից Եվրոպական և Եվրաստլանտյան կառույցների ինտեգրվելու կամքի ցուցադրում է՝ ԱՊՀ դիտելով այդ ճանապարհին խոչընդոտ և «սովետական անցյալի խորհրդանիշ» (Վասիլ Չկաիձե, Georgia Today շաբաթաթերթ, 21.08.09):

նակ: Մասնակից վեց երկրների (Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա) շարքում Վրաստանը, թերևս, առանձնանում է նրանով, որ նման նախաձեռնությունը գործի դնելու և խթանելու համար առիթ հանդիսացավ հենց 2008 թվականի վրաց-ռուսական օգոստոսյան պատերազմը: Դեկտեմբերի 3-ին Բրյուսելում մամլո ասուլիսի ժամանակ Եվրահանձնաժողովի նախագահ Խոսե Մանուել Բարոզոն ուղղակիորեն նշել է. «Օգոստոսյան պատերազմը ԵՄ-ը ստիպեց քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ», իսկ նախաձեռնությունը որակել որպես ԵՄ-ի «մեղմ ուժ»<sup>3</sup>: Իսկ Սաակաշվիլին մայիսին Պրահայի իր ելույթում նշեց. «Արևելյան գործընկերությունը Եվրոպայի արժանի պատասխանն է օգոստոսյան պատերազմին, թեև այն մի փոքր ուշացած է»:

Արևելյան գործընկերությունը նախատեսում է մասնակից երկրներում ԵՄ քաղաքական ներգրավվածության ավելացում մի շարք ոլորտներում, ինչպես նաև ասոցացման համաձայնագրի (Association agreement) հեռանկար, մասնակից երկրների ինտեգրացիա ԵՄ տնտեսությանը և նրանց քաղաքացիների համար հեշտացված ճանապարհորդության հնարավորություն ԵՄ տարածքում: Ընդհանրապես, ըստ Բարոզոյի խոսքերի՝ «սա մի ճանապարհ է դեպի ասոցացման համաձայնագիր այն երկրների հետ, որոնք ԵՄ-ի հետ ավելի սերտ հարաբերությունների են ձգտում»:

Առհասարակ, ծրագիրը նախատեսում է տարբերակված մոտեցում և ընթացք՝ կախված կոնկրետ երկրի «ձգտումից», «նվիրվածությունից» և «առաջադիմությունից»: Ինչպես նշեց Բենիտա Ֆերերո Ուալդները. «Նախաձեռնությունը, քաղաքական ներդրում հանդիսանալով գործընկեր երկրներում, լինելու է ձկուն և հարմարեցված յուրաքանչյուր գործընկերոջ կարիքներին և կարողություններին, ...նրանց կտրվի առավելագույն հնարավորը ըստ քաղաքական իրողությունների և բարեփոխման գործընթացների»<sup>4</sup>: Ասոցացման համաձայ-

<sup>3</sup> Մեղմ ուժը (soft power) նպատակին հասնելու համար մյուսներին ներգրավելու և այն գրավիչ դարձնելու միջոցներն օգտագործելու կարողությունն է, ի տարբերություն «կոպիտ ուժ»-ի, որը հարկադրանքի և պատժի կիրառումն է: Մեղմ ուժը կարող է կիրառվել պետությունների և միջազգային քաղաքականության այլ դերակատարների կողմից: (Ավելի մանրամասն տե՛ս Joseph S. Nye, Jr., Bound to Lead: The Changing Nature of American Power (New York: Basic Books, 1990) և Joseph S. Nye Jr., Soft Power: The Means to Success in World Politics. (New York: Public Affairs, 2004)):

<sup>4</sup> Երկկողմանի ուղղությամբ, նախաձեռնությունը նախատեսում է Ինստիտուտների զարգացման համապարփակ ծրագրեր, որոնց միջոցով ԵՄ-ը կբացահայտի «թույլ կետերը», այնուհետև աշխատանքներ կկատարի դրանք վերացնելու ուղղությամբ, ուսուցումներ, տեխնիկական աջակցություն և սարքավորումներ տրամադրելու միջոցով:

նագրերի դեպքում, օրինակ, տարբեր երկրներ տարբեր փուլերում են. «արդեն ընթացքի մեջ են Ուկրաինայի հետ բանակցությունները, Մոլդովայի հանրապետության հետ այդ մասին կսկսեն խոսել 2010 թվականի սկզբին, իսկ Կովկասի երկրների համար բանակցային հանձնարարականների (մանդատների) վերաբերյալ աշխատանքները դեռ չեն ավարտվել»<sup>5</sup>:

Արևելյան գործընկերության նախաձեռնության՝ կառուցվածքով և նպատակներով պայմանավորված տարբերակված մոտեցումն էլ հնարավորություն է տալիս Հարավային Կովկասի տարածաշրջանը չդիտել որպես միասնական կառույց ԵՄ հարաբերությունների համատեքստում, իսկ Վրաստանի դեպքում՝ ավելի արագացված գործընթացներ ապահովել:

Եվրահանձնաժողովի առաջարկության տեքստում (2008 թ. սեպտեմբերի 1), որն ուղղված է Վրաստանի հետ հեշտացված վիզային և ռեադմիսիոն համաձայնագրերի վերաբերյալ բանակցություններ սկսելուն, մասնավորապես նշվում է. «Արտակարգ եվրոպական խորհուրդը (Extraordinary European Councils) որոշեց խորացնել Վրաստանի հետ հարաբերությունները՝ վստահության հաստատմանն ուղղված գործողությունների շարքում վիզայի հեշտացման միջոցառումները առաջնայնություն հայտարարելով»<sup>6</sup>: Մի տարի անց՝ 2009 թ. սեպտեմբերի 25-ին, Բրյուսելում հանձնաժողովը խորհրդին առաջարկեց և հանձնարարեց Վրաստանի հետ բանակցություններ սկսել կարճատև այցելությունների համար հեշտացված վիզաների և ռեադմիսիոն համաձայնագրեր կնքելու վերաբերյալ: Այդ առաջարկից երկու ամիս անց՝ 2009 թվականի նոյեմբերի 25-ին, Վրաստանն ու ԵՄ-ը արդեն ստորագրեցին այդ համաձայնագրերը, այն դեպքում, երբ օրինակ, Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը դեկտեմբերի 8-ին Բրյուսելում կայացած ԵՄ և Արևելյան Գործընկերության երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպմանը դեռևս միայն նշում էր այդ գործընթացների կորևորության և դրանց իրականացումը խթանելու անհրաժեշտության մասին:

<sup>5</sup> European Union, press release, “Eastern Partnership implementation well on track - 1st Eastern Partnership Foreign Ministers meeting”, <http://europa.eu/rapid/pressReleasesAction.do?reference=IP/09/1891&format=HTML&aged=0&language=EN&guiLanguage=en> (15.12.2009):

<sup>6</sup> Council of the European Union, Extraordinary European Councils, Presidency Conclusions, [http://www.eu2008.fr/webdav/site/PFUE/shared/import/09/0901\\_conseil\\_europeen\\_extraordinaire/Extraordinary%20European%20Council%20-%20Conclusions%20of%20the%20Presidency\\_EN.pdf](http://www.eu2008.fr/webdav/site/PFUE/shared/import/09/0901_conseil_europeen_extraordinaire/Extraordinary%20European%20Council%20-%20Conclusions%20of%20the%20Presidency_EN.pdf) (20.12.2009)

Ըստ հեշտացված վիզայի պայմանագրի՝ Վրաստանի քաղաքացիների որոշ կատեգորիաներ (քիզնեսի ներկայացուցիչներ, լրագրողներ, պետական ծառայողներ և ուսանողներ) Շենգեն կարճաժամկետ վիզա կստանան հեշտացված կարգով՝ ընդ որում, նախկին 60 եվրոյի փոխարեն վճարելով 30 եվրո: Միաժամանակ կնքվեց նաև ռեադմիսիոն համաձայնագիր, որը փաստացիորեն հանդիսանում է հեշտացված ճանապարհորդությանը հավասարակշռող գործընթաց, որով մեխանիզմներ են ստեղծվում ԵՄ-ում ապօրինի կերպով գտնվողներին հայրենի երկիր վերադարձնելու համար<sup>7</sup>:

Գրեթե զուգահեռաբար էին ընթանում աշխատանքները Արևելյան գործընկերության նախաձեռնությամբ նախատեսված ԵՄ և գործընկեր պետությունների հարաբերությունների զարգացման հաջորդ կետի՝ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ: Արդեն 2009 թ. սեպտեմբերի 2-ին Վրաստանի վարչապետ Նիկա Գիլաուրիին նշում է, որ Վրաստանը պատրաստել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ԵՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսելու համար<sup>8</sup>: Եվրահանձնաժողովի և Վրաստանի կառավարության միջև գործնական հանդիպումներ են տեղի ունեցել Բրյուսելում նոյեմբերի 12-ին, 24-ին և 25-ին: Հանդիպումները կողմերին հնարավորություն են տվել հստակեցնելու և մշակելու Վրաստան և ԵՄ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի հետ կապված թեմաներ, մասնավորապես սննդի անվտանգության, մրցակցային քաղաքականության և առևտրի համար տեխնիկական խոչընդոտների մասին: Քննարկումները իրականացվում էին դեռևս սեպտեմբերին Վրաստանի կառավարության կողմից հանձնված ծրագրային փաստաթղթերի և նախնական ռազմավարությունների շուրջ<sup>9</sup>:

Ազատ առևտրի վերաբերյալ աշխատանքներ են ընթանում նաև Վրաստանի ներքաղաքական և հասարակական կյանքում, կազմակերպվում են կլոր սեղաններ, իրականացվում և հրապարակվում են հետազոտություններ: Օրինակ, նոյեմբերի 20-ին Եվրոպական համագործակցության հիմնադրամը իրականացրել է «կլոր սեղան» ձևաչափով հանրային քննարկումներ: Քննարկվել են ԵՄ-ի հետ խորը և ամբողջական ազատ առևտրի համաձայնագ-

<sup>7</sup>European Union, press release, “Commision recommend the negotiation of Visa Facilitation and Readmission Agreements with Georgia”

<http://europa.eu/rapid/pressReleasesAction.do?reference=IP/08/1406&format=HTML&aged=0&language=EN&guiLanguage=en> (15.12.2009):

<sup>8</sup>PM: Georgia Ready for Starting Talks on Free Trade with EU, [www.civil.ge](http://www.civil.ge) (15.12.2009):

<sup>9</sup> Chronology of Basic Events in EU-Georgia Relations, [www.mfa.gov.ge](http://www.mfa.gov.ge). (15.12.2009):



րի վերաբերյալ բանակցությունները սկսելու համար պատշաճ պայմաններ և քաղաքականություն ապահովելու հետ կապված հիմնահարցերը: Միաժամանակ ուրվագծվել են տեխնիկական, ոչ տարիֆային (մաքսային տուրքից բացի՝ ներմուծումը սահմանափակող) խոչընդոտները՝ գնահատելով Վրաստանի պատրաստվածությունը խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (deep and comprehensive free trade agreement) ստորագրման համար: «Խորը և համապարփակ» որակվող ազատ առևտրի համաձայնագիրը պարզապես ազատ առևտրի համաձայնագիր չէ, որով լոկ տուրքերի նվազեցմամբ խթանվում է առևտուրը, սա նաև ենթադրում է ստեղծել ինտեգրված շուկա, ինչը նշանակում է, որ երկիրը միանում է ԵՄ ներքին շուկային: Մյուս կողմից էլ, դա Վրաստանի համար նշանակում է, որ պետք է համապատասխանեցվեն ստանդարտները, հավաստագրերի, հավատարմագրերի, չափի միավորների համակարգը և լուծվեն համապատասխանությունների չափման հետ կապված հիմնահարցերը:

Դեռևս ավելի վաղ՝ 2007 թվականին, ՄԱԶԾ (UNDP) և Վրաստանի կառավարությունը հրապարակել են «ԵՄ և Վրաստանի միջև ազատ առևտրի հավանական համաձայնագրի ազդեցության գնահատում» վերնագրով զեկույցը, որտեղ ի թիվ այլ կոնկրետ առաջարկությունների նշվում է, որ Վրաստանը պետք է շարունակի արդեն իսկ սկսված բարեփոխումները<sup>10</sup>:

Ընդհանրապես «բարեփոխում» հասկացությունը առանցքային է Վրաստան-ԵՄ հարաբերությունների գործընթացներում (Վրաստանի վերջին շրջանի պատմության մեջ բարեփոխումների շուրջ ծավալված դիսկուրսը թեև կենտրոնական է վրաստանյան հասարակական կյանքում, սակայն զուգահեռ է ընթանում Ռուսաստանի շուրջ հյուսվող դիսկուրսին): Շատ կարևոր է հետևել, թե ինչ ճանապարհ է անցել այս «բարեփոխում» գործոնը Վրաստան-ԵՄ հարաբերությունների համատեքստում ընդհանրապես և մասնավորապես Արևելյան գործընկերություն նախաձեռնության հետ առնչության մեջ:

**Վրաստանյան բարեփոխումները Արևելյան գործընկերություն նախաձեռնության և ԵՄ հարաբերությունների համատեքստում**

Բարեփոխումները, ավելի ճիշտ դրանք իրականացնելու անհրաժեշտության նախապայմանը, Արևելյան գործընկերության նախաձեռնության

<sup>10</sup> Assessment of the Impact Potential Free Trade Agreement Between EU and Georgia, UNDP 2007, p 114.

շրջանակներում առանցքային դերակատարում ունի բոլոր վեց երկրների համար:

Բենիտա Ֆերերո Ուալդները դեկտեմբերի 15-ին Եվրախորհրդարանում իր ելույթի ժամանակ նշել է. «ԵՄ հայտնում է իր անդրդվելի պատրաստակամությունը օգնել Վրաստանին հաղթահարելու իր բազմաթիվ մարտահրավերները, բայց հաջողության հասնելու համար Վրաստանը իր պարտավորությունները ավելի շատ պետք է կատարի»<sup>11</sup>: Նշված պարտավորությունները մեծ մասամբ վերաբերում են կրկին բարեփոխումներին, մասնավորապես, ԵՄ-ի հետ խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու հաստատմանն ուղղված և ժողովրդավարական բարեփոխումներին: Այսպես, խոսելով Եվրախորհրդարանում՝ Բենիտա Ֆերերո Ուալդները նախանշել է առաջնահերթ համարվող երեք հիմնական ոլորտները, որոնցում Վրաստանը ավելի շատ ջանքեր պետք է գործադրի: Առաջինը վերաբերում է ժողովրդավարական բարեփոխումներին, որոնք պետք է որ արտահայտվեն Թբիլիսիի քաղաքապետի գալիք ընտրությունների ընթացքում<sup>12</sup>, և դեռևս 2008 սեպտեմբերին նախագահ Սաակաշվիլու հայտարարած «ժողովրդավարական բարեփոխումների նոր ալիքի» շարունակության մեջ: Երկրորդ, Վրաստանը պետք է «ռազմավարական համբերություն» ցուցաբերի իրենից անջատված շրջանների նկատմամբ, ինչը ընդհանուր առմամբ նշանակում է, որ պետք է շարժվի ոչ թե այդ շրջանների մեկուսացման, այլ նրանց հետ աստիճանաբար կապեր հաստատելու ճանապարհով: Միաժամանակ, Եվրոպան շարունակում է անհանգստանալ «գրավված տարածքների մասին օրենքի» կապակցությամբ, որն իր ընթացիկ տարբերակով կխորացնի հակասությունները և կխոչընդոտի տնտեսական հարաբերություններին: Առաջարկվում է այն վերանայել և համապատասխանեցնել Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին: Վրաստանից «պահանջվող» երրորդ քայլն արդեն ուղղակիորեն վերաբերում է Վրաստան-ԵՄ հարաբերությունների համար նոր իրավական շրջանակների մշակման հարցին, ինչը, ըստ Ուալդների, «բավականին լավ» ընթացք ունի: Արդեն մշակված է ասոցացման համաձայնագրի բանակցությունների հանձնարարականների նախնական տարբերակը: Անհրաժեշտ է, սակայն, մշակել նոր ԵՄ-Վրաս-

<sup>11</sup>Commissioner Outlines EU Georgia Priorities, [www.civil.ge](http://www.civil.ge) (15.12.2009):

<sup>12</sup> 2010 թ. մայիսի 30-ին իրականացվելու են Թբիլիսիի քաղաքապետի ուղղակի ընտրություններ, ինչը թեկնածուների համար նաև ընկալվում է գալիք նախագահական ընտրությունների համար փորձաշրջան:



հրապարակային ելույթներում այն միշտ գերիշխել է: Նախագահ Միխեիլ Մասկաշվիլին 2008 թ. սեպտեմբերին հայտարարում է մի նոր «թարմ» ալիքի մասին: Բարեփոխումների նոր ալիքով նախատեսվում է մի քանի ոլորտներում լուրջ փոփոխություններ անցկացնել: Մասնավորապես, բարեփոխումներ իրականացվելու են հետևյալ ոլորտներում՝

- սահմանադրական կարգերում՝ խորհրդարանին տալով ավելի մեծ լիազորություններ կուսակցությունների ֆինանսավորման համակարգում,
- մասնավոր սեփականության պաշտպանության ոլորտում. մասնավորապես նա պատրաստ էր առաջարկել սահմանադրական փոփոխություն, որով սեփականության օտարումը պետության կողմից հնարավոր է միայն դատարանի որոշմամբ (այս խնդրի մասին ավելի վաղ խոսել էր մարդու իրավունքների պաշտպանը, իսկ իշխող կուսակցությունը կտրականապես դեմ էր արտահայտվել),
- լրատվամիջոցներում ավելի լայն հասարակական և քաղաքական ուժերի ներկայացվածություն (ընդ որում խոսքը պետական հեռուստատեսությունների մասին է, քանի որ «մասնավոր հեռուստաընկերությունների գործերին միջամտելու անհրաժեշտություն չկա»<sup>14</sup>),
- դատական համակարգում, որտեղ «կոռուպցիայից ձերբազատվելուց հետո կարիք կա ավելի մեծ անկախություն և հզորություն ապահովել»<sup>15</sup>,
- ընդդիմության հետ համագործակցելու առավել շատ պատրաստակամություն. «այնպիսի համագործակցություն, ինչպիսին երբևէ չի եղել և ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ իշխանությունները մեծացրել են մամուլի և բիզնեսի վրա իրենց վերահսկողությունը, Վրաստանում հետպատերազմյան վերակառուցումը լինելու է ավելի մեծ ազատությունն ու առաջընթացը»<sup>16</sup>:

Հենց այս հայտարարված «բարեփոխումների նոր ալիքի» վրա էլ բավականին հաճախ հիմնվում են Եվրոպական Միության պաշտոնյաները Վրաստանի մասին և Վրաստանի կառավարությանն ուղղված իրենց ելույթներում: Ավելին, բարեփոխումների հետագա հաջող ընթացքը կապահովի Վրաստանին դեպի ԵՄ ինտեգրման և Արևելյան գործընկերության շրջանակ-

<sup>14</sup> Saakashvili Speaks of 'New Wave' of Democratic Reforms. [www.civil.ge](http://www.civil.ge) (15.12.2009):

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում:

ներում սկսված արշավի ավելի հաջող ընթացք՝ ամրապնդելով Վրաստանի առաջատար դիրքը:

Պատկերավոր ասած՝ եթե Եվրոպական ինտեգրումը խոչընդոտներով լի մի ճանապարհ է, ապա Վրաստանը ավելի մեծ արագությամբ և ավելի շատ ջանքեր գործադրելով է ընթանում՝ հաղթահարելու խոչընդոտները, իսկ ողջ մրցավազքի երկայնքով նրա «Եվրոպական երկրպագուները» ավելի շատ են և ավելի ակտիվ:

## Արևելյան գործընկերություն. խոչընդոտներ ճանապարհին

*Մայրոսյան Տ.*

2009 թ. հուլիսին Եվրամիության նախագահող երկիր Շվեդիայի վարչապետ Ֆրեդրիկ Ռայնֆելդտը հայտարարեց, որ Եվրամիությունը առկախում է Արևելյան գործընկերության (ԱԳ) ծրագիրը ի հայտ եկած նոր մարտահրավերների պատճառով: Շվեդ պաշտոնյայի հայտարարության համաձայն. «Եվրոպան կանգնել է լուրջ ֆինանսական ճգնաժամի առջև, և մենք պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկենք ճգնաժամից խուսափելու համար... Ավելին, կլիմայի փոփոխության խնդիրը ոչ պակաս կարևոր է: Մենք ժամանակ կորցնելու իրավունք չունենք և այս խնդիրները պետք է լուծենք մինչև դեկտեմբեր»<sup>1</sup>:

Հայտարարությունը այս քայլը վերագրում է տնտեսական ճգնաժամին և կլիմայական խնդիրներին, սակայն արդյո՞ք առկախման համար այլ ավելի լուրջ խնդիրներ գոյություն չէին կարող ունենալ, և արդյո՞ք ճգնաժամը և կլիմայի փոփոխությունը ընդամենը պատրվակներ չէին (մանավանդ, որ այս խնդիրներն արդեն գոյություն ունեին այն պահի դրությամբ, երբ տրվել էր Արևելյան գործընկերության ծրագրի մեկնարկը):

Արևելյան գործընկերության ծրագրի պաշտոնական մեկնարկից ի վեր տեղի ունեցած իրադարձությունների և հատկապես քաղաքական հայտարարությունների վերլուծությունը թույլ է տալիս խոսել ծրագրին առնչվող այլ լուրջ խնդիրների առկայության մասին: Մասնավորապես, այդ խնդիրները ծագում են ինչպես բուն Եվրամիությունից, այնպես էլ Արևելյան գործընկերության հասցեատեր վեց պետություններից և, հատկապես, Ռուսաստանի վարած արտաքին քաղաքականությունից:

Որքան էլ Արևելյան գործընկերության համահեղինակները պնդեն, թե այս ծրագիրը ուղղված չէ որևէ երրորդ պետության և հատկապես Ռուսաստանի դեմ, ծրագրի բովանդակությունը և մի քանի այլ իրողություններ ակնհայտ են դարձնում այն փաստը, որ Արևելյան գործընկերության առաջ քաշած նպատակները Մոսկվայի կողմից կարող էին ընկալված լինել որպես հա-

<sup>1</sup> Moldova.org, “EU suspends the Eastern Partnership Program, Swedish PM said,” July 03, 2009 <http://politicom.moldova.org/news/eu-suspends-the-eastern-partnership-program-swedish-pm-said-202231-eng.html> (10.12.2009):

կառուսական:<sup>2</sup> Պատահական չէ, որ նման ընկալման պատճառով Ռուսաստանը ոչ միայն բողոքել, այլև ձեռնարկել է կոնկրետ գործողություններ, որոնք կարող են նվազեցնել ԱԳ-ի հիմնարար նպատակների կյանքի կոչման հնարավորությունը:

Արևելյան գործընկերությունը, թերևս, Ռուսաստանին գլխավորապես անհանգստացրել է որպես ավանդական ազդեցության գոտիների վերաբաշխման և Ռուսաստանին մեծ էներգետիկ նախագծերից դուրս թողնելու փորձ:

Նախ Ռուսաստանում ԱԳ-ի նկատմամբ կասկածելի վերաբերմունքի տեղիք կարող էր տալ այն փաստը, որ սույն ծրագրի հետևում կանգնած համահեղինակները Լեհաստանն ու Շվեդիան էին: Նույնիսկ մինչև ԵՄ-ի անդամ դառնալը Լեհաստանը ճանապարհներ էր փնտրում Եվրամիության այսպես կոչված «Արևելյան չափումը» զարգացնելու համար՝ հետևելով Ֆինլանդիայի կողմից 1997 թ. նախաձեռնած «Հյուսիսային չափման» օրինակին: Այս նախաձեռնության հիմքում ընկած էր այն մտայնությունը, թե Լեհաստանը կարող է իրեն պաշտպանված զգալ Ռուսաստանից միայն այն դեպքում, եթե Ուկրաինան ամբողջությամբ անկախ, Արևմուտքի հետ սերտորեն կապված երկիր դառնա:

Թեև Լեհաստանի սկզբնական ջանքերը Արևելյան գործընկերության վերաբերյալ ձախողվեցին, հարավօսական դեպքերից հետո դրանք հավանության արժանացան և աջակցություն ստացան ԵՄ-ի մյուս երկրների կողմից: Այս հարցում վերլուծաբանները կարևորում են Շվեդիայի և հատկապես վերջինիս արտգործնախարար Կարլ Բիլդտի դերը, որը, մինչ այդ արդեն հայտնի էր դարձել իր ընդգծված հակառուսական կեցվածքով և Ռուսաստանի հասցեին հնչեցրած սուր քննադատություններով: Շվեդիայի ակտիվ ներգրավումը Արևելյան գործընկերության առաջխաղացման գործում կարող է վերագրվել նաև այս երկրի՝ Ռուսաստանի «Հյուսիսային հոսք» էներգետիկ նախագծի նկատմամբ ունեցած բացասական դիրքորոշմանը:

Պատահական չէ, որ եթե Ռուսաստանի ղեկավարությունը լուրջ ուշադրություն չէր դարձնում Եվրոպական հարևանությանը, ապա Արևելյան գործընկերության մեկնարկից հետո Մոսկվայի դիրքորոշումը կտրուկ սաստկացավ: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հնչեցրած բազ-

<sup>2</sup> Ինչպես Բրյուսելը, այնպես էլ Եվրամիության առանձին երկրներ բազմիցս հայտարարել են, որ Արևելյան գործընկերությունը ուղղված չէ Մոսկվայի դեմ: Ու թեև Ռուսաստանը Արևելյան գործընկեր չէ, Եվրամիությունը հայտարարել է, որ Ռուսաստանը ևս կարող է մասնակցել նախագծին համագործակցության առանձին ծրագրերի շրջանակներում:

մաթիվ քննադատական որակումները, որոնցից մեկը Արևելյան գործընկերությունը բնութագրում էր որպես «Արևելյան Եվրոպայում ԵՄ-ի ազդեցության գոտու ստեղծում»,<sup>3</sup> խոսում է այն մասին, որ ԵՄ-ի խնդրո առարկա նախագիծը, հատկապես հարավօսական դեպքերի համատեքստում, Մոսկվայի կողմից դիտվել է որպես Ռուսաստանի արևելյան սահմանների շուրջ եվրոպամետ բուֆեր ստեղծելու փորձ:

Ռուսաստանի կողմից թերևս առավել ցավոտ է ընդունվել ԵՄ-ի կողմից Ռուսաստանի ամենամոտ դաշնակցի՝ Բելառուսի ներքաշումը Արևելյան գործընկերության մեջ և վերջինիս միջոցով Բելառուսին ռուսանպաստ քայլերից հետ կանգնեցնելու մարտավարությունը: 2009թ. մարտին Բրյուսելում անցկացվող ամենամյա ֆորումի ընթացքում Ս.Լավրովի՝ իր չէիս գործընկերոջը հասցեագրած քննադատությունը պարունակում է այդ անհանգստությունը. «Իմ լավ ընկեր Կարել Շվարցենբերգը հրապարակավ ասում է, որ եթե Բելառուսը ճանաչի Աբխազիան և Հարավային Օսեթիան, ապա կարող է մոռանալ «Արևելյան գործընկերության» մասին. ինձ համար պարզ չէ՝ սա շանտաժ է, թե՞ ժողովրդավարություն՝ գործողության մեջ... Նման հայտարարություններից հետո մեզ մոտ հարց է առաջանում՝ արդյո՞ք սա մի փորձ է պետություններին հետ կանգնեցնել այն որոշումներից, որոնք նրանք ենթադրաբար պետք է կայացնեն ինքնուրույն կերպով»:<sup>4</sup>

Երկրորդ կարևոր մտահոգությունը, ինչպես նշվեց վերևում, վերաբերում է էներգակիրների տարանցման ճանապարհներին: Հատկապես 2009թ. հունվարին տեղի ունեցած ռուս-ուկրաինական գազային կոնֆլիկտից հետո եվրոպացիները առավել մեծ ակտիվությամբ սկսեցին էներգակիրների ներկրման այլընտրանքային ճանապարհների փնտրտուքը, և պատահական չէ, որ Արևելյան գործընկերության կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ էներգետիկ անվտանգությունը և համագործակցությունը, վերաբերում էր Արևելք-Արևմուտք էներգետիկ ճանապարհների դիվերսիֆիկացմանը: Սա իր հերթին նշանակում էր, որ Արևելյան գործընկերության էներգետիկ բաղադրիչի իրականացման դեպքում կարող էին լուրջ վտանգի տակ դրվել Ռուսաստանի սեփական էներգետիկ նախագծերը: Եվ այս հարցում է, որ Ռուսաստանի՝ մինչ այժմ նախաձեռնած քայլերը արդեն տվել են իր համար ցանկալի արդյունքներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Ռուսաստան-Ադրբեյ-

<sup>3</sup> Stefan Meister and Marie-Lena May, The EU's Eastern Partnership - a Misunderstood Offer of Cooperation, DGAPstandpunct September 2009 N° 7.

<sup>4</sup> "EU's New Eastern Partnership Draws Ire From Russia," European Dialogue, March 2009. <http://eurodialogue.org/node/668> (11.12.2009):



ջան գազային պայմանագրի ստորագրմանը, որը արժեք դիտարկել նաև հայ-թուրքական արձանագարությունների ստորագրման համատեքստում, ուր Ռուսաստանը հանդես եկավ ամենագլխավոր միջնորդներից, նախաձեռնողներից և երաշխավորներից մեկի դերում:

Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման և հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման հեռանկարից զատ, Ռուսաստանը կարող է թուլացնել Արևելյան գործընկերության գլխավոր հասցեատերերից մեկի՝ Վրաստանի ռեզիոնալ նշանակությունը և ավելի ամրապնդել իր դիրքերը Հայաստանում (օրինակ՝ պայմանավորված ռուսաստանյան բիզնեսի շահերի աճով): Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրմամբ Մոսկվան նաև արագացրեց կամ երաշխավորեց ռուս-ադրբեջանական գազային պայմանագրի կնքումը:

Մրանով Ադրբեջանը, բացի տնտեսական խնդիրներ լուծելուց, փորձեց նաև «պատժել» Թուրքիային և Արևմուտքին հայ-թուրքական խնդրում Ադրբեջանի շահերը անտեսելու համար: 2009 թ. հոկտեմբերի 14-ին, նույն այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը Թուրքիայի իր գործընկերոջ հետ դիտում էր Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային խաղը, Ադրբեջանի Պետական նավթային ընկերության նախագահ Ռովնագ Աբդուլլաևը և Գազպրոմի գլխավոր գործադիր տնօրեն Ալեքսեյ Միլերը պայմանագիր ստորագրեցին 2010 թվականից տարեկան 500 միլիոն խորանարդ մետր ադրբեջանական գազ Ռուսաստան արտահանելու վերաբերյալ:

Այս գործարքը, որը պատմության մեջ առաջին անգամ Ադրբեջանին ՌԴ գազը ներկրողից դարձնում է սեփական գազը Ռուսաստան արտահանող երկիր, իր մեջ սպառնալիքներ է պարունակում Եվրամիության Արևելյան գործընկերության կարևոր բաղադրիչներից մեկի՝ էներգետիկ անվտանգության համար, որն արդյունավետ իրականություն դարձնելու համար ինչպես Եվրամիությունը, այնպես էլ ԱՄՆ-ը մտադիր են կյանքի կոչել Nabucco նախագիծը: Չնայած սույն պայմանագրով արտահանվելիք գազի ծավալները մեծ չեն, և Ադրբեջանը շարունակաբար հայտարարել է իր՝ Nabucco ծրագրի հանդեպ ունեցած հավատարմության վերաբերյալ, երկու փաստ Արևմուտքում մտահոգությունների տեղիք են տալիս: Նախ, Ռուսաստանը բացահայտ հայտարարել է, որ ցանկություն ունի երկարաձգել պայմանագիրը 2015 թ.-ից հետո և գազի շատ ավելի մեծ ծավալներ գնել Ադրբեջանից, ինչը արևմտյան որոշ վերլուծաբանների կարծիքով, փորձ է շեղել Nabucco-ի համար նախատեսված գազի պաշարները դեպի Ռուսաստան: Արևմտյան վերլուծաբաններից ոմանք մտավախություն են հայտնում, որ Ադրբեջանի կողմից Nabucco

նախագծի տապալումը ինքնըստինքյան կարող է նշանակել այս երկրի մասնակցությունը ռուսական «Հարավային հոսք» նախագծին, ինչն էլ ավելի կամրապնդի Ռուսաստանի գերիշխող դիրքը էներգետիկ ճանապարհների վրա: Բացի այդ, Nabucco-ի կառուցման և շահագործման համար վտանգ են ներկայացնում արտահանվելիք գազի գնի շուրջ Թուրքիայի և Ադրբեջանի միջև դեռևս չլուծված տարաձայնությունները: Կառավարության 2009 թ. հոկտեմբերի 16-ի նիստի ընթացքում Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևը նաև մատնանշեց Թուրքիայի դեմ հնարավոր պատժամիջոցի ձևը (թեև դա ներկայացվեց որպես զուտ կոմերցիոն դրդապատճառներ ունեցող հեռանկար)։ «Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ շատ տարիներ Ադրբեջանը Թուրքիային գազը վաճառում էր շուկայական գնի մեկ երրորդով: Ո՞ր պետությունը կհամաձայնվի գազ վաճառել շուկայական գնի 30 տոկոսով՝ այն էլ ներկայիս պայմաններում»:<sup>5</sup>

Բացի ՌԴ հակազդեցությունից, Արևելյան գործընկերությունը բավականին լուրջ քննադատության է արժանացել Ուկրաինայի կողմից, որը համարվում է այս նախագծի գուցե և ամենազլխավոր հասցեատերը: Նարնջագույն հեղափոխությունից հետո Եվրամիությանը արագ ինտեգրվելու հույսեր փայփայող ուկրաինական իշխանությունների և ընդդիմության արձագանքները Արևելյան գործընկերության վերաբերյալ մեծ հիասթափություն էին պարունակում:

Մասնավորապես, պաշտոնական Կիևը հույսեր ուներ, որ Արևելյան գործընկերությունը կօգնի Ուկրաինային ավելի արագ հասնել Եվրամիության անդամակցությանը: Այնուամենայնիվ, նպատակ ունենալով ընդամենը ազատականացնել վիզային ռեժիմները, ստեղծել ազատ առևտրային գոտիներ կամ կնքել ռազմավարական պայմանագրեր՝ Արևելյան գործընկերությունը, փաստորեն, հավասարության նշան էր դնում Ուկրաինայի, Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Բելառուսի միջև:

Եվրամիության գլխավոր քաղաքական մարմնի՝ Եվրոպական խորհրդի 2009 թ. մարտի 20-ի հայտարարությանը հետևեց Յուլչենկոյի օգնական Անդրի Հոնչարուկի մեկնաբանությունը՝ արտահայտելով ուկրաինական կողմի դժգոհության հիմնական պատճառները: Այստեղ պաշտոնյան քննա-

<sup>5</sup> Brian Whitmore, “Azerbaijan Could Scuttle Nabucco Over Turkey-Armenia Deal” Radio Free Europe, October 19, 2009.

([http://www.rferl.org/content/Azerbaijan\\_Could\\_Scuttle\\_Nabucco\\_Over\\_TurkeyArmenia\\_Deal/1855784.html](http://www.rferl.org/content/Azerbaijan_Could_Scuttle_Nabucco_Over_TurkeyArmenia_Deal/1855784.html)). (13.12.2009): Տե՛ս նաև Vladimir Socor, “Azerbaijan-Russia gaz agreement and its implications” Eurasia Daily Monitor, October 15, 2009-Volume 6, Issue 189.

դատում էր այն ուղղումները, որոնք կատարվել էին Եվրամիության կողմից 2008 թվականի մարտի 3-ին Արևելյան գործընկերության վերաբերյալ ներկայացված առաջարկի մեջ: Ի տարբերություն այդ առաջարկի, որը որպես նպատակ էր հռչակում քաղաքական միավորումը կամ քաղաքական ինտեգրացիան, մարտի 20-ի հայտարարությունը ընդամենը խոսում էր այդ ինտեգրացիայի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու մասին: Բացի այդ, հայտարարության մեջ և ոչ մի նշում չկար Եվրամիությանը անդամակցելու հեռանկարի վերաբերյալ: Հայտարարությունը նաև նախատեսում էր վիզային ռեժիմների ազատականացում՝ վիզային ռեժիմի լրիվ վերացման փոխարեն, ինչը, ըստ Հոնչարուկի, խոստացվել էր ԵՄ-ի՝ սույն հայտարարությանը նախորդող փաստաթղթերում: Ուկրաինայում դժգոհություն էր առաջացրել նաև Արևելյան գործընկերության կողմից նախաձեռնությանը մասնակցող երկրներին տրվելիք դրամական օժանդակության ծավալը՝ 600 միլիոն եվրո չորս տարվա համար: Ուկրաինայի պառլամենտի Եվրոպական ինտեգրացիայի հարցերով հանձնաժողովի նախագահ Բորիս Տառայուկի խոսքերով, նույնքան գումար Եվրամիությունը նախատեսել էր Թուրքիայի՝ Եվրամիությանը անդամակցելուն ուղղված նախագծերի իրականացման համար՝ միայն 2009թ. ընթացքում:<sup>6</sup>

Արժանահիշատակ է, որ Մոլդովան Արևելյան գործընկերության հասցեատեր մյուս պետությունն էր (ընդ որում՝ առաջինը), որը պաշտոնապես բացասաբար արտահայտվեց այս նախաձեռնության վերաբերյալ: Մասնավորապես, մինչ իր հրաժարականը, Մոլդովայի նախագահ Վլադիմիր Վորոնինը Արևելյան գործընկերությունը կոչել էր նոր, հակառուսական ԱՊՀ՝ Եվրամիության գլխավորությամբ:<sup>7</sup> Սա կարևոր է հասկանալու համար, որ Եվրամիությանը ավելի մոտ դառնալու ձգտումը միանշանակորեն չի ողջունվում այս երկրի ազդեցիկ քաղաքական ուժերի կողմից:

Արևելյան գործընկերության ճանապարհին կանգնած խոչընդոտների մյուս խումբը վերաբերում է նշված վեց պետությունների՝ նախագծին պատրաստ չլինելու խնդրին: Արևմտյան մի շարք վերլուծաբանների կողմից ավելի շատ է ընդգծվում այն իրողությունը, որ Արևելյան գործընկերության նախագիծն իր հիմքում չունի պարարտ հող, որ Արևելյան հարևանության քաղաքականությունը, կոչված լինելով ստեղծել այդ հողը, արդեն հասցրել էր ձա-

6 Pavel Korduban, “European Union's Eastern Partnership Plan Disappoints Ukraine,” European Dialogue, April 2009. <http://eurodialogue.org/node/1478> (15.12.2009):

7 Stefan Meister and Marie-Lena May, The EU's Eastern Partnership - a Misunderstood Offer of Cooperation, DGAPstandpunct September 2009 N° 7.

խողվել: Մասնավորապես, որպես կոմկան են ներկայացվում բոլոր վեց պետություններում առկա քաղաքական և ժողովրդավարացման հետ կապված խնդիրները: Այսպես, Եվրոպական հարևանության առաջամարտիկ երկիր համարվող Ուկրաինան Նարնջագույն հեղափոխությունից ի վեր ընկղմվել է անվերջանալի քաղաքական ճգնաժամերի մեջ: Մոլդովայում դեռևս շարունակվում է հետընտրական անկումը մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների ոլորտում: Թեև Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն արևմտյան երկրների հետ համագործակցության նշաններ է ցույց տալիս, քիչ հավանական է, որ նա երկրի ժողովրդավարացման ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկի ի վնաս սեփական իշխանության (մանավանդ, կարծես թե Եվրամիությունը Բելառուսին Արևելյան գործընկերության հրավեր ուղարկելու դիմաց արդեն կորզել է մի կարևոր զիջում. Բելառուսը չի ճանաչել Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը): Հարավօսեթական պատերազմից հետո վրացական ընդդիմությունը ձեռնամուխ եղավ փողոցային ցույցերի կազմակերպմանը և մինչ օրս պահանջում է Սաակաշվիլի հրաժարականը: Հայաստանում 2008թ. ձախողված նախագահական ընտրություններին հաջորդեց մարդու իրավունքների անկումով և քաղաքական ազատությունների սահմանափակումով բնութագրվող մի ժամանակաշրջան: Անտեսելով Արևմուտքի քննադատությունը՝ 2009 թ. մարտին Ադրբեյջանը հանրաքվեի միջոցով վերացրեց նախագահի պաշտոնավարման ժամկետի սահմանափակումները. այս երկիրը շարունակաբար քննադատության է ենթարկվում նաև մարդու իրավունքների ոլորտում առկա խնդիրների պատճառով:

Արևելյան գործընկերության ծրագրային դրույթները նախանշում են նաև ազատ առևտրային գոտիների ստեղծում, որոնց միջոցով գործընկեր պետությունները պետք է աստիճանաբար ինտեգրվեն Եվրամիության ներքին շուկա: Սակայն, ինչպես ցույց են տալիս Եվրահանձնաժողովի կողմից անցկացված իրագործելիության ուսումնասիրությունները, որոշ երկրներ, օրինակ՝ Հայաստանը և Վրաստանը, պատրաստ չեն իրենց շուկաների նման ազատականացմանը: Ադրբեյջանի և Բելառուսի հետ առևտրային համաձայնագրերի կնքումը փորձագետներին ավելի անիրատեսական է թվում այն պատճառով, որ Համաշխարհային առևտրի կազմակերպությանը անդամակցելու վերաբերյալ այս երկրների հետ ընթացող բանակցությունները մտել են փակուղի: Բացի այդ, Բելառուսը Ռուսաստանի հետ մաքսային միության մեջ

է, ինչը հարցականի տակ է դնում Բելառուսի՝ Եվրամիության հետ ազատ առևտրային հարաբերություններից շահավետորեն օգտվելու հեռանկարը:<sup>8</sup>

Վերջապես, Արևելյան գործընկերության հետ կապված խնդիրների ևս մի խումբ առնչվում է հենց Եվրամիության ներսում այս նախագծի վերաբերյալ գոյություն ունեցող ոչ միանշանակ ընկալումների հետ: Օրինակ՝ Եվրամիության ներսում չկա հստակ համաձայնություն Ռուսաստանի նկատմամբ իրականացվելիք քաղաքականության վերաբերյալ («հին Եվրոպան») ի տարբերություն «նոր Եվրոպայի» հակված է ավելի մեղմ վերաբերմունք ցուցաբերել Ռուսաստանի նկատմամբ): Ինչպեսև Ռուսաստանի պարագայում, Եվրամիության երկրները երկփեղկված են Բելառուսի նկատմամբ իրականացվելիք քաղաքականության (մեկուսացման կամ ապամեկուսացման) հարցում: Եթե Լեհաստանը, Չեխիան, Լիտվան և Սլովակիան մինչ այժմ հանդես են եկել Բելառուսի նկատմամբ ավելի խիստ պատժամիջոցներ կիրառելու կոչով, «Հին Եվրոպան», մասնավորապես՝ Գերմանիան, արտահայտվել է ավելի մեղմ միջոցների կիրառման օգտին:

Բացի Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ ունեցած դիրքորոշումների տարբերությունից, Եվրամիության անդամների շրջանում նաև այլ շահերի բախում կա: Օրինակ Բուլղարիան և Ռումինիան, որոնք արդեն հնչեցրել են իրենց քննադատությունը ԱԳ-ի հասցեին, մտավախություն ունեն, որ այս նախագիծը կթուլացնի իրենց կողմից Սևծովյան համագործակցության (Black Sea Synergy) մեջ արդեն իսկ ներդրված ջանքերը (թեև այս ծրագիրը ևս, իր հերթին, շատ լուրջ քննադատության է արժանացել): ԱԳ-ի վերաբերյալ իրենց մտահոգություններն են հայտնել նաև Իսպանիան և Իտալիան, որոնք առավել հետաքրքրված են Արևելյան գործընկերության Միջերկրական չափման մեջ: Արևելյան գործընկերությունը նաև համարվում է «Նոր Եվրոպայի», մասնավորապես՝ Լեհաստանի պատասխանը Սարկոզիի «Միջերկրական միության» նախագծին, որը նախատեսում է ավելի մեծ ֆինանսական հոսքեր ուղղել դեպի Եվրամիության հարավային հարևանները: Այս իմաստով գուցե նաև պատահական չէր, որ Ֆրանսիայի, Իտալիայի և Իսպանիայի (նաև Միացյալ Թագավորության) ղեկավարները չմասնակցեցին Պրահայում Արևելյան գործընկերության առաջին զագաթաժողովին:<sup>9</sup>

Սույն հոդվածում փորձ արվեց ցույց տալ, որ չնայած շվեդական նախագահությունը որպես Արևելյան գործընկերության առկախման պատճառ

<sup>8</sup> Natalia Shapovalova, “The EU’s Eastern Partnership: still-born?” Policy brief, FRIDE, Fundacion Para Las Relaciones Internacionales Y El Dialogo Exterior, N. 11 - May 2009.

<sup>9</sup> Marcin Łapczyński, “The European Union’s Eastern Partnership: Chances and Perspectives,” Caucasian Review of International Affairs, Vol. 3 (2) - Spring 2009, p. 149-150.

ներկայացրել էր ֆինանսա-տնտեսական ճգնաժամը և բնապահպանական խնդիրների առաջնահերթությունը, այս նախագծի պաշտոնական մեկնարկից ի վեր ինչպես Եվրամիության ներսում, այնպես էլ նրանից դուրս ծագել էին ընդդիմության և հակազդեցության օջախներ, որոնք և կարող էին կանխորոշել տվյալ առկախումը:

Մասնավորապես, գլխավոր ընդդիմության և հակազդեցության աղբյուրը Ռուսաստանն էր, որը ոչ միայն պաշտոնապես իր դժգոհությունն է հայտնել Արևելյան գործընկերության ծրագրի վերաբերյալ, այլ նաև կոնկրետ քայլերի միջոցով վտանգել այս նախագծի կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ էներգետիկ անվտանգության իրագործելիությունը: Արևելյան գործընկերության ճանապարհը մինչ այժմ հարթ չի եղել նաև հասցեատեր պետությունների ներսում: Մասնավորապես խոսքը վերաբերում է Ուկրաինային, որի դեկավարությունը դժգոհում է ԱԳ-ում Եվրամիությանը անդամակցելու հեռանկարի բացակայությունից և Ուկրաինայի ու մյուս հինգ գործընկեր պետությունների միջև հավասարության նշան դնելու փաստից: Խոչընդոտների մյուս խումբը ծագում է Եվրամիության ներսից՝ պայմանավորված վերջինիս անդամների՝ Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ դիրքորոշումների, եվրոպական քաղաքականության տարբեր ուղղությունների կարևորության վերաբերյալ ընկալումների տարբերությունից, ինչպես նաև աճող այն գիտակցումից, որ Արևելյան գործընկերության հասցեատեր պետությունները քաղաքականապես և տնտեսապես պատրաստ չեն նախագծի առաջադրած նպատակներին:

## ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

### Ազատությունը որպես քաղաքակրթական հենք և հասարակական առաջընթացի գործիք

*Հովհաննիսյան Դ.*

Ժամանակակից իրականությունը առանձնանում է անցումային շրջաններին հատուկ ռեմիՆդոլոգիզացման միտումներով, ինչն իր բաղադրիչներով կապված լինելով զանգվածային գովազդաբրենդային գիտակցության հետ, այնուամենայնիվ սկզբունքորեն տարբերվում է վերջինից, քանի որ միայն արտահայտում է մերօրյա մարդու պահանջը՝ ամբողջական, ոչ ֆրագմենտար աշխարհայեցողություն, աշխարհընկալում ունենալու: Փոխտոփայությունը դադարել է իր դերը կատարել՝ զիջելով այն, մի կողմից՝ բազմաթիվ մարդաբանություններին, մյուս կողմից՝ այդ բրենդագովազդային ամբողջականությունը վերլուծելու կոչված միՆՏոլոգիային:

Վերը նշված պահանջը և միայն գիտության մասին ռացիոնալ պատկերացումների (և ոչ թե իրական գիտության, ինչպես երբեմն գրում են այս սյուժեներին անդրադարձող հետազոտողները) վրա հիմնված ռացիոնալ մոտեցման սահմանափակ և նույնիսկ աղճատող հնարավորությունները հանգեցնում են նրան, որ զանգվածային գիտակցության կառուցվածքի մեջ համակարգող դեր է սկսում կատարել ի սկզբանե չհամակարգված կենցաղային գիտակցությունը՝ կատարելով իր համար անսովոր և նույնիսկ անհնարին ֆունկցիա:

Այստեղից էլ՝ խորհրդանիշների անընդհատ իրար փոխարինող, երբեմն՝ մերժող շրջապատույթը, որ ի գործ է միայն ամբողջականության պատրանք ստեղծել, առաջարկելով աշխարհի քառտիկ և հիերարխիկ կապերից հիմնականում զուրկ կաղապարանման ինչ-որ բան, որը, միննույն ժամանակ, անընդհատ փոփոխվում է, հեղհեղուկ է և մերժում է ինքն իրեն: Ինչպես նշում է Ջ.Վայնզեկերը, «արագ փոփոխվող իրականությունը վեր է ածվում պերմանենտ խորհրդանշական հեղափոխության»:

Այդ աշխարհում չկան կայուն արժեքներ, որոնց շուրջ հնարավոր կլինեի համընդհանուր անհերքելի համաձայնության գալ: Պատվիրանները մերժվում են, կյանքը, սեփականությունը, ընտանիքը այլևս սուրբ և անձեռնմխելի չեն: Այլևս չկա իրար չուտելու, իրար չսպանելու, միջուկային զենք չտարածելու համաձայնություն: Պետությունը զրկվել է բռնություն իրականացնելու իր մենաշնորհից:<sup>1</sup> Չկան նորմեր, որոնք հիմք լինեն սուբկուլտուրայից

<sup>1</sup> Այս ամենը ապացույցների կարիք չունի: Պետք է միայն հիշել Հարավսլավիան, Իրաքը, Աֆղանստանը, սեպտեմբերի 11-ը և այլն:

ավելի լայն հարթություններում, ուստի և կասկածի տակ են դրվում այն քաղաքակրթական կառույցները և կանոնները, որոնց միջոցով արտահայտվում և իրականացվում էին արժեքները և մշակութային նորմերը: Լավագույն դեպքում ժառանգված արժեքները նեյտրալ նշանակություն են ստանում, կորցնելով իրենց իմպերատիվությունը:

Ինդիվիդուալ հոգեբանական ընկալման համատեքստում նման բնույթ ունեցող խորհրդանշական հեղափոխությունները ընկալվում են որպես աշխարհի կործանում՝ միֆոլոգեմ, որը կարող է դրսևորումներ ունենալ, սկսած «Կատարյալ թագավորության/կայսրության կործանում»-ից և վերջացրած «Անձ-աշխարհ»-ով:

Ոչ ոք չի կարող կանխատեսել, թե ինչպիսին է լինելու աշխարհի փոխկապակցվածությունը արտահայտող երևույթների և կապերի հիերարխիկ կադապարը վերականգնող նոր կրոնադիցաբանական կամ դիցազադափարական համակարգը, որի հիման վրա կարող է վերականգնվել աշխարհայեցողության ամբողջականությունը և հաղթահարվել գիտակցության ֆրագմենտարությունը: Նոր աշխարհի ստեղծման համար ժամանակ է պետք: Մակայն այս բավականին պարզ ճշմարտության գիտակցումը թույլ է տալիս հաղթահարել մեկուսացումը և որոնել կապակցվածություն:

Երկիր մոլորակի վրա բնակվող մարդկության այլևս միասնական ճակատագրի գիտակցումը բնականորեն առաջ է քաշելու համակեցության նոր ձևեր և կանոններ՝ փոխելով ինֆորմացիոն դեֆիցիտից ազատագրված, սակայն ինֆորմացիոն հեղեղի մեջ դեռևս դժվարությամբ կողմնորոշվող մարդու դերակատարությունը, հասարակության գործառույթները, պետության ձևը և այլն: Մարդկային հանրակացարանը պետք է ունենա նոր կանոններ, որոնք էլ կվերածեն այն քառսից տիեզերքի, որն ունի էություն, իմաստ, առանցք և արժեք: Պատվիրանների (այն ընդհանուր կասկածի տակ չդրվող պայմանավորվածությունները, որոնց վրա է հիմնվում համամարդկային համակեցությունը) ցանկը էլ ավելի է ընդլայնվելու՝ ընդգրկելով մարդ արարածի անձնական ինքնիշխանությունը և ազատությունը վավերացնող սկզբունքներ և միաժամանակ սահմանափակելով նրա՝ տեխնոլոգիաների զարգացման հետևանքով իր ազատության գրեթե անսահմանափակ հնարավորություններից օգտվելը:

Դժվար է կանխագուշակել, թե ինչ ձևեր կընդունի եկող քաղաքակրթական համակարգը, սակայն հարկավոր է փորձել ըմբռնել այն հիմնական միտումները, որոնք առանցքային են դառնալու վերջինիս համար:

Մեզ հայերիս՝ պատմական հանգամանքներով լիովին բացատրելի մշտական թերությունը՝ ինդիվիդուալիզմը և սեփական ընտանիքի սահմաններից դուրս գալու և հասարակական կյանքում անկեղծորեն համագործակցե-



լու միտումի, մղումի և խիզախության պակասը ներկայում կարող է դառնալ իրական առաջընթացի գրավական, եթե այս ամենը գիտակցվի, ուղղորդվի և ծառայեցվի ընդհանուրի, այսինքն՝ իրեն որպես գլոբալ աշխարհում ինտեգրված իմաստավորող Հայաստանի՝ որպես քաղաքակրթական կառույցի և Հայության՝ որպես համաշխարհային ցանցի շահերին:

Այստեղ կարևորն այն է, որ էությունը և երևույթը գիտակցվեն և իմաստավորվեն, դրա հիման վրա հասկանալի կդառնան այն կանոնները և սահմանափակումները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի մեր հայկական մշակույթը առաջատարի միտումներ ունենա եկող քաղաքակրթական համակարգում: Այս ամենի համար անհրաժեշտ է մշակել այնպիսի համակարգ, որը թույլ տա ինդիվիդուալ ազատության մաքսիմալ ծառայեցումը ընդհանուրի շահերին, հնարավորինս քիչ այն սահմանափակելով, քանի որ ցանկացած մշակույթի էությունը և որակը կախված է այդ մշակույթի էությունը կազմող ազատությունից: Մակայն նախ ի՞նչ է ազատությունը և հատկապես մեզ՝ հայերիս ազատ մտածելու և գործելու ինքնատիպությունը:

Հայաստանի Հանրապետության հիմնադրման օրից սկսած մեր հասարակությունը ստիպված է անընդհատ լսել միևնույն բառակապակցությամբ՝ «Քաղաքակիրթ երկրներում այսպես է...» հիմնավորվող հաճախ իրար ուղղակի հակադրվող մտքեր, առաջարկություններ, եզրակացություններ այն մասին, թե ինչպես մենք մեր պետության մեջ պետք է վարվենք, գործենք և այլն:

Այս տեսանկյունից, հավանաբար, իմաստ ունի անդրադառնալ «քաղաքակրթություն» հասկացության էությունը՝ անտեսելով, անշուշտ, պոստմոդերնիստական մուլտիկուլտուրալ բնորոշումները՝ վերջիններիս բացարձակ չհիմնավորված լինելու պատճառով:

Հունական դասական շրջանում համարվում էր, որ քաղաքակիրթ են միայն հույները, իսկ մյուսները՝ բարբարոսներ, քանի որ վերջիններիս համար «ազատություն» հասկացությունը բացարձակապես զուրկ էր քաղաքական իմաստ ունենալուց: Արիստոտելի բնորոշմամբ, ազատ մարդիկ տարբերվում են բարբարոսներից, այսինքն, նրա տեսանկյունից՝ նրանցից, ով չգիտի, թե ինչ բան է ազատությունը, այն բանով, որ ազատների բնական և չօտարվող իրավունքն է «մասնակցել դատին և խորհրդին»: Դատական գործերի լուծմանը և որոշումների ընդունմանը մասնակցելու իրավունքը երաշխավորում է, նախ, իշխանություններին զսպելու հնարավորությունը, ապա ընդհանուր, միասնական որոշումներին ենթարկվելու պատվի գիտակցումը: Այս դեպքում ենթարկվելը պատիվ է ազատ քաղաքացու համար, քանի որ ինքը, ըստ էության, կատարում է իր ընդունած որոշումը:

Դարեր հետո մեկ այլ մեծ փիլիսոփա Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելը, փաստորեն, շարունակում է Արիստոտելի միտքը՝ առաջարկելով հետևյալ

ձևակերպումը. «Համաշխարհային պատմությունը ազատության գիտակցման առաջընթացի պրոցես է»: Մեկ այլ տեղ այս ձևակերպումը ստանում է հետևյալ տեսքը. «Համաշխարհային պատմությունը մարդու՝ իր ներքին արժանապատվության ձեռք բերման գործընթաց է»: Ա.Յանովի բնորոշմամբ, Հեգելի այս ձևակերպումից բխում է, որ այն ժողովուրդները, որոնք իրենց առաջ չեն դնում ներքին արժանապատվության ձեռք բերման խնդիրը, քաղաքակիրթ չեն: Կամ, ըստ Հեգելի, մնում են բարբարոս վիճակում, քանի դեռ իրենց առջև նման նպատակ չեն դնում:

Այսպիսով, դասական մոտեցումը քաղաքակիրթ լինելու հիմնական նախապայմանը և էությունը տեսնում է ազատության և մարդկային արժանապատվության կատեգորիաների գիտակցման և դրանց արմատավորման մեջ, ինչը իմաստավորում է անցյալը և ժամանակի պարզ ընթացքը վեր է ածում Պատմության:

Այսպիսով, քաղաքակիրթ հասարակությունը այն հասարակությունն է, որի անդամները գիտակցում են, եթե օգտվելու լինենք ժամանակակից սոցիալաքաղաքական բառամթերքից, օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններում իրենց մասնակցությունը ունենալու ազատությունը և այդ մասնակցությունը մարդկային արժանապատվության ամբողջական գիտակցմամբ իրականացնելու արժեքները որպես իրենց հասարակության հիմնարար արժեքներ:

Այս բավականին խիստ և հստակ սահմաններ դնող ձևակերպումից բխում է նախ այն, որ չլուծելով հասարակության հիմնարար սկզբունքների արմատականացման հիմնահարցը, անիմաստ է ձգտել ոչ էական բնույթ ունեցող պետական և հասարակական կառուցվածքի և ինստիտուցիոնալ զարգացման առանձին դետալներ փոխ առնել այն պետություններից և հասարակություններից, որոնք մեր՝ քաղաքակիրթ լինելուց շատ հեռու գիտակցությանը թվում են քաղաքակիրթ:

Եվրամիության ստեղծման գաղափարի հեղինակ Ժան Մոննեն, փորձելով սահմանել «քաղաքակրթություն» հասկացությունը, գալիս է այն եզրակացության, որ այն բնորոշվում է հետևյալ կերպ. «քաղաքակրթությունը հավասար է կանոններ+ինստիտուտներ»:

Այս սահմանումը, չափազանց ընդգրկուն հասկացության իմաստը բացատրելով հանդերձ, առաջացնում է մի կարևոր հարց ևս. իսկ ի՞նչ է այդ դեպքում մշակույթը: Չէ որ առօրյա գործածության մեջ մենք հաճախ նույնացնում

ենք այս երկու եզրերը, օգտագործում ենք դրանք որպես հոմանիշներ՝ շատ դեպքերում չտարբերակելով այս հասկացությունների իմաստները:

Մոննեի ձևակերպումից բխում է, մեր տեսակետից, միակ հնարավոր բնորոշումը կամ, ավելի հստակ, բանաձևը՝ «Մշակույթը հավասար է ազատություն+ստեղծագործություն»:

Մարդ արարածի ոչնչով չսահմանափակված ազատությունը դրսևորվում է նրա մտքերի, զգացմունքների, արարքների միջոցով, որոնց այն մասը, որը արարչական կարող է որակվել, քանի ազատ կամքի ստեղծագործական դրսևորումը մարմնավորվում է նորարարության մեջ, դառնում է մշակույթի փաստ (ընդ որում այս պարագայում դեռևս չկան գնահատականներ, առժեքային մոտեցում դեռևս չի ձևակերպվել): Ստեղծվում է ամեն ինչ՝ առանց բաղդատելու լավը և վատը, չարը և բարին. սուր քարը օգտագործվում է և տանիքի համար փայտ տաշելու և մերձավորին սպանելու նպատակով, շղթայական ռեակցիան՝ միջուկային էներգիա և միջուկային ռումբ ունենալու համար:

Եվ մոննեական իմաստով քաղաքակրթությունը հաստատում է այն կանոնները,<sup>2</sup> որոնք արգելում են մերձավորին սպանել, և ստեղծում է այն ինստիտուտները, որոնք հետևում են նրան, թե ինչպես է այս կանոնը իրականացվում: Փաստորեն, որոշակի հակասություն է ծագում սահմանումների մեջ, եթե հիշենք հեգելյան «ազատությունը գիտակցված անհրաժեշտություն է» ձևակերպումը: Բանն այն է, որ կանոններով սահմանափակվող ազատությունը<sup>3</sup> հենց այն «գիտակցված անհրաժեշտությունն» է, որի մասին և ասում է գերմանական դասական փիլիսոփայությունը, որն այս դեպքում խնդիր չունի տարբերակելու քաղաքակրթությունը մշակույթից: Ստացվում է, որ մշակույթի կարևորագույն պայմանն է անսահմանափակ ազատությունը:

Էմիլ Բենվեդեիստը «Հնդեվրոպական սոցիալական եզրերի բառարանում» գրում է, որ չնայած բոլոր հնդեվրոպական ժողովուրդների համար բնորոշ է «ազատ մարդ – ստրուկ» հակադրությունը, այնուամենայնիվ «ազատություն» ընդհանուր հասկացությունը բնորոշող եզր նրանք չունեն:

<sup>2</sup> Իմ կարծիքով, այստեղ շատ տեղին են Մաքիավելլիի հետևյալ խոսքերը. «Մարդիկ լավ են վարվում միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է, իսկ երբ նրանք հնարավորություն են ստանում վարվել իրենց ուզածով, ապա անմիջապես ծագում են մեծագույն խռովություններ և անկարգություններ»:

<sup>3</sup> Հիշենք նաև Բ.Մպինոգայի սահմանումը. «Ազատ է կոչվում այն բանը, որը գոյություն ունի միայն իր սեփական էության անհրաժեշտությամբ և գործողության է մղվում միայն ինքն իրենով: Անհրաժեշտը, իսկ ավելի ճիշտ կլիներ ասել՝ ստիպվածը այն է, ինչ դրվում է գոյության և գործողության այլ միջոցով հայտնի և որոշված ձևով»:

Հին հունարենում և լատիներենում մարդու ազատ լինելը բխեցվում էր նրա արյունակցական կապերով պայմանավորված սոցիալական պատկանելությունից: Հռոմեացիք կոչում էին օրինական զավակներին *liberi*, այսինքն՝ նրանց համար օրինական զավակ լինելը և ազատ լինելը նույն բանն էր նշանակում: Մարդը, ըստ նրանց, ծնվում է ազատ կամ ստրուկ, ազատը տեղ է, ազատությունը տիրակալություն, իշխանություն:

Գերմաներենում, համաձայն Է. Բենվեդենիստի, հստակ է կապը *frei* (ազատ) և *Freund* (ընկեր, բարեկամ) բառերի միջև, ինչը թույլ է տալիս վերականգնել «ազատություն» հասկացության նախնական իմաստը. այն ըմբռնվում էր որպես պատկանելություն մարդկանց սահմանափակ խմբի, որոնք շփվելիս իրար «ընկեր» էին անվանում: Այս խմբի անդամ լինելով մարդը ոչ միայն ազատ էր, այլ նաև անձնավորություն էր, որը որպես այդպիսին ճանաչվում էր յուրայինների կողմից, և, այսպիսով՝ ինքն էլ յուրային էր:

Այստեղից բխում է անազատության երկրորդ սոցիոմշակութային ըմբռնումը. անազատ է այն ամենը, ինչը օտար է, դուրս է յուրայինների շրջանակից, հետևաբար՝ թշնամական է, անձից, էությունից գուրկ:

Հասկանալի է, որ ազատություն/անազատություն հասկացությունների հիմքում ընկած «օտար-յուրային», «ընկեր-թշնամի» օպոզիցիան հատուկ է գրեթե բոլոր մշակույթներին: Հասկանալի է նաև, որ այն, ինչը օրենք է և պարտադիր յուրայինների խմբի շրջանակներում, չի գործում օտարների հետ հարաբերվելիս: Այստեղից բխում է բարոյական նորմերի գործադրման սահմանների ընկալումը. դրանք ավելորդ են օտարների, թշնամիների, ստրուկների, անձից և էությունից գուրկ արարածների հետ հարաբերվելիս:

Այսպիսով, օտարը կամ անազատ է, կամ մեռած, իրական կամ պոտենցիալ, քանի որ այն հիվանդ է սարսափելի հիվանդությամբ. չի հավատում իսկական Աստծուն, չի ճանաչում աստվածային ճշմարտությունը, համառում է իր սոցիոտության մեջ, ուստի այն բարոյական նորմերը և օրենքները, որոնք կիրառելի են «առողջների», յուրայինների համար, այս դեպքում բացառվում են: Մակայն Հիսուսը Լեռան քարոզում ասում է. «Իսկ ես ասում եմ՝ սիրեք ձեր թշնամիներին»: Մա բոլորովին այլ սկզբունք է, որը օտարում է անազատության հասկացությունից տիրելու, իշխելու և ենթարկելու, ստրկացնելու սկզբունքը, սակայն պահպանում է «օտար-յուրային» հակադրությունը, փոխելով երանգավորումը «թշնամի» հասկացության մեջ: Հիմքն, այստեղ, հավանաբար այն է, որ հավատացյալ քրիստոնյան ենթակա է միայն Բարձրային և կատարում է միայն նրա հաստատած օրենքը: Ինչ վերաբերում է «թշնամիներին», ապա նրանք ևս Նրա արարածներն են և իրենց մեջ ունեն Արարչի շունչը, ուստի հենց այդ շունչը անհրաժեշտ է սիրել: Աստիճանաբար մարդը, մշա-

կելով և զարգացնելով հասարակական վարքագիծը պայմանավորող բարոյական կանոնները և էթիկական նորմերը, հեռանում է իր բնությանը հատուկ բնագոյներից՝ վտարելով, ինչպես Ֆ. Նիցշեն էր գրում, «բարոյականությունից բնությունը»:

Լեռան քարոզով ձևավորված ազատության այս նոր ըմբռնումը դարեր շարունակ պայքարում է անազատության դեմ: Որքան ավելի միասնական ու գլոբալ է ընկալվում աշխարհը, այնքան ավելի արդիական հնչեղություն է ստանում այս պայքարը: Այն հասարակությունները, որտեղ անազատությունը նորմ է, իսկ ազատությունը՝ լուսանցքային, աչքի են ընկնում իրենց քաղաքականացվածությամբ, ինչը բխում է «օտար-յուրային» արխայիկ հասկացության՝ նման հասարակություններում արմատացած լինելուց:

Դա արգելում է իրական զարգացման հնարավորությունները և ստիպում է անազատներին տեր որոնել իրենց համար՝ նվիրվելով օտար աստվածներին և նրանց հետ կապված սակռալացված արժեքները դավանել:

Համաձայն Կ. Յասպերսի, պատմության՝ մարդկությունը միասնական ընդհանրության մեջ միավորող արմատները և նպատակը հավաստիորեն հայտնի չեն: Դրանք անմիջականորեն ընկալելի են դառնում միայն «բազմանշանակ խորհրդանիշների ծողծողանքի միջոցով»: Նրա համար պատմության միասնականությունը «փիլիսոփայական հավատի»<sup>4</sup> առարկա է: Կ. Յասպերսը ձևակերպել է մարդկության պատմության «առանցքային ժամանակի» (մ.թ.ա. 800–200 թթ.) մասին տեսությունը, ըստ որի, այս ժամանակաշրջանում տարբեր աշխարհամասերում և մշակույթներում զուգահեռաբար ստեղծվում և ձևավորվում են հզոր հոգևոր շարժումներ՝ Չինաստանում գործում են Կոնֆուցիոսը և Լաո Ցզին, Հնդկաստանում՝ Բուդդան և Ուպանիշադաների ստեղծողները, Իրանում՝ Զրադաշտը, Պաղեստինում աստվածաշնչյան մարգարեները, Հունաստանում՝ փիլիսոփաները և ողբերգակները: Կ. Յասպերսն ասում է, որ այս ամենը մեկ ընդհանուր հոգևոր գործընթացի տեղայնացում է, իսկ «առանցքային ժամանակի» հիմնական հատկանիշն է դիցաբանական աշխարհայեցողության նահանջը:

Հետաքրքիր է, որ հունական մեծագույն հերոսներից մեկի՝ Պերիկլեսի ամենամտերիմ բարեկամը փիլիսոփա Անաքսագորն էր, որը, ըստ Ա. Լոսնի՝ «հաղթահարում է մաքուր, անմիջական և ամբողջական դիցաբանությունը՝ պայքարելով վերջինիս անտրոպոմորֆիզմի դեմ»: Անաքսագորի գաղափար-

<sup>4</sup> Շատ հակասական ձևակերպում է:

ները լուրջ ազդեցություն են ունեցել Պերիկլեսի աշխարհայեցողության վրա, ինչն անմիջականորեն արտահայտվել է վերջինիս իրականացրած քաղաքականության մեջ:

Նրա նախորդի և հիմնական հակառակորդի՝ Կիմոն Աթենացու՝ Ժամանակակից եզրերով ձևակերպած արտաքին քաղաքական հիմնադրույթն էր համահունական, հելենական դաշինք ընդդեմ Պարսկաստանի: Ներքին քաղաքականության մեջ Կիմոնը ազնվականների կուսակցության առաջնորդն էր:

Պերիկլեսի համար հիմնական թշնամին Սպարտան էր՝ «ամաքուր, անմիջական և ամբողջական դիցաբանության մարմնավորումը», որի հզորությունը ընկալվում էր որպես Աթենքի գերակայության համար միակ իրական խոչընդոտ: Պերիկլեսը Աթենքի դեմոկրատների առաջնորդն էր:

Այս երկու հերոսների միջոցով մարմնավորվող ի՞նչ իրական քաղաքական հայեցակարգերի միջև էր գործնականում ընթանում պայքարը մ.թ.ա. 5-րդ դարում: Սպարտան Աթենքի միակ իրական մրցակիցն էր ցամաքում, Իրանը՝ ծովում:

Սպարտայի նկատմամբ հաղթանակը թույլ կտար Աթենքին տիրել ամբողջ Հունաստանում և նույնիսկ՝ ամբողջ թերակղզում, բայց և կվերացներ այդքան ատելի անտրոպոմորֆ աստվածների կամքից կախվածության ֆատալությունը: Այն ուղղված էր հունական պոլիսների նկատմամբ՝ Աթենքի որպես ամենահզոր պոլիսի (որը նաև ինքն իրեն գիտակցում էր որպես ամենաառաջադեմ և իսկական արժեքային համակարգի ստեղծող և կրող, աթենցիների տեսակետից ամենա զարգացած և արդար պետական-քաղաքակրթական կառույցների օրինակ), գերակայության հաստատմանը և միտված էր այդ ամենը պարսիկներից, որոնց հույները անվանում էին բարբարոսներ, հետո պահելու՝ սահմանափակելով բոլոր տեսակի շփումները նրանց հետ, ինչը, հավանաբար, բոլորովին էլ իրատեսական չէր, ինչպես նման բոլոր գաղափարները:

Կիմոնի տեսակետից, Աթենքի համար միակ իրական և վտանգավոր ախոյանը Իրանն էր՝ իր հզոր նավատորմով և բանակով, իր՝ Միջերկրականի ափերով տարածված նվաճված և ստրկացված երկրներով և ժողովուրդներով:

Աշխարհը սահմանափակվում է «քաղաքակիրթ տարածքով»՝ հունական պոլիսներ, այդտեղից հասանելի «քաղաքակրթված տարածքներ» և պարսիկ բարբարոսներով, որոնք քառսից, այսինքն՝ չկազմակերպված, «քաղաքակիրթ օրենքի» վրա չհիմնվող տարածքից ներխուժում են «քաղաքակիրթ տարածք»: Սակայն պարսիկները նույնպես հիմնվում են ինչ-որ օրենքի վրա, որը, հույների տեսակետից, վատն է, քաղաքակիրթ չէ, սակայն այնուա-

մենայնիվ օրենք է, ինչն էլ թույլ է տալիս նրանց ներխուժել (այս մտայնությամբ էլ նկարահանվել է նոր քաղաքական միտումներին համահունչ բրենդագովազային հովիվության ֆիլմը սպարտացիների մասին) «կոսմոս» հունական քաղաքակրթության աշխարհ:

Այս երկու հերոսների գործունեությունը համեմատելիս և Կ.Յասպերսի «առանցքային ժամանակը» մտքում պահելով, կարելի է ևս մեկ դիտարկում կատարել: Իր մարդակերպ աստվածներին հավատալով և ճակատագրին վստահելով՝ Կիմոնը համոզված էր, որ ոչ միայն բոլոր բարբարոսներին կհաղթի, այլ նաև, Պոսեյդոնի օգնությամբ և հունական նավատորմի շնորհիվ՝ իրեն կենթարկի ծովը, ինչին չեն կարող հասնել այլ, իր տեսակետից՝ կեղծ աստվածներին երկրպագող ժողովուրդները: Պերիկլեսի համար այդ աստվածները արդեն իրենցից չեն ներկայացնում ամենակարող և միայն իրար հետ մրցող ուժեր, նա հակված է անաքսագորյան «աստվածային բանակաւնության» հիման վրա գոյացած նոր, ավելի ամբողջական աշխարհընկալման և վերջինից բխող արժեքային համակարգի շնորհիվ ստեղծել այդ ամբողջականությունը արտահայտող հելլենական աշխարհ:

Մեկին հավատը և գաղափարը տանում է դեպի ծով, մյուսին՝ մայրցամաքի խորքերը: Երկուսի մղումն էլ մեկն էր՝ ավելացնել սեփական և «յուրայինների» ազատությունը օտարների հաշվին, որոնք ձեռք բերելով օրենք, այսինքն, քաղաքակիրթ դառնալով, փորձում են վերաձևել տիեզերքը, որի իրավունքը պատկանում է միայն ազատ, այսինքն՝ ի տարբերություն «վատ օրենք» ունեցող և այդ պատճառով անազատ պարսիկների, շատ ավելի «խսկական», բառիս բուն իմաստով, քաղաքակիրթ հույներին:

Մակայն այստեղ մի չափազանց վտանգավոր ծուղակ է թաքնվում՝ անվերջ ավելացնելով «յուրայինների» ազատությունը, ընդլայնվում է մշակույթի ոլորտը և այն սկսում է հաղթահարել քաղաքակրթական կանոնների և ինստիտուտների զսպող ուժը, ինչն իր կյանքով ապացուցեց Ալեքսանդր Մակեդոնացին: Քաղաքակրթական սանձերը միշտ ենթարկվում են ագրեսիվ ճնշման այն անձանց կողմից, որոնք, Ստրուգակի եղբայրների արտահայտությամբ՝ «տարօրինակ էին ցանկանում»: **Sup-օրինակ**, այսինքն՝ օրենքից տարբերվող, կանոններից և ինստիտուտներից փախչող:

Այս ձգտումը որքան որ բնական է, այնքան էլ վտանգավոր, քանի որ մղում է դուրս գալ անվտանգության մինիմալ կամ մաքսիմալ սահմաններից:

Տերնան Բրոդելը իր «Միջերկրական ծովը և Միջերկրական աշխարհը Ֆիլիպ II-ի դարաշրջանում» աշխատության մեջ այսպես է գրում հայերի մասին. «Նույնիսկ այնպիսի մայրցամաքային, այնպիսի բոլոր կողմերից փակված երկիր, ինչպիսին Հայաստանն էր, չկարողացավ խուսափել այդ բոլոր լեռնային տեղանքների համար անողորմ ճակատագրից (բնակչության զանգ-

վածային արտագաղթից՝ Դ.Հ.)... Անվիճելի է, որ հայերի սփռումը տեղի էր ունենում Պոլսի, Թիֆլիսի, Օդեսայի, Փարիզի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների ուղղությամբ. Հայ սփյուռքը մեծ լումա ուներ 17-րդ դարի սկզբին Շահ Աբբասի Մեծ Պարսկաստանի զարգացման գործում. բացի այլ բաներից, այն մատակարարում էր նաև դրա համար անհրաժեշտ նեզոցիանտներ, որոնք այդ ժամանակներում իրենց ուղևորությունների ընթացքում հասնում էին Գերմանիայի տոնավաճառներ, վենետիկյան ծովափնյա փողոցներ և Ամստերդամի առևտրական ընկերություններ: Նրանց նախորդները, որոնք փորձել էին նման կապեր հաստատել, հաջողության չհասան»:

Ֆ.Բրոդելը բացատրում է այս ոլորտում հայերի հաջողությունը հետևյալ պատճառներով. «Հայերը հաջողության հասան մասամբ այն բանի պատճառով, որ քրիստոնյա էին, բայց հիմնականում՝ շնորհիվ ջանասեր աշխատանքի, համառության, իսկական սարեցիներին հատուկ զուսպ բնավորության և պահանջկոտ չլինելուն:... Չուֆայում (Չուֆա՝ Դ.Հ.), Իսֆահանում գտնվող հարուստ հայկական գաղութում գտնվող իրենց տներում նրանք մեծ կարողություններ են կուտակում դրամով, ինչը նրանց թույլ է տալիս վարել նույնպիսի ցով կյանք, ինչպես պարսիկները, իրենց կանանց հագցնել վենետիկյան փարջա, իսկ իրենց ձիերին զարդարել արծաթե սանձերով»:

Հեղինակը նշում է, որ այդ ուղղությունը միակը չէր այդ ժամանակաշրջանի հայ վաճառականների համար. «Նրանք կարողանում են երկու խաղատախտակների վրա խաղալ և, չբավարարվելով Եվրոպայով՝ առևտրական գործունեություն վարել Հնդկաստանի, Տոնկինի, Ճավայի, Ֆիլիպինների և «Չինաստանից ու Ճապոնիայից բացի, ամբողջ Արևելքի հետ»:

Ֆ.Բրոդելը հայերին նվիրված այս մասը եզրափակում է մի շատ հետաքրքիր և մեր օրերում նույնպես արդիական դիտարկումներով. «16-րդ դարի վերջի և 17-րդ դարի սկզբի այս արտագաղթով է բացատրվում վենետիկյանին նման հայաստանյան Ռենեսանսը: Բայց արդյո՞ք սահմանված եզրերից նման դուրս գալը, որքան բարեբեր, այնքան էլ կործանարար, պատճառը չէր այն իրողության, որ արդեն 14-րդ դարից սկսած Հայաստանում դադարեց ոչ միայն պետության ձևավորումը, այլ ընդհանրապես՝ բարձր ներուժ ունեցող սոցիալական միջավայրի»:

Չխորանալով 16-17 դարերի պատմական իրադարձությունների մեջ, նշենք միայն, որ ֆրանսիացի գիտնականի դիտարկումը մեզ համար չափազանց արժեքավոր է, որովհետև սահմանում է մի հասկացություն, որը որքան էլ միշտ «անոքսալի» է թվացել, սակայն միշտ իրեն զգացնել է տվել:

Այդ հասկացությունը Ֆ.Բրոդելը անվանում է «սահմանված եզրեր», այսինքն՝ այն սահմանները, որտեղ հասարակությունը համեմատաբար ան-



վտանգ է և որոնցից դուրս ավարտվում է «պետության և «բարձր ներուժ ունեցող սոցիալական միջավայրի ձևավորումը»:

Մի քանի կրեատիվ խաղերի ժամանակ տարբեր սոցիումներում (հայկական, հարավօտսական, վրացական, արխազական) ձևակերպվել են «ազգային անվտանգության մինիմալ և մաքսիմալ մակարդակներ» հասկացությունները: Մինիմալից ներքև իջնելը նշանակում է հասարակության քայքայում, սակայն նաև մաքսիմալ մակարդակից դուրս գալը նույնպես հղի է նույն հետևանքներով:

Հիմնականում այդ մակարդակների փոփոխությունը բնութագրվում է որպես երկու տիպի գործընթացների ազդեցություն՝ հասարակության մեջ տեղի ունեցող՝ ներքին և դրսից եկող՝ արտաքին:

Երկու հիմնական գործընթացները, որոնք ազդում են անվտանգության մակարդակների փոփոխման վրա ավելի ճիշտ է բնութագրել որպես քաղաքակրթական և մշակութային:

Քաղաքակրթական գործընթացները հիմնականում կապված են քաղաքակրթական հոսանքի հետ, որը արտաքին աշխարհից ներթափանցում է հասարակություն՝ փոփոխելով վերջինիս կյանքը, ձևավորելով նոր գործոններ, որոնք էական են դառնում տվյալ հասարակության համար, քանի որ ստեղծում են հասարակության ներսում այնպիսի կառույցներ, նորմեր և արժեքներ, որոնք թույլ են տալիս հեշտ ադապտացնել ներթափանցող տարրերը:

Որոշ դեպքերում քաղաքակրթական հոսանքը իր հետ բերում է (և հենց դրանցով էլ ներկայանում է) մշակութային նորմեր և արժեքներ: Սակայն այդ նորմերի և արժեքների ադապտացումը տեղական միջավայրում անհնար կլինի, եթե այն նախապատրաստված չլինի քաղաքակրթական արդյունքի թափանցմամբ:

Միաժամանակ որպես քաղաքակրթական արդյունք հասարակություն են թափանցում գիտելիքներ, մասնագիտություններ, արհեստներ, արվեստներ և այլն: Այս ամենը կարող է ընկալվել կամ ամբողջովին՝ հիմքային գիտելիքով, ինչը թույլ է տալիս արդեն հասարակության ներսում այն կիրառել ֆունդամենտալ ոլորտում և ֆունդամենտալ կերպով, կամ մասնակի՝ միայն որպես հավաքելու, նորոգելու՝ փչացած մասը փոխելով, այսինքն մոտավորապես անել այն, ինչն անում է երեխան՝ սենյակում լույսը վառելիս, քանի որ նա հասկանալի պատճառներով չգիտի էլեկտրական հոսանքի մասին:

Կա նաև երրորդ տարբերակը՝ չընդունել, փորձել ստեղծել փակ հասարակություն: Այդպես էր անում Սառույան Արաբիան՝ արգելելով ռադիոհաղորդումները, իսկ հետո հեռուստատեսությունը: Նման կերպ էր վարվում Խորհրդային Միությունը, որի ներուժը թույլ էր տալիս երկար դիմակայել քա-

ղաքակրթական հոսանքին: Սակայն նույնիսկ այդ հզոր կառույցը փլվեց՝ փորձելով դիմադրել ժամանակի ոգուն:

Ներկայումս, երբ աշխարհը ապրում է գերիշխող ինֆորմացիոն քաղաքակրթության հարթության մեջ, նման փորձերը ընդհանրապես դատապարտված են, ուստի դիմակայելու միակ ձևն է՝ հզորացնել սեփական հասարակության արտահոսեցրած քաղաքակրթական հոսանքը:

Մշակութային գործընթացները, ընդհակառակը, զարգանում են հասարակության ներսում և միտված են պաշտպանելու այն՝ դրսից եկող քաղաքակրթական հոսքից և զարգացնելու իրեն հատուկ արժեքային համակարգը: Որքան ավելի ամբողջական և փոխկապակցված են արժեքային համակարգի տարրերը, որքան ավելի մեծ տարածում ունի որպես համակարգի հիմք տվյալ հասարակության հիմնարար արժեքը, այնքան ավելի կուռ են ավանդույթները և մշակութային նորմերը և բարձր է անվտանգության մակարդակը:

Ժամանակակից աշխարհում մշակույթը պետք է ունենա նաև բարձր աղապտացիոն հնարավորություններ, ինչը հասանելի է, եթե արժեքային համակարգը պարունակում է այնպիսի տարրեր, որոնք թույլ են տալիս, ինչպես ձևակերպել է Մ.Բախտինը, «յուրացնել ուրիշինը առանց սեփականը դարձնելու»:

Որպես օրինակ կարելի է բերել ճապոնական մշակույթը, որը բաց լինելով արտաքին քաղաքակրթական հոսանքի համար, պաշտպանված է իր արժեքային համակարգի տեսակետից:

Այսպիսով, Ֆ.Բրոդելի նշած «սահմանված եզրեր» հասկացությունը գծում է հասարակության երկու անվտանգության սահման.

ա) այն չպետք է այնքան ընդլայնվի քաղաքակրթական առումով, որ ճնշվի իրեն հատուկ մշակույթը,

բ) այն չպետք է այնքան սեղմվի մշակութային առումով, որ թույլ չտա քաղաքակրթական արդյունքի ներթափանցումը հասարակության մեջ:

Տարբեր են պետության և հասարակության դիրքորոշումները վերը նշված երկու գործընթացների վերաբերյալ: Պետությունը իր գործառույթներն իրականացնելու համար ստիպված է անընդհատ ձգտել ընդլայնելու իր հնարավորությունները և ռեսուրսները: Այդ իսկ պատճառով այն մշտապես միտված է այնպիսի գործողությունների, որոնք կարելի է բնորոշել որպես էքսպանսիա: Ընդ որում, պետության կողմից էքսպանսիան իրականացվում է թե՛ դեպի դուրս՝ արտաքին աշխարհի նկատմամբ, և թե՛ դեպի ներս՝ իր քաղաքացիների իրավունքների նկատմամբ:

Պետությունը ներսում ընդլայնում է իր տիրույթը հասարակության հաշվին: Երկրից դուրս այն ընդլայնվում է ոչ միայն տարածքային առումով,

այլ մեծացնելով իրեն հասանելի հումքային ռեսուրսների, այդ ռեսուրսները տեղափոխելու համար ծառայող ենթակառուցվածքների, այդ ամենի հսկողությունը ապահովող կառույցների դաշտը:

Այստեղ ևս կան սեղմվելու մինիմալ և ընդլայնվելու մաքսիմալ սահմանները, որոնց հատումը հանգեցնում է պետության քայքայմանը և ձևափոխմանը:

Արտաքին էքսպանսիայի համար թույլատրելի հնարավոր մաքսիմալ սահմանն անցնելու դասական օրինակ է նապոլեոնական Ֆրանսիայի 19 դ. սկզբի ընդլայնումը, ինչը հանգեցրեց կատաստրոֆիկ պարտության և պետության քայքայման և ձևափոխման: Որպես դասական օրինակ, այն տալիս է պետության համար կործանարար այդ գործընթացների հիմնական հատկանիշները:

Որպես կանոն, երկրի ներքին ռեսուրսները մոբիլիզացնելու համար անհրաժեշտ է այս կամ այլ չափով կենտրոնացնել ղեկավարումը մի կենտրոնում, ինչը կարող է արտահայտվել շատ տարբեր ձևերով՝ արևելյան դեսպոտիայից կամ ամբողջատիրությունից մինչև ընդգծված կառավարման կենտրոն ունեցող ժողովրդավարություն:

Երկրորդ քայլն է՝ նախահարձակ գաղափարախոսության ձևավորումը, ինչը բոլոր դեպքերում էլ կապված է սեփական արժեքային համակարգի գերազանցության և բացարձակության ընկալման հետ, ինչն ինքնըստինքյան բերում է այդ արժեքների արտահանման, տարածման, պարտադրման մտքին:

Արժեքների արտահանման խնդիրը լուծվում է կամ ուղղակի ռազմական ագրեսիա իրականացնելով, կամ էլ շեշտը դնելով քաղաքակրթական արդյունքի արտադրանքի և արտահանման ընդլայնման վրա, այսինքն կատարելով այն, ինչը եզրիպտացի մեծատաղանդ գրող Յուսուֆ Իդրիսը անվանում էր «ալ-դավլ աւ-սակաֆի» (մշակութային ագրեսիա):

Արտագաղթը, որի կապակցությամբ Ֆ.Բրոդելը արտահայտում է քննարկվող միտքը, դիտարկվող խնդրի կտրվածքով ունի երկու հիմնական հատկություն: Առաջինը խիստ բացասական է այն հասարակության և պետության համար, որից արտագաղթում են, որովհետև երկրից դուրս է գալիս առավել դինամիկ և պահանջարկ ունեցող մասը, ինչի հետևանքով հասարակության ներսում պակասում է ստեղծագործական ներուժը, կտրվում են ձևավորված կապերը, որոնց շնորհիվ այն կայուն էր, բարոյականությունը անկում է ապրում, իսկ արժեքային համակարգը ձեռք է բերում վտանգավոր ֆրագմենտարություն, երբ չկա մեկ կամ մի քանի հիմնարար արժեքներ, որոնց շուրջը մարդիկ համախմբվում են:

Երկրորդ հատկությունը կապված է քաղաքակրթական հույսի ազդեցության մեծացման հետ, քանի որ մեծ զանգվածի դուրս գալով (սլայմանով, որ կապը հասարակության հետ պահպանվում է) ընդլայնվում է քաղաքակրթական արդյունքի ներթափանցման խողովակը: Բացի այդ, այն հենց սկզբից ձեռք է բերում տվյալ հասարակությանը ծանոթ պատկեր, քանի որ թափանցում է ծածկված տեղական մշակութային շղարշով: Հարկ է նշել, որ այն դեպքում, երբ քաղաքակրթական արդյունքը կապված է ֆունդամենտալ հասկացությունների հետ, այլ ոչ թե դրանց վերջնական արդյունքի, այն կարող է լուրջ դրական ներգործություն ունենալ հասարակության ադապտացիոն հնարավորությունների զարգացման վրա:

Առավել վտանգավոր են այն դեպքերը, երբ դինամիկ և ստեղծագործական ներուժ ունեցող խմբերը՝ հաջողության հասնելով բնակության նոր վայրում, ձգտում են իրենց նոր ձեռք բերած արժեքների համաձայն վերափոխել իրենց նախկին հասարակության մշակութային նորմերը և արժեքները:

Բոլոր դեպքերում վերը շարադրվածից հասկանալի է, որ լավագույն տարբերակը հերթական անգամ կապված է «ոսկե միջին» տրիվիալ թվացող հասկացության հետ: Եթե պետությունը և հասարակությունը գիտակցում են հարցի այսպիսի ձևակերպումը, ապա նրանք հնարավորություն են ձեռք բերում մոդելավորելու իրենց համար առավել ձեռնտու տարբերակը, որի շնորհիվ լուծելի են դառնում ժամանակակից քաղաքակրթական համակարգին (կանոններ+ինստիտուտներ) ադապտացվելու խնդիրները՝ հիմնվելով սեփական մշակույթի վրա (ազատություն+ստեղծագործություն):

Հայաստանի դեպքում, իմ կարծիքով, այդ տարբերակը կայանում է հայաստանակենտրոն Ցանցապետության ստեղծման մեջ:

**Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում»  
կուսակցության և նաքշբանդիա սուֆիական տարիկաթի  
փոխհարաբերությունների շուրջ**

*Քարտաշյան Ա., Մարտիրոսյան Ա.*

*«Հոգևոր առաքելությունն իրագործելու համար պետք է քաղաքական  
իշխանություն ունենալ»:  
Ուրայդալլահ Ահրար (1400-1490)*

Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության (Adalet ve Kalkınma Partisi) (այսուհետ՝ ԱԶԿ) և տարբեր սուֆիական տարիկաթների<sup>1</sup> կապը մշտապես քաղաքական շահարկումների առարկա է եղել: 2009 թվականի նոյեմբերի 16-17-ին թուրքական մի շարք թերթերում և ինտերնետային կայքէջերում հայտնվեցին տարբեր վերնագրերով, սակայն նույն բովանդակությամբ հոդվածներ, որտեղ թվարկված էին պետական և քաղաքական այն գործիչների անունները, որոնք պատկանում են այս կամ այն սուֆիական տարիկաթին<sup>2</sup>: Պետք է նշել, որ թուրքական մամուլը ժամանակ առ ժամանակ անդրադարձել է այս հարցին՝ այն որակելով որպես հեռացում Քեմալ Աթաթուրքի որդեգրած լաիցիզմի սկզբունքներից: Որքան որ տարօրինակ է՝ կուսակցությունը երբևէ հակառակ պնդումներով հանդես չի եկել: Միայն վերջերս մամուլում լույս տեսան այն ընդդիմադիր թերթերի և կայքէջերի անունները, որոնք զբաղվում են կառավարության սև PR-ով<sup>3</sup>:

Այնուհանդերձ, հեռացել է արդյոք «Արդարություն և զարգացում» կուսակցությունն իսլամական արմատներից, հիմնավորվա՞ծ են արդյոք այն պն-

<sup>1</sup> Տարիկաթ տերմինն առաջացել է դեռևս 9-րդ դարում և ենթադրել տարբեր բարոյաև հոգեբանական մեթոդներ, որոնց օգնությամբ սուֆի կարող էր հասնել իր վերջնական նպատակին, այն է՝ անէանալ աստծո մեջ: Աստծուն միաձուլվելու գերագույն միստիկական վիճակը կոչվում էր հալ: Տարիկաթը բաղկացած էր 7 կանգառներից, որոնք կրում էին մական անվանումը: Այդ մականներից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում էր տվյալ փուլին հատուկ հոգեկան վիճակ (Бергелъс Е. Э., Происхождение суфизма и зарождение суфийской литературы, <http://farhang-alskia.narod.ru/karbin/suf7.html>) (12.10.2009):

<sup>2</sup> Պետական և քաղաքական գործիչների ցուցակի մասին ավելի մանրամասն տե՛ս. <http://www.evrensel.net>, <http://www.iyibilgi.com>, <http://www.yenisafak.com.tr>, <http://www.adanamedya.com>, <http://www.tevhidhaber.com> [http://209.85.135.132/search?q=cache:cz2POisX10sJ:home.arcor.de/sinansahin/dede\\_docs/012004/hukumetkadrotarkat.htm+MEHMET+AL%C4%B0+%C5%9EAH%C4%B0N%E2%80%99+ve+naksibendi&cd=1&hl=en&ct=clnk&client=firefox-a](http://209.85.135.132/search?q=cache:cz2POisX10sJ:home.arcor.de/sinansahin/dede_docs/012004/hukumetkadrotarkat.htm+MEHMET+AL%C4%B0+%C5%9EAH%C4%B0N%E2%80%99+ve+naksibendi&cd=1&hl=en&ct=clnk&client=firefox-a) (20.12.2009):

<sup>3</sup> <http://www.vakithaber.com>, <http://www.bugun.com.tr>, <http://www.yenisafak.com.tr>

դումները, թե կուսակցության գործունեությունը հակասում է լաիցիզմի սկզբունքներին, որքանով են սուֆիական տարիկաթները՝ մասնավորապես նաքշբանդիա տարիկաթն, ազդում այս կուսակցության վարած քաղաքականության վրա:

Սուֆիզմն իսլամի շրջանակներում միատիկ, կրոնա-փիլիսոփայական աշխարհայացք է, որի հիմնական գաղափարը հոգևոր կատարելության հասնելն է, բացարձակի հետ միաձուլումը: Այդ շփումը կամ միաձուլումը տեղի է ունենում էքստազի կամ ներքին լուսավորման միջոցով, որը տրվում է միայն նրանց, ովքեր սիրով են գնում դեպի Աստված<sup>4</sup>:

Ըստ Տրիմինգեմի՝ սուֆիզմը զարգացման 3 շրջան է անցել: Սուֆիզմի սկզբնական փուլը Տրիմինգեմն անվանում է «սեփական հավատի արտահայտման բնական երևույթ... որպես հակակշիռ օրինականացված, հասարակայնացված կրոնի»: Երկրորդ փուլը՝ XII դարը, տարիկաթների ձևավորման ժամանակաշրջանն է, որոնց հիմքում ընկած է «առաջնորդ-աշակերտ» կապը, իսկ արդեն XV դարից սկսած թաիֆաների առաջացումը սուֆիզմի զարգացման վերջին փուլն էր: Այնուհանդերձ, Տրիմինգեմը կարծում է, որ թաիֆաների (կրոնական համայնք) առաջացումը հանգեցրեց սուֆիզմի անկմանը, միստիցիզմի հետ նմանությանը: Դրանից հետո սուֆիզմը կորցրեց իր ինքնատիպությունը և ի վերջո վերածվեց ժառանգաբար փոխանցվող հոգևոր իշխանության<sup>5</sup>:

XII-XIV դդ. ձևավորվեցին 12 հիմնական (ուսուլ) «մայր» տարիկաթներ, որոնք էլ հետագայում հիմք հանդիսացան և՛ նոր միստիկ փիլիսոփայական դպրոցների ստեղծման, և՛ սուֆիզմի տարածման համար: Այդ «մայր» տարիկաթներն են՝ ռիֆաիա, յասավիա, շազիլիա, սուհրավարդիա, չիշտիա, կուբրավիա, քադիրիա, բաղավիա, մաուլավիա, բեքթաշիա, խավատիա և նաքշբանդիա<sup>6</sup>:

Նաքշբանդիականությունը ձևավորվել է XIV դարի վերջերին Կենտրոնական Ասիայում՝ Թուրքեստանում, և անվանվել հիմնադրի՝ Բահա ադ-Դին Նաքշբանդիի անունով: XV դարից սկսած նաքշբանդիականությունը դարձավ ամենատարածված հոգևոր միաբանությունը՝ քաղիրիայից հետո: Իր գաղա-

<sup>4</sup> Тримингэм Дж. С., Суфийские ордены в исламе, с. 1, [http://www.koob.ru/books/islam/sufiyskie\\_ordeni\\_v\\_islame.zip](http://www.koob.ru/books/islam/sufiyskie_ordeni_v_islame.zip) (12.10.2009):

<sup>5</sup> Тримингэм Дж. С., նշվ. աշխ., էջ 2, 70-71:

<sup>6</sup> Ислам, Энциклопедический словарь, М. 1991, стр. 224.

փարախոսությամբ այն խիստ սուննիական է: Նաքշբանդիականության ծագումնաբանությունը մի կողմից հանգում է Աբու Բաքրին, իսկ մյուս կողմից՝ Ալի իբն Աբի Տալիբին և այն կոչվում է սիլսիլա ազ-գահաբ (ոսկե շղթա), ինչը նշանակում է, որ եղբայրությունը Մարգարեի հետ կապված է թե՛ հոգևոր (Աբու Բաքր), և թե՛ ֆիզիկական (Ալի իբն Աբի Տալիբ) կապով<sup>7</sup>:

Օսմանյան կայսրությունում տարածված էր նաքշբանդիականության միջինասիական ճյուղը, որը ստամբուլյան մեդրեսեններում տարածում գտավ մոլլա Աբդուլլահ Միմավիի քարոզների միջոցով: Նաքշբանդիականության աշխարհայացքը ձևավորվել է միջինասիական երկու միստիկ ուղղությունների՝ «չափավոր քաղաքային», որն իր արտացոլումն է գտել Աբդ ալ-Խալիկ ալ-Գիջդուվանիի ուսմունքում, և «քոչվոր թյուրքական» (Ահմադ ալ-Յասավի), որը թյուրքական ժողովուրդների շամանական հավատալիքների տարրեր էր պահպանել: Նաքշբանդիների միստիկ «ճանապարհը» բաղկացած է տասը կանգառներից՝ մակամներից: Այս տարիկաթի ծիսակարգի հիմնական բաղադրիչը լուռ զիքրն է (խաֆի)<sup>8</sup>: Աստծո անվան հիշատակումը մտքում (սրտում): Լուռ զիքրի հիմքում ընկած է շնչառությունը պահելու՝ շնչելու և արտաշնչելու հերթականության դիթմը՝ պահպանելով մարմնի պարտադիր դիրքը (նստել խաչած ոտքերով): Խմբակային զիքրը կատարվում է շեյխի դեկավարությամբ շաբաթական մեկ անգամ ուշ երեկոյան՝ հինգերորդ աղոթքից հետո<sup>9</sup>:

Նաքշբանդիա տարիկաթը տարբեր արտացոլումներով դրսևորվել է Թուրքիայի պատմության, մշակույթի, տնտեսության, քաղաքականության և այլ ոլորտներում: Չնայած սուֆիական այլ տարիկաթների նման այս տարի-

<sup>7</sup> Միլսիլան (նշանակում է «շղթա») միստիկ ուղու «հոգևոր հաջորդականության շղթան», անխախտ ծագումնաբանական հոգևոր հաղորդիչների հատուկ համակարգն է իրեն յուրահատուկ ուսուցմամբ (ֆիզիկական և միստիկ վարժությունների նորմերով), պրակտիկայի առանձնահատկություններով (զլխավորապես զիքր), ծիսակարգով, ինչպես նաև համապատասխան կյանքի ձևով: Նաքշբանդիների մոտ շղթայի առաջին մասը (մինչև հիմնադիրը) կոչվում է սիլսիլաթ աոտ-տարբիխա (դաստիարակության շղթա), իսկ երկրորդը՝ սիլսիլաթ ազ-գահաբ (ոսկե շղթա) (մինչև Մուհամեդը), իսկ նրանց օղակները՝ շույուխ սոտ-տարբիխա (դաստիարակության ուսուցիչներ) (Ислам, Энциклопедический словарь, стр. 209):

<sup>8</sup> Զիքրը (բառացի հիշատակում) հոգևոր վարժություն է, որի նպատակն է զգալ Աստծո գոյությունը սեփական եսի մեջ: Այն Աստծո անվան դիթմիկ հիշատակումն է (թեմնեմիա) հոգևոր կենտրոնացման հասնելու համար: Գոյություն ունի զիքրի մի քանի տեսակ՝ զիքր ալ-ավքաթ՝ ամենօրյա հաստատված հիշատակում, զիքր ջահրի կամ ջալի՝ բարձրաձայն հիշատակում, զիքր ալ-հադրա՝ խմբակային աղոթք, զիքր խաֆի՝ անձայն աղոթք (Тримингэм Дж. С., նշվ. աշխ., էջ 220):

<sup>9</sup> Ислам, Энциклопедический словарь, նշվ աշխ, էջ 188:

կաթը ևս ենթարկվել է պետության կողմից պարտադրված աշխարհիկացման ճնշումներին<sup>10</sup>, սակայն կարողացել է պահպանել իր գոյությունը: Հակառակ ճնշումներին՝ տարիկաթների մեծ մասը հետզհետե դուրս են եկել միայն կրոնական միություն լինելու շրջանակից՝ վերածվելով ոչ պաշտոնապես միմյանց հետ մրցող, կրոնական հենքի վրա կրթական և մշակութային գործունեություն իրականացնող միությունների:

Նաքժբանդիա տարիկաթը վերջին տարիներին հետզհետե հզորացող աշխարհիկ հուզումների պատճառով ներքին փոփոխություններ է կրել: Տարիկաթը որոշակի չափով աշխարհիկացվել է, կրոնական տեսակետները վերածնակվել են՝ ըստ նյութական հետաքրքրությունների:

Նաքժբանդիա տարիկաթի՝ մասնավորապես Հալիդիե թեքեի օրինակով Հաքան Յավուզի ուսումնասիրությունը հանգեցնում է երեք մոտեցման. առաջինը այն է, որ նաքժբանդիան քաղաքականության ոլորտում սուֆիական տարիկաթներից ամենակտիվն է և իրականում Թուրքիայում բոլոր հիմնական արդի իսլամական սոցիալ-քաղաքական շարժումների համար յուրատեսակ մոդել է: Երկրորդ՝ տարիկաթը Թուրքիայում քաղաքականության և կրոնի միջև սոցիալական փոխներգործությունը հասկանալու ամենակիրառելի եզրն է, և վերջապես նաքժբանդիա տարիկաթը պետության և երեք փոխներգործուն ձևերի (բախում, ներգրավում և համաձայնություն) այս օրինակով մեծ դեր է խաղացել Թուրքիայում իսլամական անհատականության զարգացման գործում<sup>11</sup>:

Նաքժբանդիա տարիկաթը յուրատեսակ կամրջի դեր է կատարում Օսմանյան ժամանակաշրջանի և ժամանակակից իսլամական սոցիալ-քաղաքական դրսևորումների միջև: Այս տարիկաթն ընկալումների փոփոխման, սոցիալական նորմերի անցումներն իրականացնելու գործում հզոր սոցիալական և կրոնական ցանց է ձևավորել:

Թեև 1925 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 677 օրենքով սուֆիական միաբանությունների գործունեությունը երկրում արգելվեց, նաքժբանդիան դարձավ ընդհատակում գործող ամենաազդեցիկ միաբանություններից մեկը: 1952 թվականին վերջինիս առաջնորդ Աբդուլազիզ Բեքինեի մահից հետո նոր

<sup>10</sup>Չնայած սահմանափակումներին՝ 1924-1938 թթ. ընթացքում Քեմալ Աթաթուրքի՝ աշխարհիկ պետություն ստեղծելու քաղաքականության դեմ 18 ապստամբություն է բարձրացվել, որոնց մեծ մասը կազմակերպել է նաքժբանդիա տարիկաթը: Այդ ապստամբություններից հատկանշական են Շեյխ Սաիդի (1925 թ.) և Մենեմեն (1930 թ.) ապստամբությունները (M.Hakan Yavuz, Modernleşen müslümanlar: Nurcular, Nakşiler, Milli Görüş ve AK Parti, İstanbul, 2005, s.189):

<sup>11</sup> M. Hakan Yavuz, Modernleşen müslümanlar: Nurcular, Nakşiler, Milli Görüş ve AK Parti, İstanbul, 2005, s. 181:



ղեկավար ընտրվեց Ստամբուլի Ֆաթիհի շրջանի Իսքենդերփաշա մզկիթի իմամ Մեհմեդ Զահիդ Քոթթուն (1897-1980թթ.): Նրա անմիջական նախաձեռնությամբ ու հոգևոր առաջնորդությամբ երկրի քաղաքական թատերաբեմ մուտք գործեցին այնպիսի առանցքային դեմքեր, ինչպիսիք էին Թուրգութ և Քորքուդ Օզալները, Նեջմեթին Էրբաքանը, Ֆեհիմ Ադաքը, Հասան Աքսայը, Ռեջայի Քուրանը, Ջևաթ Այիհանը, Թեմել Քարամուլլաօղլուն, Հիլմի Գյուլլերը, Ռեջեփ Թայիփ Էրդոդանը և ուրիշներ: Քոթթուն համարվում է նաև «Ազգային տեսակետ» (Milli Görüş)<sup>12</sup> հայեցակարգի հիմնադիրը, ինչը 1960-1990-ական թթ. ընթացքում երկրում քաղաքական իսլամի հիմնադրման ու վերելքի համար ծառայեց որպես առանցքային գաղափարախոսություն<sup>13</sup>:

Նաքշբանդիա տարիկաթը Թուրքիայի սոցիալ-քաղաքական կյանքում ազդեցիկ ուժ դարձավ 1960 թվականի ռազմական հեղաշրջումից հետո: 1961 թվականի սահմանադրությունն որոշակի ազատություն շնորհեց տարբեր կազմակերպություններին, այդ թվում և սուֆիական տարիկաթներին, թեև նրանց գործունեությունը չօրինականացվեց:

1991 թվականի քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածը չեղյալ հայտարարվեց, որի հետևանքով սույն միաբանությունների գործունեությունը զգալիորեն դյուրացավ: 1995 թվականի ընտրությունների նախօրեին Թանսու Չիլլերը նրանց անուղղակի համագործակցության կոչ արեց: Սուֆիական տարիկաթները սկսեցին բացահայտորեն ակտիվ մասնակցություն ունենալ քաղաքական և սոցիալ-մշակութային գործընթացներին, թեև 1925 թվականի օրենքը տակավին ուժի մեջ էր: Վ. Տեր-Մաթևոսյանի կարծիքով, տարիկաթների

<sup>12</sup> «Ազգային տեսակետ» Եվրոպայում՝ գլխավորապես Գերմանիայում, թուրք էմիգրանտների կազմակերպություն է, որի հիմնադիրները Բարձրություն կուսակցության հիմնադիր անդամներն են: Պաշտոնապես հայտնի է որպես «Եվրոպայի ազգային տեսակետի կազմակերպություն» (The National Vision Organization of Europe, *Avrupa Milli Görüş Teşkilati*), որը վերանվանվել է «Իսլամական հասարակության ազգային տեսակետի կազմակերպության» (The National View Association of Muslim Community, *İslam Toplumunu Milli Görüş Teşkilati*). այն Գերմանիայում ամենամեծ մուսուլմանական կազմակերպությունն է: Երկու նպատակ է հետապնդում՝ զերծ պահել թուրք էմիգրանտներին արևմտյան քաղաքական և մշակութային ազդեցություններից, Թուրքիայում ստեղծել իսլամական պետություն, որի հիմքում ընկած կլինի շարիաթը: «Ազգային տեսակետ»-ի հիմքում ընկած են հինգ սյուներ՝ երկրի ներքին խաղաղություն, պետություն-ազգ միասնություն, «Մեծ Թուրքիայի» վերածնունդ, հոգևոր և տնտեսական վերելք (A. Birol, O. Mark, *The Milli Görüş (The National Vision [View])*, web.pdx.edu/~noordijk/Noordijk/...fils/THE%20MILLI%20GORUS.doc) (19.02.2010):.

<sup>13</sup> Վ. Տեր-Մաթևոսյան, Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, Երևան, 2008, էջ 40:

նպատակը գործող աշխարհիկ պետական համակարգին գաղափարական այլընտրանքի ստեղծումն էր: Այդ իսկ նպատակով մեծ թվով քեմալականների համար տարիկաթների գործունեությունն առավել վտանգավոր էր, քան կուսակցությունների ակտիվությունը<sup>14</sup>:

Այս պայմաններում կրոնական ուժերը կարողացան ստեղծել իրենց կուսակցությունները: «Ազգային կարգի կուսակցությունը» (Milli Nizam Partisi) Նեջմեթին Էրբաքանի գլխավորությամբ ստեղծված առաջին կրոնական կուսակցություններից էր, որի հիմքում ընկած էր նաքշբանդիա-նուրջու<sup>15</sup>-քադի-րիա տարիկաթների կոալիցիոն համաձայնությունը: Կուսակցությունն ուներ երեք պատգամավոր՝ Նեջմեթին Էրբաքան (նաքշբանդի), Հուսամեթին Աքմուջու և Հուսեին Աբբաս (նուրջու)<sup>16</sup>:

Թուրքիայի ռազմական ուժերը նպաստեցին երկրում քաղաքական իսլամի արմատականացմանը: Աջակողմյան և ձախակողմյան ուժերի հակամարտությունը 1970-ական թվականների վերջին երկիրը քաղաքացիական պատերազմի շեմին էր հասցրել: 1980 թվականի ռազմական հեղաշրջումից հետո կոմունիստական, նացիոնալիստական և ձախակողմյան ուժերի գաղափարախոսությանը հակակշիռ ստեղծելու նպատակով բանակը քայլեր ձեռնարկեց, որպեսզի ուժեղացնի իսլամի դերը երկրում: Բանակի ճնշման արդյունքում կրոնը պարտադիր ուսուցման առարկա դարձավ կրթական բոլոր հաստատություններում: Իրականում, բանակը նպատակադրվել էր Թուրքիայում հաստատել «Իսլամացում վերնից» պետական կառավարման համակարգ: Այս նոր թուրք-իսլամական սինթեզը պետք է թուրք հասարակությանը զերծ պահեր ռադիկալ-ձախակողմյան գաղափարների ազդեցությունից, ոչ թուրքական շրջաններում փոքրացներ Պակիստանի և Արաբական երկրների իսլամական գաղափարների ազդեցությունը. բացի այդ զինվորականությունն

<sup>14</sup> Վ. Տեր-Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 106:

<sup>15</sup> Նուրջուն (nurculuk կամ nur cemaati) հայտնի շարժում է, որը հիմնադրվել է Բեդիուզաման Մաիդ Նուրսիի (1876-1960) կողմից: Այս շարժումն ուներ բավականին ազդեցիկ գաղափարական ակունքներ՝ հիմնված Մաիդ Նուրսիի հանրահայտ «Լույսի ուղերձ» (نور الهدى) աշխատության վրա, որը Ղուրանի մեկնաբանությունն էր՝ բաղկացած 6000 էջից: Նուրսիի մահից հետո նրա ղեկավարած շարժման մեջ առաջ եկան տարբեր ուղղություններ, որոնց հիմքում ընկած էին Նուրսիի հրատարակած «Լույսի ուղերձի» տարբեր մեկնաբանությունները: Այս հոսանքի ճյուղավորումների մասին թվերը տարբեր են: Օքսֆորդի հանրագիտարանում նշվում է միայն 2 խմբերի գոյության մասին՝ Նոր Սաիա և Ֆեթիհջի (Վ. Տեր-Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 110):

<sup>16</sup> <http://arama.hurriyet.com.tr/arsivnews.aspx?id=9069979> (15.12.2009)

այն փորձում էր օգտագործել իբրև իրանական իսլամական ռադիկալիզմին հակակշիռ<sup>17</sup>:

Իսլամի նկատմամբ պետության վարած հանդուրժողական քաղաքականության արդյունքը «աշխարհիկ հասարակության իսլամացումը» և մինչև նույն ժամանակ «իսլամի ազգայնականացումն» էր: Նախ, 1982 թվականի սահմանադրությամբ կրոնի ուսուցումը պարտադիր դարձավ պետական դպրոցներում: 1983-1987 թթ. իմամ հաթիբ<sup>18</sup> դպրոցների թիվն աճեց 59 %-ով՝ 374-ից հասնելով 604-ի, իսկ դիմորդների թիվը միջին և բարձրագույն դպրոցներում 220991-ից հասավ 511502-ի: Իմամ հաթիբ դպրոցները բացառիկ նշանակություն ունեին «պետության և հասարակության իսլամացման» գործում<sup>19</sup>:

Օգալի տարիների՝ իմամ հաթիբ դպրոցների թվի աճը շարունակվեց նաև հետագայում: «Իսլամի քարոզիչների» թիվն անընդհատ աճում է. վերջիններս իրենց ուսուցումը ստանում են 74 356 մզկիթներում, Ղուրանի ուսուցման 40000 դասընթացներում և 609 իմամ հաթիբ դպրոցներում: Այս հաստատությունների շրջանավարտների թիվը գերազանցել է 511 հազարը, ինչը 8 անգամ ավելի է, քան անհրաժեշտ է ողջ Թուրքիայում մուսուլմանական ծիսակարգերն անցկացնելու համար: 2001 թվականի դրությամբ կրոնական գործերի կառավարման ընդհանուր բյուջեն կազմել է մոտ 424 մլն. ԱՄՆ դոլար: Թուրքիայի ծայրահեղական ուղղություններին մեծ բարոյական և նյութական աջակցություն են շարունակում ցուցաբերել 501 կրոնական հիմնադրամ, 19 համաթուրքական և ավելի քան 7 հազար տեղական թերթ, 110 ամսագիր, ռադիոյի 51 կայան, 20 հեռուստաալիք, մոտ 1000 ձեռնարկություն և 30 կրոնական հոսանք, ինչը հաստատում է Թուրքիայի զինված ուժերի բարձրաստիճան ղեկավարների այն եզրահանգումը, թե «քաղաքական իս-

<sup>17</sup> Angel Rabasa, F. Stephan Larrabee, The Rise of political Islam in Turkey, RAND NATIONAL DEFENSE RESEARCH INSTITUTE, 2008, p. 37.

<sup>18</sup> Առաջին կրոնական իմամ հաթիբ դպրոցները (արաբ. իմամ խատիբ) պետության կողմից բացվեցին 1951 թվականին 7 քաղաքներում, իսկ 1954-1955 թթ. դրանց թիվը հասավ 16-ի: Չնայած սկզբնական շրջանում դրանք պետության վերահսկողության տակ էին: 1980-ական թթ. իմամ հաթիբ դպրոցների թիվը հասավ 249-ի (Soon-Yong Pak, Articulating the Boundary between Secularism and Islamism: The Imam-Hatip Schools of Turkey, Anthropology and Education Quarterly, Vol. 35, <http://www3.interscience.wiley.com/journal/120129747/abstract?CRETRY=1&SRETRY=0>) (15.12.2009):

<sup>19</sup> S. Karasipahi, Comparing Islamic Resurgence Movements in Turkey and Iran, The Middle East Journal, Vol. 63, N. 1, 2009, p. 97

[http://muse.uq.edu.au/journals/the\\_middle\\_east\\_journal/v063/63.1.karasipahi.html](http://muse.uq.edu.au/journals/the_middle_east_journal/v063/63.1.karasipahi.html) (20.11.2009)

լամը, որը հենվում է 17 մլն. մոլեռանդ հավատացյալների վրա, շարունակում է մնալ հանրապետական, աշխարհիկ սկզբունքներով առաջնորդվող պետության թիվ մեկ սպառնալիքը»<sup>20</sup>:

Էրդողանի ղեկավարած կուսակցությունը շարունակում է աջակցել իմամ հաթիբ կրոնական դպրոցներին՝ նրանց շրջանավարտներին ընդգրկելով պետական տարբեր ձեռնարկությունների և կառավարության կազմի մեջ<sup>21</sup>: 2004 թվականի գարնանը կառավարությունը քննարկման ներկայացրեց մի օրինագիծ, որով առաջարկում էր հնարավորություն տալ այս դպրոցների շրջանավարտներին սովորելու համալսարանի այլ ֆակուլտետներում (մինչ այդ նրանք կարող էին իրենց ուսումը շարունակել միայն աստվածաբանական ֆակուլտետում): Այս նախաձեռնությունն, իհարկե, առաջ բերեց աշխարհիկ հասարակության դժգոհությունը: Մտավախությունը այն էր, որ ԱԶԿ-ի այս քայլերը ի վերջո կհանգեցնեն աշխարհիկ-կրոնական հավասարակշռության խախտմանը:

Քաղաքական իսլամը պետական կառավարման համակարգում խոր արմատներ գցեց 1990-ական թվականներին: 1994 թվականի մարտին տեղական ընտրություններում «Բարօրություն» կուսակցությունը (Refah Partisi) (այսուհետ՝ ԲԿ) ստացավ ձայների 19 տոկոսը՝ 28 ընտրատարածքներում, այդ թվում նաև Ստամբուլում և Անկարայում՝ հաղթելով քաղաքապետի ընտրություններում: 1995 թվականի ընտրություններում ԲԿ-ն ստացավ ձայների 21.6%-ը և կռալիցիա կազմեց Դեմիրելի<sup>22</sup> աջակողմյան «Ճշմարիտ ուղի» կուսակցության հետ (Dogru Yol Partisi), իսկ Էրբաքանը դարձավ վարչապետ: Այսպիսով՝ հանրապետական Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ

<sup>20</sup> С. Задонский, О влиянии руководства вооруженных сил Турции на политический процесс страны (<http://www.iimes.ru/rus/search.html>). (20.11.2009).

<sup>21</sup> Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը իմամ հաթիբ դպրոցի շրջանավարտ է (<http://www.ikhwanweb.com/print.php?id=14415>) (15.12.2009):

<sup>22</sup> Պեսք է նշել, որ ոչ միայն Թ. Օզալը, այլև Ս. Դեմիրելը և Թուրքիայի այլ «աշխարհիկ» քաղաքական գործիչներ պատկանել են նաքշբանդիա սուֆիական տարիկաթին: Հրեա հեղինակ Է. Քարմոնան Իսրայելում լույս տեսնող «Meria» ամսագրի 1998 թվականի հունվարյան համարում նշում է, որ ականատես է եղել, թե ինչպես 1996 թվականի Թուրքիայի խորհրդարանական ընտրություններին Ստամբուլի Ֆեներ թաղամասում, որը հայտնի է որպես նաքշբանդիների բնակատեղի, Էրբաքանի պատկերով ցուցապատատոների կողքին եղել են նաև Դեմիրելի պատկերով կրոնական բովանդակությամբ պաստառներ (Игорь Мурадян, Политический ислам в Турции, <http://analitika.at.ua/>) (11.11.2009):

երկիրը կառավարում էին իսլամական կուսակցությունները, որոնք, փաստորեն, ներկայացնում էին նաքշբանդիա տարիկաթը<sup>23</sup>:

2001 թվականին, երբ Մահմանադրական դատարանի որոշմամբ փակվեց «Առաքինություն» կուսակցությունը (Fazilet Partisi) (այսուհետ ԱԿ)<sup>24</sup>, Ռեջեփ Թայիփ Էրդողանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ ստեղծվեց «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որի անդամներն Ազգային Մեծ Ժողովում զբաղեցրեցին ԱԿ 51 պատգամավորների տեղերը<sup>25</sup>: ԱԿ կուսակցության ազդեցիկ անդամները՝ Աբդուլլահ Գյուլ, Բյուլենթ Արինչ, Ջեմալ Զիչեք, Աբդուլբադի Աքսու, Ալի Ջոշքուն, միացան Էրդողանին: Նրանց ջանքերը՝ ԱԶԿ-ն ներկայացնել որպես ավանդապաշտների հին և չհաջողված ռազմավարության այլընտրանք, ապարդյուն չանցան. 2002 թվականի նոյեմբերի ընտրություններում ԱԶԿ-ն հավաքեց ձայների 34%-ը<sup>26</sup>:

Ինչպես նշում է Ռ. Մաֆրաստյանը, կուսակցության հաղթանակի պատճառների շարքում կարելի է առանձնացնել երեք հիմնական գործոն՝ ա) քաղաքական վերնախավի հանդեպ ժողովրդի ունեցած դժգոհությունը, երկրորդ՝ խոր արմատներ ունեցող կառուցվածքային ճգնաժամը և գ) քաղաքական վերնախավում խարդավանքների աննախադեպ չափերը<sup>27</sup>:

Սկզբնական շրջանում Արևմուտքը ԱԶԿ-ն դիտարկում էր որպես «ֆունդամենտալիստական» կուսակցություն: 2002 թվականի ընտրություններից հետո նույն Արևմուտքը ԱԶԿ-ն որակեց՝ որպես «իսլամիստական կամ իսլամական» կուսակցություն, իսկ հետագայում, երբ ԱԶԿ-ն բռնեց Եվրամիությանն անդամագրվելու ճանապարհը՝ «իսլամական արմատներով» կուսակցություն<sup>28</sup>:

<sup>23</sup>A. Birol, O. Mark, նշվ.աշխ.:

<sup>24</sup>«Առաքինություն» կուսակցությունը քաղաքական դաշտում գործում էր 1998 թվականից սկսած: Այն «Ազգային տեսակետի» հերթական կուսակցություններից էր: ԱԿ-ն արժանացավ Էրբաքանի ղեկավարած մյուս կուսակցությունների ճակատագրին: Մահմանադրական դատարանի 2001 թ. հունիսի որոշմամբ արգելվեց կուսակցության հետագա գործունեությունը:

<sup>25</sup> Այն փաստը, որ քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից զրկված Էրդողանը դարձավ ԱԶԿ-ի հիմնադիր անդամ, հետագայում վիճարկվեց դատարանում:

<sup>26</sup> Ihsan D. Dağlı, *Islamic Identity and the West: Is Conflict Inevitable?, Islam and Tolerance in Wider Europe*, 2007, p. 107.

<sup>27</sup> Ռ.Մաֆրաստյան, Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Երևան, Զանգակ-97, 2003, էջ 50-51:

<sup>28</sup> Sık u Introduction in M. Hakan Yavuz, *Secularism and Muslim Democracy in Turkey*, Cambridge University Press, 2008.

Ի պատասխան այս բոլոր բնորոշումների՝ Էրդողանը ԱԶԿ-ն փորձեց ներկայացնել եվրոպական քրիստոնյա-դեմոկրատական կուսակցության օրինակով: «Արդարություն և զարգացում» կուսակցության պաշտոնյաներից մեկը նշում է, որ քննարկման հարց չէ, որ իսլամը ազդում է քաղաքականության վրա, այլ կարևոր է այն, թե ինչպես է այն ազդում: Ըստ նրա՝ իսլամի ժողովրդավարական (լիբերալ) մեկնաբանությունը կարող է քաղաքականության վրա ազդել միայն ժողովրդավարական ճանապարհով<sup>29</sup>:

Հատկանշական է, որ ԱԶԿ-ի մշակած այս կոնցեպցիան այսօր «ժողովրդավարական նախաձեռնություն» (Demokratik açılım) փաթեթի տեսքով օրակարգային է Թուրքիայում: Եթե ուշադրություն դարձնենք վերջին շրջանում Թուրքիայի վարած արտաքին քաղաքականությանը, ակնհայտ է դառնում, որ Թուրքիան փորձում է դառնալ տարածաշրջանային որոշիչ նշանակություն ունեցող տերություն և որպես միավորիչ գործոն օգտագործում է իսլամը:

Թուրքիայի այս քաղաքականությունը սովորաբար արևմտյան վերլուծաբանների կողմից բնորոշվում է՝ որպես չափավոր իսլամիստական՝ «զրո խնդիր հարևանների հետ»: Դ. Հովհաննիսյանը նշում է, որ սա փորձ է վերականգնելու հզոր կայսրության կարգավիճակը: Վերջերս Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավլաթօղլուն հաստատեց վերոնշյալ տեսակետը՝ հայտարարելով, որ այս դարաշրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը օսմանյան ժամանակաշրջանի Բալկանների վերելքն է՝ որպես համաշխարհային քաղաքականության կենտրոն՝ շեշտելով, որ Թուրքիան պատասխանատու է այս տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների համար<sup>30</sup>:

Էրդողանի ձևավորած նոր կառավարությունը, որը բաղկացած էր 23 նախարարություններից, հետաքրքիր կառուցվածք ուներ. կառավարության կազմում մարդիկ էին, ովքեր «Ազգային տեսակետի» մասնագետներ էին, մարդիկ, ովքեր ներկայացնում էին տարբեր կրոնական ուղղություններ և շարժումներ: Մա թուրքական քաղաքական իսլամի պատմության մեջ նշանակալից երևույթ էր այն առումով, որ նախորդ տարիներին նման կոալիցիա հնարավոր չէր կազմել: Կառավարության անդամներից 15-ը նաքշբանդիա տարիկաթի Իսքենդերփաշա թեքքեի հետևորդ էին, ովքեր սերտորեն կապված էին նաև «Ազգային տեսակետի» հետ, երկուսը՝ նաքշբանդիա տարիկա-

<sup>29</sup> Angel Rabasa, F. Stephan Larrabee, The Rise of political Islam in Turkey, նշվ. աշխ., էջ 54:

<sup>30</sup> St u Оганесян Д., Конкуренция региональных систем безопасности. առյ՛ն ժողովածու, էջ 35

թի<sup>31</sup>, երկուսը՝ Ֆեթուլլահ Գյուլենի նուրջու շարժման, երկուսը՝ Նոր Ասիա (Yeni Asya)<sup>32</sup> նուրջու խմբի և չորս անդամներ էլ տարբեր կրոնական ուղղությունների հետևորդներ էին<sup>33</sup>:

«Այդընկրք» ամսագրի (Aydinlik dergisi) կատարած ուսումնասիրության հաճաճայն՝ այսօրվա Թուրքիայի կառավարության 25 նախարարներից 19-ը կապված են տարբեր սուֆիական տարիկաթների հետ: Ավելին, կառավարության անդամների 52%-ը նաքշբանդիա տարիկաթի Իսքենդերփաշա միաբանության հետևորդ է՝ այդ թվում նաև Ռեջեփ Թայիփ Էրդողանը, իսկ 16%-ը՝ նուրջու է<sup>34</sup>:

Պատմաբան Սոներ Յալչընը գրում է. «Նախ և առաջ արձանագրենք՝ Արդարություն և Զարգացում կուսակցության «քաղաքական լեզվի»՝ Ազգային իսլամիզմի հիմքում նաքշբանդի շեյխ Ահմեդ Ջիյաուդդին Էֆենդին է՝ նաքշբանդիական Գյումուշհանեվի թեքքեի հիմնադիրը»<sup>35</sup>: Յալչընը շարունակում է. «Թեքքեն, հանձին Աբդուլլահ Գյուլի, երկրորդ նախագահը տվեց առաջինը Թուրգուօ Օզալն էր: Թեքքեի շատ մյուրիդների հասարակությունը ճանաչում է որպես քաղաքական գործիչների՝ Նեջմեթթին Էրբաքան, Քորքուօ Օզալ, Ռեջաի Քութան, Քեմալ Ուբաքթթան, Հյուսնյու Դոդան, Հաքայ Աքսայ, Էրդեմ Բեյազիթ, Թեմել Քարամանօղլու, Բահրի Չենգին, Քահրաման Էմինօղլու, Յահյա Օդուզ, Ջևաթ Այհան, պրոֆ. Ջևաթ Աքշիթ, պրոֆ. Օսման Չաթաքըր, պրոֆ. Օրհան Օքթայ և այլն: Թվարկածից ելնելով՝ հանգիստ կարելի է ասել, որ վերջին 25 տարիներին, չնչին բացառություններով, Թուրքիան ղեկավարում է Գյումուշհանեի թեքքեն»<sup>36</sup>:

Ինչպես վերևում նշվեց, ԱԶԿ-նաքշբանդի տարիկաթ կապը մշտապես եղել է թուրքական մամուլի ուշադրության կենտրոնում: Լույս են տեսել բազ-

<sup>31</sup> 1925թ., երբ օրենքով արգելվեց թեքքեների գործունեությունը, Գյումուշհանեվի մզկիթը բաց մնաց մինչև 1945 թվականը՝ որպես աղոթատեղի: 1957թ. մզկիթը փակվեց «հարակից ճանապարհը լայնացնելու» համար: Թեքքեն դրանից հետո իր գաղափարական քարոզչությունը շարունակեց Դամադ Իբրահիմ Փաշա մզկիթում շեյխ Հասիբ Էֆենդիի գլխավորությամբ, այնուհետև Ումմու Գուլտում մզկիթում՝ շեյխ Աբդուլազիզ Էֆենդիի գլխավորությամբ: 1958թ-ից շեյխ Մուհամմադ Ջեհիդ Բուրնասավի ղեկավարությամբ տեղափոխվեց Իսքենդերփաշա մզկիթ, որը մինչ օրս համարվում է նաքշբանդիների գլխավոր թեքքեն (<http://gumushkhanawidargah.8m.com/>):

<sup>32</sup> Այս խումբը հիմնական նուրջուներից առանձնացավ 1970-ական թթ.՝ Ջուբեյրի Գյումուդուզ Ալփի և Մեհմեդ Քուրթուլարի գլխավորությամբ:

<sup>33</sup> A. Birol, O. Mark, նշվ. աշխ, էջ 11:

<sup>34</sup> [http://home.arcor.de/sinansahin/dede\\_docs/012004/hukumetkadrotarkat.htm](http://home.arcor.de/sinansahin/dede_docs/012004/hukumetkadrotarkat.htm) (26.11.2009):

<sup>35</sup> Soner Yalçın, նշվ. աշխ., էջ 37:

<sup>36</sup> Soner Yalçın, նշվ. աշխ., էջ 38:

մաթիվ հոդվածներ, որտեղ հայտնում են, որ քաղաքական, կուսակցական այս կամ այն գործիչը մասնակցել է կամ նաքշբանդի շեյխի թաղման արարողությանը, կամ էլ կազմակերպված ճաշկերույթին. «նաքշիբենդիների տարածաշրջանի առաջնորդ և Էրենքյոյի համայնքի անդամ 34-րդ շեյխ հաջի Ալի Ռիզա Էլ-Բեզզեզի աշակերտ Ալի Օզթայլանի թաղման արարողությանը ներկա էին ԱԶԿ-ի Բալըքեսիրի պատգամավորներ Էդիփ Ուղուրը, Իսմաիլ Օզգունը, Բուրսայի պատգամավոր Ալթան Քարափաշաօղլուն, Բալըքեսիրի նահանգապետ Մելահեթթին Հաթիփօղլուն, Բալըքեսիրի անվտանգության տնօրեն Ջոշքուն Հայալը, Իզմիրի նահանգապետի օգնական Իսմաիլ Գյուրսոյը, նախկին քաղաքական գործիչներից Հուսամեդդին Ջինդորուքը: Համդի Օզթայլանը նշեց, որ վախճանված հայրը՝ Ալի Օզթայլանը, լավ հարաբերությունների մեջ է եղել 8-րդ հանգուցյալ նախագահ Մերհում Թուրքութ Օզալի, 9-րդ նախագահ Սուլեյման Դեմիրելի և արգելված Բարօրություն կուսակցության առաջնորդ Նեջմեթթին Էրբաքանի և վարչապետ Ռ. Թ. Էրդողանի հետ»<sup>37</sup>:

«Էրզենեքնի հետաքննության շրջանակներում կատարված խուզարկությունների ժամանակ բանակի՝ թոշակի անցած գեներալներ Շեներ Էրույգուրից և Ահմեդ Հուրշիթ Թոլունից վերցված թվայնացված տվյալների մեջ ի հայտ եկան լուսանկարներ, որոնք ցույց են տալիս, որ ԱԶԿ-ի պատգամավորները մասնակցել են նաքշբանդի տարիկաթի շեյխի կազմակերպած ռամադանի մեկնարկը խորհրդանշող ճաշի սեղանի շուրջ տեղի ունեցած ժողովին: Ըստ այդ նյութերի՝ ժողովը տեղի է ունեցել 2003 թվականի նոյեմբերի 18-ին: Ժողովը կազմակերպել էր նաքշբանդի տարիկաթի Ադրյամանի Մենզիլի խմբի շեյխերից Ֆեյզեթթին Էրոլը Քեչիորենի իլչեի Փուրասքլար քաղաքի Քասրի Շիրին մզկիթի կողքին գտնվող թեքքեում: Ճաշին մասնակցել են ԱԶԿ-ի Ադրյամանի պատգամավոր Հուսրև Քուլթուն, Աֆյունի պատգամավոր Ահմեդ Քոջան, Դիարբեքիրի պատգամավոր Մ. Իհսան Արսլանը<sup>38</sup>, Քոջաեղի պատգամավոր Սուգաֆեր Բաշթոփչուն, Շանլըուրֆայի պատգամավոր Մահմուդ Քափլանը, Վանի պատգամավոր Մալիքի Էժդեր Արվաաը, Սիիրտի պատգամավոր Օներ Գյուլեշիլը, Թուրքական Բնակարանաշինության ղեկավար խորհրդի նախագահ Յըլմազ Օդաբաշը և ևս 30-35 հոգի: Ըստ տեղեկության՝ Շեյխ Էրոլը ճաշը ԱԶԿ-ի համար էր կազմակերպել, սակայն կուսակցական-

<sup>37</sup><http://www.milliyet.com.tr/Yasam/SonDakika.aspx?aType=SonDakika&KategoriID=15&ArticleID=975735> (26.11.2009):

<sup>38</sup> Մ. Իհսան Արսլանի որդին՝ Մուշախիթ Արսլանը, Ռ. Թ. Էրդողանի հիմնական քաղաքական խորհրդականն է:



ների մեծ մասը զբաղվածության պատճառով չեն կարողացել մասնակցել ճաշին»<sup>39</sup>:

Իհարկե, չբացառելով այն հանգամանքը, որ կուսակցականները նաքշբանդիա տարիկաթի անդամ են, այս պարբերական հանդիպումները, ճաշկերույթները կարելի է մեկնաբանել նաև որպես ընտրաձայներ գրավելու, կամ որպես վարկանիշը բարձրացնելու միջոց. չէ՞ որ նաքշբանդիա տարիկաթը, առհասարակ սուֆիները, մեծ հեղինակություն են վայելում Թուրքիայում: Դ. Հովհաննիսյանը նշում է, որ ըստ Ֆ. Բադերխանի՝ սուֆիական տարիկաթների ընտրազանգվածը հաշվվում է ավելի քան 5 միլիոն մարդ: Եթե հաշվի առնենք բնակչության ավանդական բարեհամբույր վերաբերմունքը սուֆիների նկատմամբ, ապա այդ թիվը անհրաժեշտ է կրկնապատկել<sup>40</sup>:

Վերջին շրջանում Թուրքիայում բավական մեծ աղմուկ բարձրացրեց լրագրող Հիլմի Յավուզի այն պնդումը, թե «Արդարություն և զարգացում» կուսակցությունը նաքշբանդիական նախագիծ է: Ըստ նրա՝ Թուրքույթ Օզալի «Մայր հայրենիք» (Anavatan Partisi) կուսակցությունն ու ԱԶԿ-ն իրենց գաղափարախոսությամբ և կառուցվածքով լիովին տարբերվում են մյուս կուսակցություններից: Թուրքույթ Օզալը, նաքշբանդիական նստարանից անցնելով կառավարական աթոռին, կոմպրոմիսային քայլ կատարեց. նա պետության կարևոր պտուղներից օգտվելու հնարավորություն տվեց նաև նրանց, որոնց աշխարհայացքները տարբեր էին: Այս նույն մեթոդով Ռեջեփ Թայիփ Էրդոդանը ավելի ռիսկային քայլ կատարեց. նա կառավարության անդամ դարձրեց նրանց, ովքեր կիսում էին իր տեսակետները<sup>41</sup>:

Թեև ԱԶԿ-ն քաղաքական դաշտ մտավ Էրբաքանի «Ազգային տեսակետի» օժանդակությամբ, սակայն ԱԶԿ-ի ղեկավարներն ամեն կերպ փորձում են ներկայացնել մի կուսակցություն, որը չի հակասում լաիցիզմի սկզբունքներին, որի ղեկավարությունը տիեզերական մուսուլմանական ինքնության նոր և դինամիկ դեմքն է, որը մուսուլմանական «սարդոստայնը» գնահատում է որպես քաղաքական մոբիլիզացիայի գործիք: Կուսակցության գաղափարախոս Յալչըն Աբդոդանը ժխտում է կուսակցության և քաղաքական իսլամի կապը, կուսակցությունից օտարում «մուսուլմանական ժողովրդավարական

<sup>39</sup><http://www.milliyet.com.tr/Siyaset/HaberDetay.aspx?aType=HaberDetayArsiv&KategoriID=4&ArticleID=1088716> (3.12.2009):

<sup>40</sup> Оганесян Д., նշվ. աշխ., Էջ 36:

<sup>41</sup> [www.radikal.com.tr](http://www.radikal.com.tr) (3.12.2009):

կուսակցություն» պիտակը<sup>42</sup>: Սակայն Ռեջեփ Թայիփ Էրդողանի ելույթներն այս առումով ավելի խոսուն են: Այսպես՝ 1994 թվականի նոյեմբերի 21-ին, երբ նա Ստամբուլի քաղաքապետն էր, ելույթի ժամանակ հայտարարել է. «Շնորհակալ եմ Ալլահին, ես շարիաթի պաշտպանն եմ» հետո իրեն բնորոշել՝ որպես «Ստամբուլի իմամ»<sup>43</sup>:

1997 թվականին ԱՄՆ-ում հայտարարել է. «կամ լաիկ եղիր, կամ մուսուլման, երկուսը համատեղելի չեն... ժողովրդավարությունը նպատակ է, թե՛ միջոց. ժողովրդավարությունը երբեք նպատակ չի կարող լինել, իսկ միջոց կարող է լինել միայն գիտական տեսանկյունից»<sup>44</sup>:

2003 թվականի մայիսին Մալազիա կատարած այցելության ժամանակ այնտեղ լույս տեսնող «News Straits Times» թերթին տված հարցազրույցում «Արդարություն և զարգացում» կուսակցության նախագահ և երկրի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ասել է. «Թուրքիան, որ մոդեռն իսլամի երկիր է, քաղաքակրթությունների համար օրինակ կարող է ծառայել»<sup>45</sup>:

2005 թվականի դեկտեմբերին Նոր Զելանդիա և Ավստրալիա կատարած այցելություններից հետո Անկարա վերադառնալով՝ Էսենբողա օդանավակայանում հայտարարել է. «...կրոնը ցեմենտ է և այս պահին այն մեզ միավորող ամենակարևոր տարրն է: Տարիներ ի վեր այդպես է եղել...»<sup>46</sup>:

ԱԶԿ-ի կառավարման առաջին հինգ տարիներից հետո քննարկումներ սկսվեցին այն հարցերի շուրջ, թե արդյո՞ք կուսակցությունը նոր պինթեզ է Թուրքիայի քաղաքական կյանքում, ի՞նչ դեր ունի այսօր իսլամը երկրում և որքանով է այն ազդում երկրի ներքին և արտաքին քաղաքականության վրա: Իհսան Դաղըն պնդում է, որ կուսակցությունը ոչ այլ ինչ է, քան իսլամական սոցիալ-մշակութային կոնսերվատիզմի պերիֆերիա: Նա նշում է, որ կուսակցությունը կարելի է դիտարկել որպես հետիսլամական շարժում, որն իսլամի հետ կապը պահպանում է սոցիալական ոլորտում, սակայն խզում այդ կապը՝ որպես քաղաքական ծրագիր<sup>47</sup>:

<sup>42</sup> St' u Introduction in M. Hakan Yavuz, *Secularism and Muslim Democracy in Turkey*, Cambridge University Press, 2008, p. 10:

<sup>43</sup> Michael Rubin, *Will Turkey Have an Islamist President?* AEI Middle Eastern Outlook, 2007. <http://www.meforum.org/1637/will-turkey-have-an-islamist-president> (21.11.2009):

<sup>44</sup> [http://www.youtube.com/watch?v=VepV4Ac\\_rNM&feature=related](http://www.youtube.com/watch?v=VepV4Ac_rNM&feature=related) (20.12.2009):

<sup>45</sup> T. C. Yargitay Cumhuriyet Başsavcılığı İddianame, *Anayasa Mahkemesi Başkanlığına*, 2008, s. 27, 29.

<sup>46</sup> Նույն տեղում:

<sup>47</sup> Ihsan D. Dağı, նշվ. աշխ., էջ 107:

Ակնհայտ է, որ ԱԶԿ-ի բնորոշումները տարբեր են, հաճախ նույնիսկ իրարամերժ, սակայն եթե ուշադիր լինենք, ապա կնկատենք, որ ԱԶԿ-իսլամ փոխներգործություն և փոխկապակցվածություն թեմայով ծավալված քննարկումների ընդհանուր գիծը ԱԶԿ-նաքշբանդիա տարիկաթ կապն է: Այս հարցը տարբեր ժամանակներում տարբեր լրատվամիջոցներով գտել է իր արձագանքը. գերմանական «Die Welt» թերթի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի համարում լույս տեսած հոդվածներից մեկում հոդվածագիրը, մեջբերելով Թուրքիայում հայտնի Մերձավոր Արևելքի մասնագետ Ֆաիք Բուլուբի գրքից, գրում է. «Ըստ Բուլուբի հաշվարկների՝ խորհրդարանի պատգամավորներից 135-ը նաքշբանդիական են: Նրանցից 86-ը ԱԶԿ-ի անդամներ են, իսկ մյուսները այլ կուսակցությունների ներկայացուցիչներ են»<sup>48</sup>:

2007 թվականի հուլիսի 17-ին «Vatan» թերթում լույս տեսած հոդվածում ներկայացվեց մի ցուցակ, որում նշված էին կառավարության այն անդամների անունները, որոնք պատկանում էին սուֆիական տարիկաթների<sup>49</sup>:

2008 թվականին Էրզենեքունի դատավարության ընթացքում ի հայտ եկան ԱԶԿ-ի անդամների վերաբերյալ տեղեկություններ պարունակող գաղտնի թղթապանակներ, որոնք հաստատում էին նաքշբանդիա տարիկաթի հետ վերջիններիս կապը<sup>50</sup>:

2009 թվականի նոյեմբերի 16-17-ին թուրքական մի շարք թերթերում և ինտերնետային կայքէջերում հայտնվեցին տարբեր վերնագրերով, սակայն նույն բովանդակությամբ հոդվածներ, որոնք կրկին վերաբերում էին սուֆիական տարիկաթների ներկայացուցիչներ հանդիսացող կառավարության անդամներին:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարելի է եզրակացնել, որ նաքշբանդիական տարիկաթի քաղաքական ուղղվածությունը միջնադարից սկսած մեծ դեր է կատարել օսմանյան, ապա՝ թուրքական քաղաքականության ձևավորման հարցում: Կրոնը, առհասարակ, հզոր զենք է եղել իշխող շրջանակների համար հասարակությանը կառավարելու գործում: Թուրքիայի պատմության ընթացքում այս երևույթը բազմիցս դրսևորվել է: Իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունն էլ բացառություն չէ. կուսակցությունն իսլամը ճկուն կերպով օգտագործում է անջատողական շարժումների դեմ: Հզոր հենարան ունենալով նաքշբանդիա սուֆիական տարիկաթը՝ ԱԶԿ-ն «չափավոր իսլամի» քողի ներքո երկիրը տանում է իսլամականացման ճա-

<sup>48</sup> <http://www.netpano.com/makale/?makale=282> (2.11.2009):

<sup>49</sup> <http://haber.gazetevatan.com/haberdetay.asp?Newsid=128197&Categoryid=4&wid=142> (5.11.2009):

<sup>50</sup> T. C. Istanbul Cumhuriyet Başsavcılığı (CMK' nın 250. Maddesi ile Yetkili Bölümü), <http://www.scribd.com/doc/13666509/Ergenekon-davas-ikinci-iddianame-tam-metin> (5.12.2009):

նապարհով: Թերևս այս պարագայում արդիականությունը չի կորցրել XV դարում տարիկաթն իր քաղաքական և սոցիալական զարգացման գազաթնալետին հասցրած հոջա Ուբայդալլահ Ահրարի արտահայտությունը. «Հոգևոր առաքելությունն իրագործելու համար պետք է քաղաքական իշխանություն ունենալ»:

### **Ժամանակակից Թուրքիայի նաքշբանդիա տարիկաթին հարող քաղաքական էլիտայի ներկայացուցիչների ցուցակ**

Ահմեդ Դավութօղլու.	Մարմարայի համալսարանում ուսանելու տարիներին սերտ հարաբերություններ է ունեցել Աբդուլլահ Գյուլի հետ, իսկ կուսակցության՝ իշխանության անցնելուց հետո աշխատել է որպես վարչապետի գլխավոր խորհրդական: Այժմ զբաղեցնում է Արտաքին գործերի նախարարի պաշտոնը:
Ալի Բաբաջան.	Քորքութ Օզալի աշակերտներից է և Իսթենդերփաշա միաբանության անդամ: Նա ԱԶԿ-ի շրջանակներում հայտնի է որպես «Էրդողանի արքայագն» կամ որպես ԱԶԿ-ի դերվիշ: 1968 թվականին, Հաթիջե Բաբաջանը, ով չնայած արգելքին՝ դասի էր հաճախում գլխաշորով, իսլամի պատմության դոկտոր Բահրրիյե Ուչոքի և Մուստաֆա Դեմիրայոզի հետ միասին հեռացվել է աստվածաբանական ֆակուլտետից: Հաթիջե Բաբաջանն Ալի Բաբաջանի հորաքույրն էր, նա առաջինն էր, որ համալսարանում նախաձեռնեց գլխաշոր կրելու շարժումը: Ներկայումս զբաղեցնում է Էկոնոմիկայի նախարարի և պետանախարարի պաշտոնները:
Էգեմեն Բաղըշ.	Լինելով թուրք-ամերիկյան հաստատությունների ֆեդերացիայի նախագահ՝ Էգեմեն Բաղըշը Էրդողանի համար հարաբերություններ է հարթել: 32 տարեկան է, կյանքի մեծ մասն անց է կացրել Միացյալ Նահանգներում: Ներկայումս զբաղեցնում է Էրդողանի արտաքին գործերով խորհրդականի պաշտոնը և հանդիսանում է ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի թուրքական խմբի անդամ, Եվրամիության հետ ինտեգրման հարցերով հիմնական բանակցող:

Ջյունեդ Չափթուն.	1989 թվականից Ամերիկայում ներկայացնում է Էրդողանի ԹՈՒԻՄԱԴ կազմակերպությունը: Դեռևս քաղաքապետ լինելու տարիներից շատ մտերիմ է Էրդողանի հետ: Ներկայումս Azizler Holding-ի, Balsu Gıda, BİM Şirketler կազմակերպությունների տնօրենն է և 500-ից ավելի խանութների ցանցի սեփականատեր:
Օմեր Չելիք.	Անատոլիայի պատգամավոր, ծագումով Դիարբեքի-րից, վարչապետի արտաքին գործերով՝ հաստատես Մերձավոր Արևելքի հարցերով խորհրդական:
Նաբի Ավջը.	Եղել է «Զաման» թերթի գլխավոր խնբագիրն ու նաև լրագրող: Վարչապետի գլխավոր խորհրդականն է:
Յալչըն Աքդողան.	2003 թվականից ի վեր Էրդողանի քաղաքական խորհրդականն է, իսկ այժմ նաև վարչապետի խորհրդական:
Ահմեդ Թեզան.	2004 թվականի մարտից վարչապետի մամլո խոսնակն է:
Մյուջահիթ Ասլան.	Վարչապետ Էրդողանի խորհրդականն է, ԱԶԿ-ի Դիարբեքիի պատգամավոր Մեհմեդ Իհսան Ասլանի որդին է: Կուսակցության մեջ լիազորված է Էրդողանի անունից ոչ մեծ կարևորություն ունեցող փաստաթղթեր ստորագրել:
Ռեջեփ Աքդադ.	Նաքշբանդիա տարիկաթի Իսքենդերփաշա թեքքեի անդամ է: Այժմ զբաղեցնում է Առողջապահության նախարարի պաշտոնը:
Բինալ Յըլդըրըմ.	Նաքշբանդի տարիկաթի Իսքենդերփաշա միաբանության ներկայացուցիչ է: Ստամբուլի Ծովային ավտոբուսների ղեկավար խորհրդի նախկին նախագահ: Այժմ զբաղեցնում է Տրանսպորտի նախարարի պաշտոնը:
Մամի Գյուչլու.	Նաքշբանդիա տարիկաթի Իսքենդերփաշա թեքքեի անդամ է: Գյուլի մտերիմ ընկերն է, Սաքարիայի համալսարանի դասախոս: Այժմ զբաղեցնում է Գյուղատնտեսության նախարարի պաշտոնը:
Հուսեին Չելիք.	Նուրջու տարիկաթի «Նոր Ասիա» ճյուղի ներկայացուցիչ է: Այժմ զբաղեցնում է Մշակույթի նախարարի պաշտոնը:

## **Իրանի միջուկային ծրագրի զարգացումները Ահմադինեժադ-Խամենեի հարաբերությունների համատեքստում**

*Գևորգյան Ա.*

Քսաներորդ դարի մարտահրավերներից մեկը միջուկային զենքի ստեղծումն ու դրա օգտագործման վտանգն էր: 1968 թ. Միջուկային զենքի չտարածման վերաբերյալ կնքված պայմանագիրը իրավական հիմք հանդիսացավ կանխելու համար միջուկային զենքի արտահոսքն ու դրա կիրառումը: Որոշ երկրներ, սակայն, այնուամենայնիվ ստեղծեցին միջուկային զենք՝ խախտելով պայմանագրով նախատեսված պարտավորությունները: 2002թ.-ից սկսած միջուկային զենք ստեղծելու նպատակ ունենալու մեջ կասկածվում է նաև Իրանի Իսլամական Հանրապետությունը<sup>1</sup>:

Արդեն յոթ տարի է, ինչ Արևմտյան երկրները և Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը տնտեսական պատժամիջոցներով փորձում են կանխել Իրանի կողմից միջուկային զենք ստեղծելու հնարավորությունը: Իրանը, սակայն, հերքում է իրեն առաջադրված մեղադրանքները: Թեհրանը հայտարարում է, որ իր միջուկային ծրագիրը միայն խաղաղ նպատակներ է հետապնդում, հետևապես անհիմն են նրա նկատմամբ կիրառված պատժամիջոցները: Որպես պատժամիջոցների դեմ բողոքի նշան Իրանը արգելում էր Ատոմային էներգիայի միջազգային գործակալության փորձագետներին ուսումնասիրություններ կատարել իր տարածքում՝ այդպիսով էլ ավելի բարդացնելով Իրան-Արևմուտք հարաբերությունները:

Այս տարի Իրանում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո, սակայն, երկրի ներքաղաքական կյանքի լարվածությունը անդրադարձավ նաև Իրանի արտաքին քաղաքականության և մասնավորապես նրա միջուկային քաղաքականության վրա: Իրավիճակը Իրանի միջուկային ծրագրի շուրջ որոշակի փոփոխություններ կրեց, և այդ փոփոխությունների նախաձեռնողը նախագահ Ահմադինեժադն էր, թեև նրան չհաջողվեց իրեն վերապահել նաև այդ ոլորտում վերջնական խոսք ասելու իրավունքը: Արդյունքում նախագահի նախաձեռնած բանակցությունները Արևմուտքի հետ տապալվեցին Խամենեիի որոշմամբ, և երկիրը նոր պատժամիջոցների դատապարտվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից:

Նախագահ Ահմադինեժադի և երկրի հոգևոր առաջնորդ Խամենեիի հարաբերությունները լարված բնույթ ստացան այս տարի երկրում տեղի

<sup>1</sup> 2002 թվականին Իրանից արտաքսված գիտնականներից մեկը հայտարարեց, որ Իրանը իր միջուկային ծրագիրը օգտագործելու է զենք ստեղծելու համար:

ունեցած նախագահական ընտրություններից հետո: Ընտրությունների հրապարակված արդյունքները միլիոնավոր մարդկանց ստիպեցին փողոցներ դուրս գալ ու պայքարել «հանուն արդարության և ընդդեմ գործող նախագահի»: Իրավիճակը կարող էր փոխել միայն երկրի հոգևոր առաջնորդը, որը սակայն ուրբաթօրյա աղոթքի ժամանակ հայտարարեց, թե ընտրությունները համարում է կայացած և որ հաստատում է գործող նախագահի վերընտրվելու փաստը: Իսկ ընդդիմադիր զանգվածին Խամենեին կոչ արեց հանդարտվել և դադարեցնել պայքարը: Երկրի հոգևոր առաջնորդը, աջակցելով Ահմադինեժադին, հույս ուներ նրան ավելի կառավարելի դարձնել: Խամենեիի հույսերը սակայն, չարդարացան, քանի որ նախագահը իր հետագա քայլերով փորձեց ցույց տալ, որ երկրի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ կան ոլորտներ, որտեղ վերջնական որոշումը կարող է կայացնել նաև նախագահը: Նրա այս դիրքորոշումը հասկապես իրեն զգացնել տվեց նոր կառավարություն ձևավորելիս և թեկնածուներ ընտրելիս, ինչպես նաև միջուկային ծրագրի վերաբերյալ արտաքին քաղաքականության մեջ: Նոր կառավարություն կազմելիս Ահմադինեժադը փոխնախագահի պաշտոնում նշանակեց իր որդու աներոջը: Էսֆանդիար Ռահիմ Մաշաիի թեկնածությունը, սակայն, բուռն քննարկումների առիթ տվեց<sup>2</sup>: Նրա թեկնածությանը դեմ էր նաև երկրի հոգևոր առաջնորդը, որը դժգոհ էր նախագահի ընտրությունից: Խամենեիի դժգոհությունը տրամաբանական էր ու պատճառաբանված, բայց զարմանալին այն էր, որ նա իր այդ դժգոհությունը արտահայտեց բացահայտ, մինչդեռ նախկինում նա երբեք ցույց չէր տվել, թե մասնակցում է կառավարության անդամների նշանակման գործին<sup>3</sup>:

Աննախադեպ էր նաև այն, որ Ահմադինեժադը մինչև վերջ փորձեց պայքարել իր նախընտրած փոխնախագահին պաշտոնում պահելու համար և ամեն կերպ փորձեց բացատրել ու հիմնավորել իր ընտրությունը: Ուշագրավ է, որ Ահմադինեժադը ընդունեց Մաշաիի հրաժարականը միայն այն ժամանակ, երբ վերջինս հայտարարեց, թե չի կարող ստանձնել այդ պաշտոնը առանց Խամենեիի համաձայնության:

Ահմադինեժադը այս պաշտոնանկության հետ կապված իր դժգոհությունը արտահայտելու համար գործից ազատեց կառավարության մի քանի անդամների, որոնք Հոգևոր առաջնորդի մտերիմներն ու բարեկամներն էին:

<sup>2</sup> Նրա անձի նկատմամբ հոգևորականներն ու պահպանողականները թերահավատությամբ են լցված, քանի որ մի տարի առաջ նա իր ելույթներից մեկի ժամանակ ասել էր, թե բոլոր ժողովուրդները, այդ թվում հրեաները, իրանցիների բարեկամներն են: Բացի այդ, Թուրքիայում նա մասնակցել է մի արարողության, որտեղ ցուցադրվել է ժողովրդական պար կանանց մասնակցությամբ: Իսկ Իրանում էլ նրա կազմակերպած երեկոյթներից մեկի ժամանակ, մի կին Ղուրանը ձեռքին բարձրացել է ամբիոն՝ սուրբ գրքից որոշ այբոյներ կարդալու նպատակով:

<sup>3</sup> Այս անգամ Խամենեին փոխնախագահին պաշտոնից հանելու իր պահանջը հնչեցրեց նաև Ուրբաթօրյա աղոթքի ժամանակ՝ նշելով, որ, քանի որ իր տեսակետն արդեն հայտնի է, չի կարելի հապաղել Մաշաիի պաշտոնանկության գործում:

Մա ակնհայտ Խամենեիին ձեռնոց նետել էր նշանակում, քանի որ այն կառավարությունը, որի անդամներն էին վերը նշված անձինք, մի քանի շաբաթից դադարեցնելու էր իր լիազորությունները: Եվ ուրեմն, նրանց պաշտոնանկությունը միայն հոգևոր առաջնորդին ընդդիմանալու ցանկություն էր:

Իր դիրքերն ամրապնդելու նպատակով՝ նախագահը փորձեց օգտագործել նաև միջուկային քաղաքականությունը: Իրանի միջուկային ծրագիրը Ահմադինեժադի համար դարձավ այն լծակը, որը թույլ տվեց նրան ցույց տալ Խամենեին, որ գործելու է իր սկզբունքներից ելնելով, և իր քաղաքականությունը չի համաձայնեցնելու հոգևոր առաջնորդի հետ: Նախագահը մի քանի ամիս շարունակ բանակցություններ վարեց Արևմուտքի հետ իր երկրի միջուկային ծրագրի շուրջ. կողմերը կարծես հասել էին ընդհանուր հայտարարի, երբ Այյաթոլլահ Խամենեին մեկ անգամ ևս ցույց տվեց Իրանին ու միջազգային հանրությանը, որ ինքն է երկրի տերը, և որ նրան է վերապահված երկրի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերում որոշում ընդունելու իրավունքը<sup>4</sup>:

Իսկ Ահմադինեժադի նախաձեռնած փոփոխությունը միջուկային ոլորտում այն էր, որ Իրանը այս տարի համաձայնվեց բանակցել Արևմտյան երկրների հետ իր ատոմային ծրագրի վերաբերյալ: Այս «առաջընթացի» ի կատար ածմանը նպաստեցին մինչև ընտրություններն ու ընտրություններից հետո կատարված կադրային փոփոխությունները միջուկային ոլորտում:

Դեռ մինչև վերջին նախագահական ընտրությունները 2007 թվականի օգոստոսին Ահմադինեժադը Ազգային անվտանգության կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնից ազատել էր Ալի Լարիջանիին, և նրա փոխարեն նշանակել Մայեդ Ջալիլիին: Պետք է նշել, որ այս պաշտոնը ստանձնողները համարվում են Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ թիվ մեկ բանակցողներ:

Երբ ծանոթանում ենք այս քաղաքական գործիչների կենսագրությանն ու տեղեկանում նրանց կապերի մասին, գրեթե ակնհայտ են դառնում այս փոփոխության նպատակները:

Ալի Լարիջանիին երկրի հոգևորականների համակրանքը վայելող քաղաքական գործիչ է, այաթոլլահի որդի և մի շարք այլ հոգևոր գործիչների մտերիմն ու բարեկամը: Այսինքն ակնհայտ է, որ նա իր քաղաքականությունը ավելի շատ համապատասխանեցնում ու պայմանավորում էր երկրի հոգևոր առաջնորդի և հոգևոր վերնախավի ցանկություններով ու նպատակներով: Այնինչ, Մայեդ Ջալիլին Ահմադինեժադի մտերիմ ընկերն է, եղել է նրա զինա-

<sup>4</sup> <http://www.leader.ir/langs/fa/index.php?p=contentShow&id=6082> (25.11.2009):



կիցը իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ, և, անտարակույս, միջուկային քաղաքականության հետ կապված վարում է այն քաղաքականությունը, որի կողմնակիցը նախագահն է:

2009թ. նախագահական ընտրություններից հետո իրաժարական տվեց Իրանի ատոմային կազմակերպության նախագահ Ղուլամ Ռեզա Ադազադեն: Նրան փոխարինեց Ալի Աքբար Սալեհին, որ նույնպես նախագահի մտերիմն է:

Եվ այսպես ստացվեց, որ միջուկային ծրագրի հետ կապված քաղաքականության ստեղծումն ու բանակցությունների վերահսկումը ամբողջությամբ անցավ նախագահի ձեռքը: Եվ Ահմադինեժադը փորձեց երկխոսության մեջ մտնել Արևմուտքի հետ, ինչը թույլ կտար նրան բարձրացնել իր լեգիտիմության աստիճանը:

Արևմուտքի հետ բանակցությունների վերսկսման պատրաստակամության մասին Իրանը հայտնեց Վաշինգտոնին ուղղված հինգ էջանոց ուղերձի մեջ, որում ասվում էր, որ հանուն խաղաղության և իր ժողովրդի բարօրության, Իրանը պատրաստ է բանակցել ԱՄՆ-ի հետ<sup>5</sup>: Մա նախադեպը չունեցող մի նամակ էր, որ ցույց էր տալիս Իրանի գործող ղեկավարության վարած արտաքին քաղաքականության մեջ առկա փոփոխությունները<sup>6</sup>: Ուղերձում նշված առաջարկությունները Վաշինգտոնը ընդունեց, և փաստորեն կողմերը համաձայնվեցին խաղաղ բանակցությունների միջոցով լուծել երկու երկրների միջև առաջացած կնճիռներից մեկը՝ Իրանի միջուկային ծրագրի հարցը<sup>7</sup>:

Մինչ կողմերը կպայմանավորվեին բանակցությունները սկսելու տեղի ու վայրի վերաբերյալ, 2009 թվականի սեպտեմբերի 20-ին ԱՄՆ Փիթսբուրգ քաղաքում տեղի ունեցած ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի ընթացքում Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) ղեկավար Ալ-Բարադեին հայտարարեց, որ Իրանը շահագործման է հանձնել ուրանի հարստացման երկրորդ գործարանը, որը գտնվում է Ղոմ քաղաքում: Այս հայտարարությունը անակնկալի բերեց վեհաժողովին ներկա երկրների ղեկավարներին, ինչպես նաև ողջ համաշխարհային հանրությանը: Իրանը, սակայն, պարզաբանեց, որ ԱԷՄԳ-ը գործարանի կառուցման ու շահագործման վերաբերյալ տեղյակ է եղել շահագործումից առաջ, և որ Իրանը չի խախտել և ոչ մի օրենք:

<sup>5</sup> <http://documents.propublica.org/iran-nuclear-program-proposal#p=1> (20.11. 2009):

<sup>6</sup> Մինչ այդ Իրանը միջուկ իրաժարվել է բանակցել ԱՄՆ-ի հետ:

<sup>7</sup> Թեև նամակում խոսվում էր համագործակցության մասին, սակայն այնտեղ Թեհրանը չէր անդրադառնում իր միջուկային ծրագրին:

ԱԷՄԳ-ի այս հայտարարությունը, սակայն, ստիպեց հակաիրանական հայտարարություններով հանդես գալ ոչ միայն արևմտյան երկրներին, այլև միջուկային հարցով Իրանի դաշնակիցներին՝ Ռուսաստանին և Չինաստանին:

Այսպիսի հակաիրանական տրամադրություններով արևմտյան երկրները առաջարկեցին հանդիպել Իրանի հետ ու պարզաբանումներ ստանալ: Իրանը առաջին անգամ համաձայնվեց հանդիպել 5+1+1 ձևաչափով և քննարկել իր միջուկային ծրագիրը: Ճանդիպումը մի կողմից ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 5 անդամների և Գերմանիայի, իսկ մյուս կողմից Իրանի միջև տեղի ունեցավ 2009թ. հոկտեմբերի 1-ին ժնևում<sup>8</sup>: Հանդիպման շրջանակներում առաջին անգամ կայացավ նաև ԱՄՆ-Իրան երկխոսությունը. Իրանը ներկայացրեց միջուկային հարցերով բանակցող Սեյեդ Ջալիլին, իսկ ԱՄՆ-ը՝ փոխարտգործնախարար Ուիլիամ Բյորնզը:

Իրանը այս բանակցությունների ընթացքում մեկ անգամ ևս հայտարարեց, որ միջուկային էներգիա ունենալը իր ժողովրդի իրավունքն է, և որ նա չի պատրաստվում քննարկել այդ իրավունքը արևմտյան երկրների հետ:

Մասնավորապես, հանդիպման ընթացքում Իրանի ներկայացուցիչ Սեյեդ Ջալիլին համաձայնեց, որ Իրանը միջուկային զենք ստեղծելու իրավունք չունի, բայց հավելեց, որ այդ իրավունքը չունի և ոչ մի երկիր<sup>9</sup>: Նրա տեսակետն այն էր, որ բոլոր պետություններն էլ պիտի օգտվեն միջուկային էներգիա ունենալու իրենց իրավունքից, իսկ նրանք, ովքեր չարաշահելով այդ իրավունքը մասսայական ոչնչացման զենք են ստեղծել, պիտի պատժվեն և զինաթափվեն:

Այսպիսով, Իրանը՝ ի դեմս նախագահ Ահմադինեժադի, ցույց տվեց, որ կարող է խոսել Արևմուտքի հետ, և պաշտպանել իր երկրի իրավունքները: Եվ նա որոշակի հաջողությունների հասավ:

Այսպես, այս բանակցություններում առաջին անգամ Իրանից պահանջեցին ոչ թե դադարեցնել միջուկային ծրագիրը, այլ միայն թույլ տալ, որ ԱԷՄԳ-ի փորձագետները հետազոտություն անցկացնեն Իրանի՝ ուրանի հարստացման գործարաններում:

Իրանը իր հերթին համաձայնեց թույլ տալ ԱԷՄԳ-ի փորձագետներին ուսումնասիրություններ կատարել երկրի ատոմային կայաններում և համոզվել, որ իր նպատակը միայն խաղաղ միջուկային էներգիա ստանալն է<sup>10</sup>:

<sup>8</sup> <http://english.farsnews.com/newstext.php?nn=8807100783> (2.10.2009):

<sup>9</sup> <http://english.farsnews.com/newstext.php?nn=8807100771> (3.10.2009):

<sup>10</sup> <http://english.farsnews.com/newstext.php?nn=8807100771> (3.10.2009):

Ժնևում պայմանավորվածությունն ձեռք բերվեց նաև Իրանից մինչև հինգ տոկոս հարստացված ուրանը արտահանել Ռուսաստան, այնուհետ՝ Ֆրանսիա՝ հետագա հարստացման համար, և նոր միայն վերադարձնել Իրան վառելիքի տեսքով: Այս բանակցությունների ընթացքում պայմանավորվածությունն ձեռք բերվեց նորից հանդիպել երեք շաբաթ անց: Սա արևմտյան և իրանական պաշտոնյաները ևս դրական քայլ էին համարում, քանի որ վերջին երկու բանակցությունները բաժանված էին միմյանցից ավելի քան մեկ տարի ժամանակահատվածով:

Պատահական չէ, որ իրանական ՋԼՄ-ները ընդհանուր առմամբ դրական գնահատեցին այս բանակցություններն ու դրանք Իրանի դիվանագիտական հաղթանակ համարեցին: Այդպիսով, նրանք կատարեցին կառավարության վարկանիշը բարձրացնելու իրենց «առաքելությունը»<sup>11</sup>: Երկրի Հոգևոր առաջնորդը, սակայն, հայտարարեց, որ բանակցել Իրանի միջուկային ծրագրի շուրջ նշանակում է կասկածի տակ դնել խաղաղ միջուկային էներգիա ունենալու իր երկրի իրավունքը: Նա անդրադարձավ նաև ԱՄՆ-ի նոր նախագահ Օբամային՝ ասելով, որ վերջինս ավելի վատն է քան Ջորջ Բուշ կրտսերը<sup>12</sup>:

Մահմուդ Ահմադինեժադը, այնուամենայնիվ, ետ չկանգնեց իր որդեգրած քաղաքականությունից, և, ըստ էության, չէր էլ կարող դա անել, քանի որ արդեն Ժնևում պայմանավորվածություն էր ձեռք բերվել հաջորդ հանդիպման վերաբերյալ:

Եվ այսպես, Ժնևի հանդիպմանը հետևեցին Վիենայում կայացած բանակցությունները Իրանի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի հինգ անդամների և Գերմանիայի միջև: Այս բանակցությունների արդյունքում Իրանը վերջնագիր ստացավ իր պարտավորությունները կատարելու համար<sup>13</sup>:

Իրանը, սակայն, չչտապեց վերջնական պատասխան տալ իր որոշման վերաբերյալ: Ահմադինեժադի կառավարությունը փորձեց ժամանակ շահել

<sup>11</sup> Օրինակ՝ իրանական Isna գործակալությունը մեջբերում է Իրանի անվտանգության հանձնաժողովի անդամ Ահմադ Բիդելի հայտարարությունը, ըստ որի վեցնյակի հետ հանդիպման ժամանակ Իրանն իր միջուկային խաղաղ ծրագրից և ոչ մի քայլ ետ չի կանգնել: Իսկ իրանական Isna գործակալությունը մեջբերում է ԱՄՆ փոխարտգործնախարար Ուիլիամ Բյորնգի այն տեսակետը, թե Ժնևի հանդիպումը լավ հնարավորություն էր Իրանի համար միջազգային հանրությանը ապացուցելու, որ իր միջուկային ծրագիրը խաղաղ նպատակներ է հետապնդում: Նույնիսկ ընդդիմադիր Etemaad թերթը գրում է, որ Իրանի միջուկային քաղաքականության մեջ փոփոխություն է նկատվում, սակայն միաժամանակ մտավախություն է հայտնում, որ էթե դա միայն տակտիկական փոփոխություն է, ապա Եվրոպան կարճ ժամանակ անց դա կհասկանա և նորից կանցնի սպառնալիքների քաղաքականությանը:

<sup>12</sup> <http://www.leader.ir/langs/fa/index.php?p=contentShow&id=6082> (4.10.2009):

<sup>13</sup> <http://www.freerepublic.com/focus/news/2369134/posts> (6.11.2009):

միջուկային բանակցություններում, թեև տպավորությունն այնպիսին էր, թե Իրանի նախագահը, ի դեմս միջուկային հարցերով բանակցող Սայեդ Ջալիլի-ի, տվել է իր համաձայնությունը: Այս առաջարկը լիովին ընդունելի էր նախագահի համար, քանի որ լեզվատիրության խնդիր ունեցող Ահմադինեժադը հասկանում էր, որ չի կարող կոշտ դիրքորոշում ընդունել, մյուս կողմից էլ այն չէր վնասում երկրի շահերին: Ավելին, ընդունելով առաջարկը, Իրանը կարող էր գերհարստացված ուրանի ավելի մեծ պաշար ստանալ, քան հնարավոր է ստանալ սեփական երկրի ներսում:

Թեհրանը, սակայն, պահանջեց նախ ստանալ մինչև 20 տոկոս հարստացված ուրան, և նոր միայն տալ նվազ հարստացված ուրանի իր պաշարները: Մա արվեց այն պատճառով, որ Իրանը չէր վստահում Արևմուտքին, և մտավախություն ուներ, որ կզրկվի ուրանի իր պաշարներից առանց փոխհատուցում ստանալու:

Մինչ Ահմադինեժադի կառավարությունը փորձում էր երաշխիքներ ստանալ, որ Իրանից ուրան ստանալու դեպքում Արևմուտքը կկատարի իր պարտավորությունները, Իրանի Մեջլիսի խոսնակ Բահանարը հայտարարեց, թե Հոգևոր առաջնորդն ու Ազգային անվտանգության կոմիտեի անդամները այն կարծիքին են, որ քանի դեռ չկան երկկողմ հարաբերություններ ԱՄՆ-ի հետ, Իրանը չի կարող բանակցել այդ երկրի հետ:

Այս հայտարարությունից հետո Ահմադինեժադը երկընտրանքի առաջ կանգնեց: Կամ հնազանդվել երկրի հոգևոր առաջնորդի կամքին, կամ շարունակել իր որդեգրած քաղաքականությունը: Նախագահը, բավական ուժեղ չզոնվեց այս անգամ էլ հակառակվելու Խամենեյին, հատկապես, որ Մաջլիսն էլ դեմ քվեարկեց Իրանից ուրանի դուրս բերման նախագծին: Իրանը հրաժարվեց ընդունել Արևմուտքի առաջարկը, ինչը վերջինիս ստիպեց ծայրահեղ քայլերի գնալ:

2009թ. նոյեմբերի 27-ին ԱԷՄԳ-ի Կառավարիչների խորհրդի նիստի ժամանակ կայացած քվեարկության արդյունքում որոշվեց Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցներ կիրառել: Այս նախագծին կողմ քվեարկեցին կազմակերպության 35 անդամ-երկրներից 25-ը, որոնց թվում նաև Իրանի ռազմավարական գործընկերներ համարվող Ռուսաստանն ու Չինաստանը<sup>14</sup>:

Նոյեմբերի 29-ին արդեն Իրանը կատարեց պատասխան քայլը: Երկրի Մեջլիսում ձայների ճնշող մեծամասնությամբ որոշում ընդունվեց Իրանի

<sup>14</sup> <http://www.iaea.org/NewsCenter/News/2009/bog271109.html> (28.11.2009)

տարածքում ուրանի հարստացման ևս տաս գործարան կառուցել և ուրանը հարստացնել մինչև 20%, նախկին հինգի փոխարեն:

Եվ այսպես, 2009թ. երկրորդ կիսամյակում Իրանի միջուկային հարցի շուրջ նոր քաղաքական իրավիճակ ստեղծվեց: Մի կողմից Իրանի պատրաստակամությունը երկխոսել Արևմուտքի հետ, մյուս կողմից էլ ԱԷՄԳ-ի հայտարարությունն առ այն, որ Իրանում ուրանի հարստացման նոր գործարան է կառուցվել, հակասական վերաբերմունք ստեղծեցին այդ երկրի որդեգրած քաղաքականության նկատմամբ: Արևմուտքը, սակայն, նախընտրեց բանակցությունների միջոցով լուծել ստեղծված խնդիրները: Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադն էլ, իր հերթին, փորձեց որոշ փոխզիջումների շնորհիվ հասնել Իրանի միջուկային ծրագրի խաղաղ կարգավորմանը: Երկրի հոգևորականները, սակայն, և մասնավորապես հոգևոր առաջնորդ Խամենեին դեմ էին Արևմտյան երկրների հետ բանակցություններին: Նրանց կոշտ արտաքին քաղաքականությունը թույլ չտվեց ընդունել Գերտերությունների կողմից առաջարկված նախապայմանները: Արդյունքում ԱԷՄԳ Կառավարիչների խորհուրդը նոր բանաձև ընդունեց Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ, որը ստիպեց ՄԱԿ-ի ԱԽ-ին Իրանի նկատմամբ նոր տնտեսական պատժամիջոցների ենթարկել:

Այսպիսով, Իրանի ներքին խնդիրները ակներևաբար ազդում են նաև նրա արտաքին քաղաքականության վրա: Եվ քանի դեռ կան չլուծված բազմաթիվ ներքին խնդիրներ, Իրանը դժվար թե կարողանա հաջողությունների հասնել արտաքին աշխարհի հետ շփումներում:

## Մուսուլմանները Վրաստանում «Վարդերի հեղափոխությունից» հետո. քրիստոնյա մեծամասնություն և մուսուլման փոքրամասնություն

*Մկրտչյան Ս.*

### Ընդհանուր դրույթներ

Քրիստոնեությունը համարվել է վրացական ինքնության կարևորագույն բաղադրիչը և հիմնական կրոնական պատկանելիությունը բնակչության մեծամասնության համար: Վրաստանում անցկացված վերջին՝ 2002 թ. մարդահամարի արդյունքներով, որտեղ ներառված չեն Աբխազիայի և Հարավային Օսիայի տվյալները, Վրաստանում բնակվում էր 433 784 մարդ մուսուլմանական ինքնությամբ, որը կազմում է ընդհանուր բնակչության 9.9%:

Առաջին մուսուլմանները Քարթլում հայտնվեցին 7-րդ դարում, արաբական նվաճումների հետևանքով<sup>1</sup>, թեև երկրում իսլամի զանգվածային և ինտենսիվ մուսուլմանացումը համարվում է ուշ միջնադարը և արդի շրջանի սկիզբը<sup>2</sup>: Բացի այդ, զգալի էր նաև թուրքալեզու մուսուլմանների հոսքը, որոնք Ցարական շրջանում հայտնի էին որպես «թաթարներ», իսկ հետագայում՝ Սովետական շրջանում վերանվանվեցին որպես «ադրբեջանցիներ»<sup>3</sup>: Այսօր Վրաստանում առանձնացնում են մուսուլման բնակչության երկու հիմնական խումբ՝ ա) Աջարիայի ինքնավար հանրապետության վրացի բնակչության մի մասը, բ) ադրբեջանցիներ, ինչպես նաև և մի քանի փոքրաթիվ խմբեր՝ ավարներ, քիսեր, քրդեր և այլն: Ըստ էության, այս երկու համայնքները գոյատևում են միմյանցից անկախ և առանց միմյանց հետ համակարգված կապերի, բացառությամբ գուցե այն դեպքի, որ Թբիլիսիում սուննի և շիա մուսուլմանները այցելում են քաղաքում միակ գործող Ջումմա մզկիթը<sup>4</sup>:

«Վարդերի հեղափոխությունից» հետո վրաստանյան քաղաքական և հասարակական կյանքում ակտիվացան լիբերալ արժեքները և բարեփոխումները, համենայն դեպս պաշտոնական քաղաքականությամբ հայտարարվում և որոշակի գործողություններ էր իրականացվում այդ ուղղությամբ: Բարեփոխման և հասարակական տարբեր ոլորտներում ազատականացման մի-

<sup>1</sup> G. Asatrian, and H. Margarian, “The Muslim Community of Tiflis (8<sup>th</sup>-9<sup>th</sup> centuries)”, Iran and the Caucasus N 8.1; 2004; 29-52, p. 29.

<sup>2</sup> G. Sanikidze and Ed. W. Walker, ‘Islam and Islamic practices in Georgia’, BPS Working Paper Series, University of California, Berkeley, 2004, p. 3.

<sup>3</sup> Լույն տեղում

<sup>4</sup> B. Balci, “Is there a place for Islam in Mikhail Saakashvili Christian Georgia?[1/3]” at [http://www.caucaz.com/home\\_eng/breve\\_contenu.php?id=177](http://www.caucaz.com/home_eng/breve_contenu.php?id=177) (12.12.09)

տումները ինչ-որ առումով հասարակական որոշ խմբերի և իրողությունների հետ հակասության մեջ են, որոնք որոշակի առումով կարող են դիտվել որպես «ճնշում ներքևից»: Կրոնի ոլորտում մասնավորապես այդ ճնշումը պայմանավորված է երկու հիմնական գործոնով: Առաջինը պայմանավորված է Վրաց ուղղափառ եկեղեցու (այսուհետ՝ ՎՈՒԵ) դիրքորոշմամբ, որին հետևում է հասարակության մի մեծ մաս, որի համար ՎՈՒԵ-ն ունի բացառիկ դեր և հեղինակություն (ավելի մանրամասն, տե՛ս հոդվածի «հասարակական կարծիք» մասում): Երկրորդ ուղղությունը պայմանավորված է այն փաստով, որ աղբբեջանցիները, լինելով Վրաստանի երկու հիմնական մուսուլման համայնքներից մեկի ներկայացուցիչներ, միաժամանակ հանդիսանում են նաև ազգային փոքրամասնություն<sup>5</sup>, ինչն էլ տեղավորվում է վրաստանյան հասարակությունում տիրող «հյուր-տանտեր» դիսկուրսի<sup>6</sup> շրջանակներում:

### **Լիբերալ փոփոխությունների դրսևորումներ և պետական նոր դրոշ՝ քրիստոնեական խորհրդանիշով**

Անդրադառնանք Միխեիլ Սաակաշվիլու կողմից բերված լիբերալ հոսանքների մի քանի դրսևորումների, որոնք այս կամ այն կերպով, ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են հասարակության կրոնի ոլորտին:

Վարդերի հեղափոխությունից հետո երկրում տիրող քառտիկ և անկառավարելիության մթնոլորտի կարգավորումն անդրադարձավ նաև կրոնական ոլորտի իրավիճակին. Սաակաշվիլու կառավարման առաջին իսկ տարիների ընթացքում<sup>7</sup> հարթվում և շտկվում էին մասնավորապես անհանդուրժողականության և բռնության ակնհայտ դրսևորումները: Նման մի օրինակ էր Վասիլ Մկալաշվիլի անունով հոգևորականի ձեռքակալումը, որը հայտնի էր իր բացառիկ անհանդուրժողականությամբ և բռնության գործողություններով այլակրոն ներկայացուցիչների նկատմամբ<sup>8</sup>:

Նկատելի էր նաև որոշակի փոփոխություն պետական գործիչների հանրային ելույթներում: Օրինակ, նախագահ Սաակաշվիլին առաջին անգամ բացահայտ հայտարարեց, որ «աջարները մեր մուսուլման եղբայրներն

<sup>5</sup> 2002 թ. մարդահամարի արդյունքերով աղբբեջանցիների թիվը Վրաստանում կազմել է 284 761 մարդ կամ բնակչության 6,1 տոկոսը:

<sup>6</sup> B. Balci, “Is there a place for Islam in Mikhail Saakashvili Christian Georgia?[1/3]”, [http://www.caucas.com/home\\_eng/breve\\_contenu.php?id=177](http://www.caucas.com/home_eng/breve_contenu.php?id=177) (14.12.09)

<sup>7</sup> J. Weatley, Obstacles Impeding the Regional Integration of the Kvemo Kartli Region of Georgia, ECMI Working Paper #23, February 2005.

<sup>8</sup> Felix Corley, Georgia: Religious freedom survey, August 2004, Forum 18 News Service <<http://www.forum18.org>>

են»<sup>9</sup>: Մեկ այլ առանձնահատկությունն էլ այն էր, որ պետական բարձրաստիճան պաշտոնյաները՝ ներառյալ նախագահ Սաակաշվիլին սկսեցին ավելի հաճախ և ավելի հրապարակային այցելել երկրի մուսուլման համայնքներ, այցելել մզկիթներ՝ շնորհավորելու Կուրբան Բայրամի՝ Վրաստանում ամենատարածված և զանգվածային նշվող տոնի կապակցությամբ: Հանրության և ՋԼՄ-ների կողմից մուսուլմանական է ընկալվում նաև Նովրուզ Բայրամը, որը Վրաստանի ադրբեջանական համայնքի տարածված տոներից է, ինչի կապակցությամբ նախագահ Սաակաշվիլին սովորաբար այցելում է ադրբեջանական համայնք: Այդ օրերը առիթ են հանդիսանում խոսելու մուսուլման համայնքներում առկա հիմնախնդիրների, նրանց կարևորության և հանդուրժողականության մասին. այս ամենը իրենց արձագանքն են գտնում ՋԼՄ-ներում: Նման այցերից մեկի ժամանակ՝ 2010թ. մարտի 21-ին Նովրուզի տոնակատարությունների կապակցությամբ Մարնեուլի կատարած այցի ժամանակ հայտարարեց, որ Նովրուզ Բայրամը ճանաչվելու է պետական տոն ողջ Վրաստանի համար՝ մասնավորապես նշելով. «Նովրուզ Բայրամը ձեզ հետ ողջ Վրաստանն է տոնում այսօր, որովհետև դուք մեր մսից ու արյունից եք, դուք Վրաստանի կարևոր մասն եք: Մենք միասին ենք պայքարելու ավելի լավ ապագայի համար, միասին էլ տոնակատարություններ ենք նշելու: Այսօրվանից Նովրուզ Բայրամը Վրաստանի համապետական տոն է լինելու»<sup>10</sup>: Նշենք նաև, որ նախագահի այս հայտարարությունից մեկ ամիս առաջ, փետրվարի 23-ին (2010 թ.) ՄԱԿ-ի Գլխավոր Ասսամբլեան իր 71-րդ պլենար նիստում մարտի 21-ը ճանաչեց «Նովրուզի միջազգային օր»:<sup>11</sup>

Շարունակվում են իսլամի վերածննդի և կրոնական գիտելիքների ու արարողակարգերի աշխուժացման գործընթացներ, որոնք ըստ էության սկսվել էին դեռևս «վերակառուցման» շրջանից և ավելի ակտիվացել հետխորհրդային ժամանակաշրջանի ընթացքում: Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ վերածննդի հիմքը և հենքը պայմանավորված է երկու հիմնական գործոնով՝ ադրբեջանցիների համար Իրանից և ավելի նվազ չափով նաև Բաքվից, իսկ Աջարիայի մուսուլմանների համար՝ Թուրքիայից ուղղորդվող հոսքերով<sup>12</sup>: Այստեղ տեղին կլինի նշել նաև մեկ այլ երևույթի մասին, այն է՝ Աջա-

<sup>9</sup> P. Барамидзе. «Ислам в Аджарии» Азербайджан в Мире 4 (6) 2006, стр. 86-93.

<sup>10</sup> <http://www.president.gov.ge/?l=E&m=0&sm=1&id=3247>, (27.03.10)

<sup>11</sup> մանրամասները տե՛ս <http://www.un.org/News/Press/docs/2010/ga10916.doc.htm>, (27.03.10)

<sup>12</sup> B. Balci, “Is there a place for Islam in Mikhail Saakashvili Christian Georgia?[2/3]” at [http://www.caucas.com/home\\_eng/breve\\_contentu.php?id=179](http://www.caucas.com/home_eng/breve_contentu.php?id=179); B. Balci, “Is there a place for Islam in Mikhail Saakashvili Christian Georgia?[3/3]”, [http://www.caucas.com/home\\_eng/breve\\_contentu.php?id=180](http://www.caucas.com/home_eng/breve_contentu.php?id=180), (21.12.09)



րիայում տեղի ունեցող բնակչության քրիստոնեացման գործընթացների և քաղաքականության մասին, որոնք իրենց վրա են հրավիրել հետազոտողների ուշադրությունը<sup>13</sup>:

Հանրային դիսկուրսում մեկ այլ դրվագ է պետական դրոշի փոփոխությունը, և նրանում քրիստոնեական խաչերի հայտնվելը՝ ի ցույց Եվրոպական և քրիստոնեական արժեքներին հավատարիմ լինելու և հետևելու մտադրության: Այս առանձնահատկությունը մուսուլմանների, հատկապես նրանց ինտելեկտուալ ու կազմակերպական շրջանակների մոտ առաջացրել են անհամաձայնության և դիսկոմֆորտի զգացումներ:

### **Իրավական հիմնախնդիրներ**

Վրաստանի սահմանադրությունը երաշխավորում է քաղաքացիների արտահայտման, մտքի, խղճի, դավանանքի և կրոնի ազատությունները (հոդված 19, կետ 2): Այս իրավունքները պաշտպանված են նաև քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներով (հոդվածներ 115, 155 և 156), որոնք նաև պատիժ են սահմանում բռնությամբ և բռնության սպառնալիքով, կամ պաշտոնի չարաշահմամբ, ապօրինի միջամտությամբ քաղաքական, սոցիալական և կրոնական կազմակերպություններ հիմնելուն խոչընդոտելու համար (հոդված 166):<sup>14</sup> Սակայն 2002թ. պետությունը և ՎՈՒԵ –ն կոնկրետ ստորագրեցին, որով փաստվեց ՎՈՒԵ-ի առանձնահատուկ դերը. վերջինին վերապահվեցին մի քանի բացառիկ իրավունքներ. անձեռնմխելիություն, ՎՈՒԵ սպասավորներին զինվորական ծառայությունից ազատում, բանակում և ազատագրկման վայրերում նրանց մուսքի բացառիկ հնարավորություն, ՎՈՒԵ-ին շնորհվեց խորհրդակցական դեր որոշումներ ընդունելիս, հարկային առավելություններ, ԽՍՀՄ տարիներին առգրավված գույքի և շենքերի վերադարձ և նման մի քանի այլ առավելություններ: Փաստորեն, արդեն իսկ անհավասար պայմաններում են մյուս կրոնական կազմակերպությունները ՎՈՒԵ-ի համեմատ<sup>15</sup>: Այս առումով պետք է նշել նաև, որ Վրաստանի նախկին հանրային պաշտպանի՝ Սոգար Սուբարու գործունեության մեջ այս հարցը նշանակալի տեղ ուներ: Այս համատեքստում կարևոր է կրոնական

<sup>13</sup> Ավելի մանրամասն տե՛ս B. Balci, “Is there a place for Islam in Mikhail Saakashvili Christian Georgia?[1/3]”, [http://www.caucaz.com/home\\_eng/breve\\_contenu.php?id=177](http://www.caucaz.com/home_eng/breve_contenu.php?id=177), (21.12.09)

<sup>14</sup> COE Report, Opinion on Georgia, Public ACFC/OP/I(2009)001, Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities, Strasbourg, 10 October 2009.

<sup>15</sup> Նույն տեղում:

կազմակերպությունների գրանցման հիմնախնդիրը: Անկախ Վրաստանի գոյության 15-րդ տարում միայն հնարավոր եղավ կրոնական կազմակերպությունների գրանցումը, երբ 2005թ. ապրիլին խորհրդարանը քաղաքացիական օրենսգրքում կատարեց փոփոխություններ, որով հնարավոր դարձավ կրոնական կազմակերպությունների գրանցումը Արդարադատության նախարարությունում: Այնուամենայնիվ, այս օրենքով կրոնական կազմակերպությունները հանրային իրավունքի սուբյեկտներ չեն և կարող են գրանցվել որպես հասարակական կազմակերպություններ կամ հիմնադրամներ: Թեև որոշ կազմակերպություններ գրանցվեցին (այդ թվում նաև «Վրացի մուսուլմանների կոնգրես» կազմակերպությունը), սակայն Հայ առաքելական եկեղեցին, կաթոլիկ եկեղեցին, և մուսուլմանական կազմակերպությունների մեծ մասը նման կարգավիճակը համարում են անհարիր և պահանջում են որպես կրոնական կազմակերպություններ գրանցվելու հնարավորություն<sup>16</sup>:

Սզկիթներ կառուցելը, նրանց ունեցվածքի և ԽՍՀՄ տարիներին առգրավված ունեցվածքի վերադարձի խնդիրը և այդ ամենը օրինական հստակ դաշտում կազմակերպելու հարցը նույնպես սպասում է իր լուծմանը, այն դեպքում երբ 2002թ. կոնկորդատով ՎՈՒԵ համար հիմնախնդիրը կարգավորված է: Համարվում է, որ ակտիվացել են սզկիթների կառուցման գործընթացները Վրաստանում, սակայն որոշակի ոչ պաշտոնական և տեղական բնույթի խոչընդոտներ այնուամենայնիվ կան<sup>17</sup>: Այս առումով պաշտոնական հիմնավորումն այն է, որ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունից հետո, պետությունը փորձում էր զգուշավոր լինել և ճշտել ֆինանսավորման աղբյուրները<sup>18</sup>:

Հանրակրթության մասին 2005 թ. օրենքը (հոդված 13(2)) արգելում է որպես կրթական գործընթացի մաս իրականացնել կրոնական դաստիարակություն, կրոնափոխություն և հարկադիր ձուլում: Սակայն հատկապես միջազգային կազմակերպությունները հաճախ են անդրադառնում ՎՈՒԵ և դպրոցի միջև եղած սերտ համագործակցության հիմնահարցին: «Կրոն և հասարակություն» դասընթացները որոշ վայրերում կրում են պարտադիր և գործնա-

<sup>16</sup> F. Corley, Georgia: Religious minorities still second-class faiths? Forum 18 News 25 November 2005, <http://www.forum18.org> (21.12.09)

<sup>17</sup> Ս. Մկրտչյան, դաշտային ազգագրական նյութեր, 2009 թ., դեկտեմբեր:

<sup>18</sup> Ethnic-confessional groups and problems of civic integration in Georgia: Azeri, Javakheti Armenian and Muslim Meskhetian communities. – Ghia Nodia (ed.), Caucasus Institute for Peace, Democracy and Development, Tbilisi, 2002, p. 18

կան բնույթ կամ ընթանում են ՎՈՒԵ ներկայացուցիչների մասնակցությամբ<sup>19</sup>: Մանավանդ բազմակրոն հասարակության դպրոցներում ուղղափառ քրիստոնեական արարողակարգերի ուսուցանումը դրական դիտվել չի կարող, և օրինակ, Եվրոպայի խորհրդի 2009 թ. զեկույցը մասնավորապես Կրթության և գիտության նախարարությանը հորդորում է միջոցառումներ ձեռք առնել հարցի ուսումնասիրության և կարգավորման համար:

### **Հասարակական կարծիք**

Վրաստանում կրոնի ունեցած նշանակալի դերի, մասնավորապես ՎՈՒԵ նշանակության մասին շատ է խոսվել: Քաղաքացիների 84 տոկոսը, ըստ 2002 թ. մարդահամարի տվյալների, իրեն համարում է ՎՈՒԵ հետևորդ: Վրաստանի քաղաքային բնակավայրերում իրականացված մի հարցման (2004թ.) ժամանակ հարցվածների 95 տոկոսը նշել է իր համար կրոնի կարևորության մասին<sup>20</sup>, մեկ այլ հարցման տվյալներով (2007թ.)<sup>21</sup> հարցվածների 72.1 տոկոսը նշել է, որ կրոնը կարևոր դերակատարում ունի իր կյանքում: ՎՈՒԵ պատրիարքարանը վայելում է հասարակության բացահայտ վստահությունը, թերևս ամենաշատը մյուս այլ հասարակական-քաղաքական կառույցների համեմատությամբ: Ըստ քաղաքային բնակավայրերում իրականացրած հարցման (2004 թ.) ՎՈՒԵ պատրիարքարանին վստահում կամ լիովին վստահում է հարցվածների 85 տոկոսը<sup>22</sup>, 95 տոկոսն էլ համարում է, որ ուղղափառ քրիստոնեությունը պետք է հռչակել պետական կրոն: Կրոնական հանդուրժողականության տեսանկյունից հասարակական կարծիքի հիերարխիայում մուսուլմաններն ու հրեաները զբաղեցնում են առաջին երկու հորիզոնականները: Ընդհանրապես, «ավանդական» համարվող կրոնական ուղղությունների նկատմամբ հասարակական կարծիքը ավելի դրական է քան

<sup>19</sup> Մանրամասն տե՛ս COE Report, Opinion on Georgia, Public ACFC/OP/I(2009)001, Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities, Strasbourg, 10 October 2009 և F. Corley, Georgia: Religious minorities concerned by "voluntary" 'Religion and Culture' classes, Forum 18 News Service, 19 November 2003 <http://www.forum18.org> (21.12.09)

<sup>20</sup> G. Nizharadze, E. Jgerenaya, Ya. Kachkachishvili, R. Mshvidobadze, G. Khutsishvili. Urban Population of Georgia on issues related to religion. 104-121//Role of Orthodoxy in the States and Societies of Georgia and Russia, Materials of Georgian-Russian conference. Heinrich Beoll Foundation, Tbilisi 2004.

<sup>21</sup> CRRС Data Initiative 2007, [www.crrc.ge](http://www.crrc.ge)

<sup>22</sup> Ըստ CRRС Data Initiative 2009 հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց գրեթե նույն վստահության ցուցանիշը՝ 84 տոկոս: (Տվյալների բազային կարելի է ծանոթանալ [www.crrc.ge](http://www.crrc.ge) կայքում):

«ոչ-ավանդական» կրոնական ուղղությունների՝ «աղանդների» նկատմամբ: Հարցվածների 50 տոկոսը դրական վերաբերմունք է արտահայտել մուսուլմանների նկատմամբ: Հարցման եզրակացություններում նշվում է նաև, որ հասարակությունը ավելի ծանոթ է մուսուլմաններին և իսլամին, ինչպես նաև, որ մուսուլմանների ինտեգրվածության աստիճանը ամենաբարձրն է մյուս կրոնական ուղղությունների հետևորդների հետ համեմատած:<sup>23</sup>

---

<sup>23</sup> G. Nizharadze, E.Jgerenaya, Ya.Kachkachishvili, R. Mshvidobadze, G. Khutsishvili. նշվ.աշխ:

## Քրիստոնեական և մուսուլմանական մշակույթների երկխոսության որոշ հիմնահարցեր

Հ. Քոչարյան

Իսլամի և քրիստոնեության փոխադարձ շփումները սկսում են դեռ իսլամի ծագման և տարածման առաջին օրերից: 7-րդ դարի Արաբական թերակղզու բնակչությունը ծանոթ էր այնպիսի միաստվածական կրոնների, ինչպիսին էին հրեականությունը, քրիստոնեությունը և միաստվածության տեղական տարատեսակ հանիֆիականությունը:

Իսլամի և քրիստոնեության փոխադարձ շփումների պատմությունը դարերի ընթացքում արձանագրել է լարվածության, թշնամանքի, պատերազմի, պայքարի և համագործակցության ու խաղաղ համակեցության շրջաններ: Մակայն պետք է արձանագրել, որ այն, ինչ այսօր ընդունված է անվանել երկխոսություն, որջ միջնադարում, ինչպես նաև նոր և, որոշ վերապահումներով, նորագույն ժամանակաշրջանում, եղել է մշակույթային արժեքների ինքնաբուխ փոխանակման գործընթաց:

Արդի փուլում իսլամի և քրիստոնեության միջև երկխոսությունը<sup>1</sup> հիմնականում ընկալվում է որպես գիտակցված կողմորոշում դեպի համակեցություն և փոխընկալում: Ընդհանրապես, երկխոսությունը մեկից ավելի սուբյեկտների միջև տեղի ունեցող կոմունիկատիվ ակտ է, որի մեջ ներգրավված սուբյեկտներից յուրաքանչյուրը ընդունում է դիմացինի՝ «ԱՅԼ» լինելու իրավունքը: Նման մոտեցման պարագայում է միայն հնարավոր խոսել կառուցողական հարաբերությունների կայացման մասին: Ի հավելումս վերը նշվածի՝ կոմունիկատիվ ակտի կայացման համար նաև անհրաժեշտ է, որ կոմունիկացիայի մեջ ներգրավված սուբյեկտները խոսեն առավելագույն ընդհանրություններ ունեցող «բառարանով»<sup>2</sup>: Այսինքն՝ նրանց բառարաններում առկա «իմաստները» պետք է լինեն հնարավորին չափ մոտ և կրեն համարժեք իմաստային ծանրաբեռնվածություն:

<sup>1</sup> Իսլամի և քրիստոնեության մասին խոսելիս պետք է հիշել, որ թե՛ առաջինը, և թե՛ երկրորդը միատարր համակարգեր չեն և նրանցից յուրաքանչյուրը բաժանված է տարատեսակ հոսանքների, շարժումների և աղանդների: Մուսլիմ հողվածում գիտակցաբար անդրադարձ չի կատարվում բոլոր այդ ուղղությունների փոխհարաբերությունների մասնավոր դրսևորումներին, քանի որ մեր ուսումնասիրությունը նվիրված է իսլամի և քրիստոնեության միջև երկխոսությանը խոչընդոտող խնդիրների վերաբերյալ տեսական հարցադրումների ձևակերպմանը:

<sup>2</sup> «Բառարան» եզրը օգտագործվում է լայն իմաստով, որը ներառում է ցանկացած նշանային և իմաստային համակարգեր:

Իսլամի և քրիստոնեության պարագայում ընդհանուր բառարանի բացակայության մասին վկայող վառ օրինակ է 1976 թ. Տրիպոլիում կայացած միջկրոնական հեղինակավոր համաժողովի ընթացքում կաթոլիկ վանականի կողմից արտահայտած այն կարծիքը, որ նա մուսուլմանների նման հավատում է միակ Աստծուն և խնդիր չի տեսնում ճանաչել Մուհամմադին՝ որպես Նրա մարգարե: Հաջող օրը մուսուլմանական հիմնական պարբերականները գրեցին, որ կաթոլիկ վանականը իսլամ է ընդունում: Խնդիրն այն էր, որ կաթոլիկ հոգևորականը իր արտահայտած խոսքում մուսուլման բարձրաստիճան կրոնավորների ներկայությամբ, ըստ էության, արտասանել է «շահադան» (Չկա աստված բացի Ալլահից և Մուհամմադն է նրա մարգարեն), ինչը հանդիսանում է առաջին քայլը իսլամ ընդունելու համար:

Պատմության կտրվածքով իսլամի և քրիստոնեության միջև փոխհարաբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հիմնականում կրել է բանավիճային բնույթ: Այս ոլորտում միջնադարյան բանավիճային գրականության հիմնական ձևավորողն է եղել Հովհաննես Դամասկոսցին (7-8-րդ դդ), որը իր «Ակունք իմաստության» («Ակունք գիտելիքի») գրքի «Հերետիկոսությունների (աղանդների) մասին» գլխի մի ստվար մասը նվիրել է իսլամի հիմնադրությունների և դրանք կրողների հետ բանավեճին: Բանավիճային հետաքրքիր նյութ է պահպանվել նաև հայ մատենագիրներ Մեբեուսի և Կաղանկատվացու մոտ:

Ինչևիցե, եթե փորձենք իսլամի և քրիստոնեության շփումների վերաբերյալ միջնադարյան բանավիճային նյութը համակարգել, ապա այն կարելի է առանձնացնել չորս հիմնական թեմատիկ խմբերի: Այսպիսով, միջնադարում քրիստոնեական հեղինակների հիմնական ջանքերը ուղղված էին ցույց տալու, որ.

- (ա) քրիստոնեության հետ համեմատած՝ իսլամը կայացած համակարգ չէ,
- (բ) Մուհամմադի մարգարեական հավակնությունները անհիմն են,
- (գ) մուսուլմանների հավակնությունները առ այն, որ Ղուրանը Աստվածային խոսք է, հիմնավորված չեն և
- (դ) մուսուլմանների ապրելակերպը անբարո է:

Ի հակադրումն սրան՝ ոչ քրիստոնեական դաշտից դիտելիս ձևավորվում է մեկ այլ պատկեր, որտեղ էլ անհասկանալի և բացասական նշանով է ընկալվում քրիստոնեականը: Այս առումով հետաքրքիր օրինակներ են 11-12-րդ դարի մուսուլման հեղինակ Ուսամա իբն Մունկիդի (1095-1188թթ) հիշատակումները իր «Քիթաբ ալ-Իթիբար» գրքում, որտեղ նա իր կյանքից բերված

բազմաթիվ պատմություններով մատնանշում է ֆրանկների (խաչակիրների) «անկիրթ», «անբարո» պահվածքի և ապրելակերպի մասին:

Վերը շարադրվածից կարելի է տեսնել, որ անգամ միջնադարում՝ Հովհաննես Դամասկոսցու և Իբն Մունկիդի միջև ընկած չորս դարյա բանավիճային ժանակահատվածում, հնարավոր չի եղել մշակել ընդհանուր բառարան և երկու առանձին արժեհամակարգերի կրողները շարունակել են խոսել յուրաքանչյուրը իր «գործիքով», որը անհասկանալի է մնացել դիմացինի համար: Նույն գործընթացը շարունակվել է նաև ավելի ուշ միջնադարում և, ըստ էության, իսլամի և քրիստոնեության փոխշփումները մնալով բանավիճային դաշտում ու չտեղափոխվելով երկխոսության դաշտ, գրեթե նույն խնդիրների ակտուալությունը ժառանգել են նաև նոր և նորագույն ժամանակաշրջաններին: Բանավեճի հիմնական նյութը վերաբերում էր Մուսամմադի մարգարեության իսկությանը և Ղուրանի ասվտածատուր լինելուն:

Պետք է նշել, որ կրոնական երկխոսության գործում բավականին շատ միջոցառումներ է իրականացրել կաթոլիկ եկեղեցին, որը իսլամի և քրիստոնեության միջև երկխոսությանը նվիրված բազմաթիվ համաժողովներ, գիտաժողովներ և կյոք սեղաններ է կազմակերպել: Դեռ 1965թ Վատիկանի երկրորդ համաժողովում ընդունվեց հայտնի «Nostra aetate» փաստաթուղթը, որը նվիրված էր կաթոլիկ եկեղեցու վերաբերմունքին և դիրքորոշմանը ոչ քրիստոնեական կրոնների վերաբերյալ և որոշակի հստակեցում մտցրեց իսլամի և կաթոլիկ քրիստոնեության միջև հարաբերությունների մեջ:

Ժամանակակից եվրոպական (ընդհանրական մոտեցմամբ՝ արևմտյան) դիսկուրսում իսլամի և քրիստոնեության փոխհարաբերությունը արտահայտված է «իսլամ-արևմուտք» հարթությամբ, որտեղ «իսլամ» եզրով ընդունված է առանձնացնել իսլամական արժեհամակարգի վրա հիմնված հասարակությունները՝ չառանձնացնելով իսլամի մեջ տեղ գտած բազմատեսակ ուղղությունները, հոսանքները և շարժումները, իսկ «արևմուտք» եզրով առանձնացվում են բացառապես քրիստոնեական արժեհամակարգի վրա հիմնված հասարակություններ:

Առաջինը, որը առանձնանում է այսօր իսլամ-արևմուտք դիսկուրսում, վերաբերում է «կոմունիկացիայի» մեջ ներքաշված սուբյեկտների ասիմետրիկ փոխհարաբերություններին, որոնք իրենց հերթին արտացոլում են գլոբալացվող աշխարհում ուժերի ասիմետրիկությունը: Ասիմետրիկությունը կանխորոշում է նաև այս դիսկուրսի բնույթն ու բովանդակությունը: Մի արժեքային համակարգի կողմից արժեքների ասիմետրիկ պարտադրանքը մեկ այլ արժեհամակարգին, որի համար դրանք բացատրված չեն կամ էլ պարզապես ան-

բացատրելի են սեփական բառարանի միջոցով, ծնում է նաև ասիմետրիկ պատասխան. պայթում են երկնաքերեր, մետրոներ, ավտոբուսներ և այլն:

Իսլամ-Արևմուտք հարաբերությունները բազմակողմ և բազմաշերտ են: Խնդիրն այն է, որ այս բազմաշերտությունն ու բազմակողմանիությունը իր բովանդակային մասով կտրուկ տարբերվում է՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքից ենք նայում այս հարաբերություններին՝ իսլամի, թե՞ Արևմուտքի:

Իսլամի և Արևմուտքի միջև հարաբերությունները ժամանակակից եվրոպական դիսկուրսում բաժանված են մի քանի ոլորտների: Դրանք են՝ երկխոսություն կրոնական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և հասարակական բնագավառներում: Արևմտյան տեսակետից սա բավականին օրինաչափ և հասկանալի բաժանում է, քանի որ արևմտյան տիպի հասարակություններում այս ոլորտները առանձին են, ինչը չի կարելի ասել իսլամի պարագայում: Իսլամական արժեքային համակարգի վրա կազմակերպված հասարակության մեջ այս ոլորտները առանձին չեն և միշտ ունեն իսլամ ինդեքսը (այսինքն՝ կրոնական<sup>իսլամ</sup>, տնտեսական<sup>իսլամ</sup>, սոցիալական<sup>իսլամ</sup>, քաղաքական<sup>իսլամ</sup> և հասարակական<sup>իսլամ</sup> ոլորտներ): Սա իր հերթին վկայում է, որ այս երկխոսությունը իրականում դատապարտված է ձախողման, քանի որ բաղկացուցիչ տարրերը համահավասար չեն, ինչը իր հերթին նույնպես ընդհանուր բառարանի բացակայության արդյունք է:

Ընդհանրապես, պետք է ընդունել մի կարևոր հանգամանք. իսլամական և արևմտյան արժեհամակարգերը մշակել են հասարակության կազմակերպման իրենց ուրույն մոդելները, որոնք տվյալ համակարգերի պատմական զարգացման արդյունք են և իրարից տարբերվում են հասարակության կազմակերպման գործիքներով: Արևմտյան տիպի հասարակության կազմակերպման հիմնական ձևը ժողովրդավարական մոդելն է, որի հիմնական գործիքներն են մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը և արդյունավետ լավ կառավարումը: Հասարակության կազմակերպման իսլամական մոդելը ավելի հայտնի է ումմա ձևակերպմամբ: Ումմայի մեջ ներգրավվելու և նրանից դուրս մղվելու գործիքները մշակվել են իսլամի տասնչորսդարյա պատմության ընթացքում, որոնք ընդհանուր առմամբ կարելի է ձևակերպել «Բարու (լավի) խրախուսում ու չարի (վատի) կանխարգելում» (الأمر بالمعروف والنهي عن المنكر) բանաձևով:

Այս պատկերից կարելի է տեսնել, որ այսօր ընթացող գործընթացը, ոչ այլ ինչ է, քան փորձ մի արժեհամակարգի հիման վրա ստեղծված հասարակության կառավարման գործիքները կիրառել մեկ այլ արժեհամակարգի վրա



հիմնված հասարակությունները կառավարելու համար՝ առանց «ադապտացնելու» այդ գործիքները և չհստակեցնելով կամ մոտեցնելով իմաստները օբյեկտ հանդիսացող արժեքային դաշտին:

Ինչպես նշվեց իսլամի և արևմուտքի միջև փոխհարաբերություններում, ուժերի ասիմետրիկությունը թելադրում է հարաբերությունների որակը: Այսօր միջազգային և վերազգային գործակալություններից (Միջազգային արտարժուրթային ֆոնդ, Համաշխարհային բանկ և այլն) և արևմտյան տերություններից սկսած, որոնք իսլամական արժեհամակարգի կրողի դիրքից ընկալվում են որպես քրիստոնեահրեական, գրեթե բոլորը պահանջում են, «իսլամը» (այսինքն՝ մուսուլմանական մեծամասնություն ունեցող և մուսուլմանական արժեհամակարգով առաջնորդվող պետությունները) ներգրավվի բարեփոխումների մեջ և, ինչու չէ, նաև լուսավորչական մի գործընթացի մեջ և ընդունի օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները և արդյունավետ կառավարումը՝ համեմված գենդերային հիմնահարցերով, որպես հասարակության կազմակերպման գործիքներ:

Այս արժեքների քարոզման համար Արևմուտքի կողմից օգտագործվում են ինչպես կառավարական (the Barcelona Process), այնպես էլ ոչ կառավարական խողովակներ (Amnesty International, Human Rights Watch, Transparency International).

Վերը նշվածը ցույց է տալիս, որ երկխոսությունը (կամ դրա իմիտացիան) այն տեսքով, որով առկա է այսօր, տանում է դեպի փակուղի, քանի դեռ գիտակցված չէ ընդհանուր բառարանի (նշանային համակարգի) ստեղծման անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում այս արժեհամակարգերի միջև տարբերությունները բերելու են նրանցից մեկի ազդեցության մեծացմանը և մյուսի ներքին դիմադրությանը:

Եվրոպայի համատեքստում իսլամի և քրիստոնեության միջև երկխոսության հաջողված փորձ կարելի է համարել այն գործունեությունը, որը ծավալել են մուսուլմանական որոշ ինտելեկտուալներ Եվրոպայում: Նրանց գործունեությունը մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել ոչ այդքան ճիշտ ձևակերպում ստացած «եվրոիսլամ» եզրով:

Իսլամի և Արևմուտքի միջև երկխոսության կայացման գործում իր նշանակալի ներդրումն ունի մուսուլման խոշոր ինտելեկտուալ Տարիկ Ռամադանը: Տարիկ Ռամադանը, լինելով «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության հիմնադիր Հասան ալ-Բաննայի թոռը, մեծացել է հիմնականում Եվրոպայում: Այժմ նա Շվեյցարիայի քաղաքացի է: Խոսելով Տարիկ Ռամադանի մասին՝ պետք է նշել, որ նա կայանալով արևմտյան արժեքային միջավայ-

րում, այդուամենայնիվ, չի կտրվել իսլամական արժեղաշուից և անհատի մակարդակում կարողացել է գտնել յուրօրինակ համատեղման բանալին:

Տարիկ Ռամադանի գաղափարների հոշակագիր կարելի է համարել նրա «Լինել եվրոպացի մուսուլման» գիրքը, որտեղ նա փորձում է ցույց տալ իսլամական «մասլահա» (հանրային շահ) կոնցեպտի կարևորությունը մուսուլմանի կյանքում ժամանակակից Եվրոպայում: Իր դատողությունները ամրապնդելու համար Տարիկ Ռամադանը հղում է կատարում միջնադարյան նշանավոր մուսուլման ալ-Ղազալիի խոսքերին, որը «մասլահան» համարում էր շարիաթի էության վերջնական նպատակ: Ռամադանի պնդմամբ հանրային շահի պրիզմայով է պետք նայել և խրախուսել այս կամ այն գործունեությունը, որը բխում է ողջ համայնքի շահերից, այլ ոչ թե պարզապես առաջնորդվել կրոնագետների «հալալ» և «հարամ» որակավորումներով, որոնք հիմնված են տասներորդ դարից եկող ֆաթվաների վրա:

Արդարության համար պետք է նշել, որ Ռամադանի հայացքները կիսում է հիմնականում Եվրոպայում ապրող և իրենց առաջադեմ համարող մուսուլման երիտասարդությունը: Ռամադանի հետևորդների շարքերի ընդլայմանը իր հերթին նպաստում է այն հանգամանքը, որ նա իր լսարանին դիմում է իրենց համար հասկանալի լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն և այլն):

Իսլամ-Արևմուտք դիսկուրսի հետաքրքիր տարրերից է նաև ինտերնետը, որը, լինելով ոչ մեկինը և ամենքինը միևնույն ժամանակ, չի կրում իր վրա ոչ մի նշան, այսինքն՝ պայմանական չեզոք տարածք է, ինչն էլ «ազատորեն» գործելու հնարավորություններ է տալիս:

Երկխոսության կայացմանը նպաստող ինտերնետ միջավայրերից կարելի է առանձնացնել *Q-News*, *Qantara.de* և *The Muslim News* հարթակները, որոնց գործունեությունը փորձ է լրացնել ընդհանուր բառարանի բացը: Կարելի է ասել, որ այս հարթակների համեմատական հաջողությունները պայմանավորված են նրանով, որ կառուցված են առավել մոտ բառարանների վրա:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ իսլամի և քրիստոնեության/Արևմուտքի միջև երկխոսության կայացման համար առաջին հերթին պետք է ստեղծել ընդհանուր բառարան: Այս գործընթացը պետք է ընթանա գիտնականների/մասնագետների անմիջական մասնակցությամբ: Ճանապարհը սկսելու համար պետք է հստակեցնել փոխշփման լեզուն և փորձել հասկանալ ժանամակի և տարածության կատեգորիաները իսլամում, ինչն իր հերթին կարող է դուրս բերել այն ադապտացիոն մեխանիզմները, որոնք

հնարավորություն պետք է ընձեռեն ընդհանուր բառարանի ձևավորման և, որպես արդյունք, երկխոսության կայացման համար:

Խնդրի մյուս կարևոր կողմն այն է, որ գոյություն չունի ունիվերսալ լուծում, քանի որ թե՛ իսլամը, և թե՛ Արևմուտքը (քրիստոնեությունը) միատարր չեն և առանձին տարրերի միջև երկխոսության կայացման համար անհրաժեշտ են առանձին լուծումներ, որոնք կարող են կտրականապես տարբերվել միմյանցից:

## «ԱՄՆ միջուկային զենքի քաղաքականություն» գեկույցի ամփոփում<sup>1</sup>

*Գևորգյան Ա.*

Եվրոպա կատարած իր առաջին այցելության ժամանակ նորընտիր նախագահ Բարաք Օբաման Պրահայում արտասանած իր ելույթում վերահաստատեց աշխարհը միջուկային զենքից ձերբազատելու գործում ԱՄՆ-ի պատասխանատվությունը և հավելեց. «Որպես միջուկային զենք օգտագործած միակ երկիր ԱՄՆ-ն բարոյական պատասխանատվություն ունի գործելու: Այս նախաձեռնության մեջ մենք չենք կարող հաջողության հասնել միայնակ, բայց մենք կարող ենք առաջնորդել այն, սկսել այն»:

Այս հայտարարությունից հետո Արտաքին հարաբերությունների խորհրդի ֆինանսավորմամբ Անկախ փորձագիտական հանձնաժողովը պաշտպանության նախկին նախարար Ուիլիամ Ջ. Փերիի և ազգային անվտանգության նախկին խորհրդական Բրենթ Սքոուքրոֆթի համանախագահությամբ «ԱՄՆ միջուկային զենքի քաղաքականություն» վերնագրով նոր գեկույց պատրաստեց այն մասին, թե ինչպես է հնարավոր նվազեցնել միջուկային զենքերի քանակն աշխարհում, և ինչ միջոցներով կարելի է պայքարել միջուկային հնարավոր հարձակման դեմ:

Հետազոտության հեղինակները մանրամասն վերլուծում են միջուկային զենքի հետ կապված աշխարհի ներկա իրադրությունը, և մի շարք առաջարկություններ են անում ԱՄՆ-ի կառավարությանը, որոնց ընդունումը կնպաստի նախագահի կողմից նշված նախաձեռնության ի կատար ածմանը:

Փորձագետները նշում են, որ Սառը պատերազմի ընթացքում յուրաքանչյուր օր աշխարհը կարող էր առերեսվել միջուկային զենքի վտանգին և քաղաքակրթության ավարտին: Ու թեև Սառը պատերազմն ավարտվել է, և աշխարհն այլևս դեմ առ դեմ չի զգում «միջուկային հոլոքոստի» վտանգը, սակայն, համազենկոցողների հավաստմամբ, աշխարհը դեռ դժվարին ժամանակներում է ապրում: Ամերիկացի զինվորները դեռ սպանվում են Իրաքում, Թալիբան շարժումը վերակենդանանում է Աֆղանստանում և Պակիստանում: Չնայած գրեթե համակողմանի ընդդիմությանը՝ Հյուսիսային Կորեան ստեղծել է փոքր միջուկային արսենալ, Իրանն էլ հետևում է նրա քայլերին: Մյուս պետությունները, մասնավորապես Մերձավոր Արևելքում, սկսում են միջուկային ծրագրեր Իրանի նախագծով: Այսպիսով, միջուկային զենքի տարածումը հասել է կրիտիկական չափերի:

<sup>1</sup> *U.S. Nuclear Weapons Policy*, Independent Task Force Report No. 62, Council on Foreign Relations, 2009

Ահաբեկչական կազմակերպություններն այսօր ի վիճակի չեն սեփական ուժերով միջուկային զենք ստեղծել: Բայց նրանք կարող են համոզել կամ պարտադրել որևէ միջուկային երկրի նրանց տրամադրել իրենց զենքերը: Մյուս կողմից, բացառված չէ նաև, որ ահաբեկիչները կարող են միջուկային զենք գողանալ կամ այդ զենքը ստանալու համար անհրաժեշտ նյութերը: Իսկ եթե միջուկային զենքն ընկնի ահաբեկիչների ձեռքը, այն կպայթի սարսափելի հետևանքներով: Եվ Երկիր մոլորակն ու նրա բնակիչները անդառնալի կորուստներ կունենան: Այսպիսով, չնայած գերտերությունների կողմից միջուկային զենք օգտագործելու վտանգը նվազել է Մառը պատերազմի ավարտից հետո, մեկ այլ նոր վտանգ է ուրվագծվում՝ ահաբեկիչների կողմից միջուկային զենք օգտագործելու հետ կապված:

Զեկույցի հեղինակների կարծիքով, ներկա պահին գոյություն չունեն աշխարհաքաղաքական այն պայմանները, որոնք թույլ կտային միջուկային զենքի գլոբալ նվազեցումը, սակայն Անկախ փորձագիտական հանձնաժողովը ընդգծել է մի շարք քայլեր, որոնք իրագործելի են մոտ ապագայում, և որոնք զգալիորեն կնվազեցնեն միջուկային զենքի տարածումն ու դրա օգտագործման վտանգը: Զեկույցը ցույց է տալիս, թե ինչ դիրքորոշում պիտի ընդունի Օբամայի կառավարությունը այդ մարտահրավերներին դիմակայելու համար: Այն ուշադրություն է հրավիրում տեսանելի ապագայում, հատկապես առաջիկա չորս տարում կատարվելիք քայլերի վրա:

Զեկույցի բնորոշմամբ անվտանգության երեք մարտահրավերներ Օբամայի կառավարությունից պահանջելու են հետևյալ առաջնային գործողությունները.

- միջուկային զենքի ներկա տարածման դադարեցումն ու կանխարգելումը,
- ահաբեկիչների կողմից միջուկային հարձակում իրականացնելու հնարավորության նվազեցումը,
- Ռուսաստանի և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների վատթարացման, թշնամացման կանխարգելումը:

Զեկույցը մի շարք առաջարկներ է անում Օբամայի կառավարությանը, որոնցից են.

- Մերտացնել համագործակցությունը Ռուսաստանի հետ: ԱՄՆ և Ռուսաստանի նախագահները վերջերս պայմանավորվել են նվազեցնել իրենց երկրների միջուկային արսենալները: Զեկույցը պաշտպանում է ԱՄՆ և Ռուսաստանի ջանքերը պահպանել START և SORT պայմանագրերով նախատեսված պարտավորությունները: Զեկույցը նաև խոր-

հուրդ է տալիս երկու երկրներին լուրջ ռազմավարական երկխոսություն սկսել:

– Համագործակցել Չինաստանի հետ: ԱՄՆ–ն և Չինաստանը դեռևս պատրաստ չեն միջուկային զենքի վերաբերյալ պայմանագիր կնքելու՝ կապված նրանց միջուկային արսենալների անհամաչափության հետ: Այնուամենայնիվ, զեկույցը խորհուրդ է տալիս երկու երկրներին լուրջ քննարկումներ ծավալել տիեզերական զենքերի վերաբերյալ: ԱՄՆ–ն, Ռուսաստանն ու Չինաստանը ցույցադրել են իրենց հակաարբանյակային զենքերը և մեծ հետաքրքրություն ունեն իրենց քաղաքացիական և ռազմական արբանյակների պաշտպանության հետ կապված: Չեկույցն առաջարկում է արգելել հակաարբանյակային զենքերի փորձարկումը, որին պիտի միանա Ռուսաստանն ու այնուհետ նաև ողջ աշխարհը:

– Վերահաստատել, որ ԱՄՆ–ի նպատակն է կանխարգելել միջուկային զենքի երբևէ օգտագործումը պետական կամ ոչ–պետական մարմնի կողմից, և որ ԱՄՆ–ի միջուկային զենքի նպատակը ԱՄՆ–ին և նրա դաշնակիցներին միջուկային հարձակումից պաշտպանելն է:

– Վերահաստատել դաշնակից երկրների անվտանգության ապահովության պատրաստակամությունը: Մրա բացակայության դեպքում ԱՄՆ–ի դաշնակիցները կփորձեն իրենք միջուկային զենք ստեղծել սեփական անվտանգությունն ապահովելու համար: Չեկույցն ընդգծում է, որ քանի դեռ ԱՄՆ–ն և նրա դաշնակիցները միջուկային հարձակման ենթարկվելու վտանգի տակ են, ԱՄՆ–ն պիտի բավականաչափ միջուկային զենք ունենա այդ վտանգներին դիմակայելու համար:

– Շարունակել միջուկային զենքի քանակի նվազեցումը և պայմաններ ստեղծել, որպեսզի մյուս միջուկային երկրները նույնպես հետևեն այդ օրինակին՝ մասնավորապես սկսելով Ռուսաստանի հետ կնքված Ռազմավարական զենքերի վերահսկողության երկկողմանի պայմանագրից:

– Չանքեր գործադրել հաստատելու համար Փորձարկումները արգելող համակողմանի պայմանագրի (Comprehensive Test Ban Treaty) իրագործումը, քայլեր ձեռնարկելով, որ սա տեղի ունենա մինչև «Միջուկային զենքի չտարածման պայմանագրի վերանայման» (Nonproliferation Treaty Review) համաժողովը, որը տեղի է ունենալու 2010 թվականի մայիսին:

– Ուժեղացնել Միջազգային Ատոմային Էներգիայի Գործակալության կենսական նշանակությունը

– Համագործակցելով այլ երկրների հետ՝ երաշխավորել, որ յուրաքանչյուր երկիր, որ ունի միջուկային զենք կամ զենք ստանալու նյութեր, անգամ եթե Չտարածման միջազգային պայմանագրի անդամ չէ, ինչպես օրինակ Հնդկաստանն ու Պակիստանը, հետևի միջուկային անվտանգության կանոններին:

Այս զեկույցի հիմնական թեմաներից մեկն էլ այն է, որ իրավունքների հետ գալիս են նաև պատասխանատվություններ: Մասնավորապես, բոլոր ոչ-միջուկային պետությունները իրավունք ունեն ունենալու խաղաղ միջուկային ծրագիր, բայց նրանք պիտի պահպանեն սահմանված օրենքներն ու միջազգային հանրությանն ու այլ պետություններին կարողանալ հավաստիացնել, որ այդ ծրագիրը հետապնդելու է խաղաղ նպատակներ:

Զեկույցը խորհուրդ է տալիս բոլոր միջուկային և ոչ-միջուկային պետություններին, որոնք միջուկային զենքի չտարածման պայմանագրի անդամ են, կատարել իրենց պարտականությունները և նվազեցնել միջուկային զենքի օգտագործման հավանականությունը:

Զեկույցն անդրադառնում է նաև այն խնդրին, թե կարելի՞ է արդյոք քիմիական ու կենսաբանական զենքերի հարձակման դեպքում պաշտպանվել միջուկային զենք օգտագործելով: Բոլոր փորձագետները համակարծիք են, որ միջուկային զենքը զանգվածային ոչնչացման զենք է, բայց նրանք համակարծիք չեն քիմիական և կենսաբանական զենքերը նույն շարքին դասելու հարցում:

Միանգամից շատ մարդկանց սպանելու համար հարկավոր է մեծ քանակությամբ քիմիական զենք, այնինչ նույն բանն անելու համար մի միջուկային ռումբն էլ բավարար է: Մյուս կողմից կենսաբանական զենքը լիովին կարող է մրցակից լինել միջուկային զենքին: Այսպիսով, քիմիական ու կենսաբանական զենքերի հարձակմանը միջուկային զենքով պատասխանելը Անկախ փորձագիտական խորհուրդը արդարացված գործողություն է համարում:

ԱՄՆ-ն ունի աշխարհում ամենահզոր բանակը և այլ երկրների ռազմական հարձակման դեպքում կարիք չունի օգտագործելու միջուկային զենք: Բայց այդ նույն երկրները իրենց ռազմական թուլության պատճառով հնարավոր է, որ միջուկային զենք ստեղծեն ԱՄՆ-ի վրա հարձակվելու համար: Ահա թե ինչու ԱՄՆ-ն կենսական անհրաժեշտություն ունի միջուկային զենք ունենալու:

Զեկույցի հեղինակները համոզված են, որ քանի դեռ ԱՄՆ-ն ուզում է պահպանել իր համաշխարհային գերիշխանությունը, նա պիտի բավականաչափ միջուկային զենք ունենա միջուկային սպառնալիքներին դիմակայելու համար:

**ՔՄՀԿ կազմ**

Դավիթ Հովհաննիսյան  
Սաթենիկ Մկրտչյան  
Աննա Գևորգյան  
Տիգրան Մաթոսյան  
Սևակ Քարամյան  
Հայկ Քոչարյան  
Վահագն Ազյան

6 ապրիլ 2010

---

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն  
Երևանի պետական համալսարան  
Ալեք Մանուկյան 1, Երևան 0025, ՀՀ  
Հեռ.՝ (37410) 551674  
Էլ.փոստ՝ [cccs@ysu.am](mailto:cccs@ysu.am)